894.6
Ա-17

ար ◆◆◆ գիր

Իրակլի Սամսոնաձե
ականջաբարձ

Անտարես

ՀՏԴ 894.631-31 Սամսոնաձե
ԳՄԴ 84Վր-44
Ս 177

The book is published with the support of the Ministry of Culture and Monument Protection of Georgia.

Translator ANAHIT BOSTANJYAN
Վրացերենից թարգմանեց
ԱՆԱՀԻՏ ԲՈՍՏԱՆՋՅԱՆԸ

Խմբագիր՝
ԱՐԹՄԵՆԻԿ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

Սամսոնաձե Ի.
Ս 177 Ականջաբարձ: Վեպ/ Իրակլի Սամսոնաձե.– Եր.: Անտարես, 2014.– 184 էջ:

Վրացական արդի գրականության լավագույն ներկայացուցիչներից մեկի՝ Իրակլի Սամսոնաձեի այս վեպը հետսովետական այսպես կոչված՝ անցումային տարիների դժվարին ժամանակաշրջանն է վկայագրում: Բարոյահոգեբանական և արժեհամակարգային աղճատված իրականության մեջ Սամսոնաձեն Մարդ, Քաղաքացի, Մտավորական մնալու դժվարին, բարձր առաքելության խնդիրն է դնում:

ISBN 978-9939-51-664-6

111768

©Irakli Samsonadze
©2012, Intelekti Publishing, Tbilisi, Georgia
© «Անտարես», 2014

Ոսկորների մեջ՝ սարսուռ: Նախքան հիվանդանալը: Եթե միզելու ժամանակ քեզ ցնցում է հիվանդությանը նախորդողդողը, թվում է՝ ներսիցդ դուրս ես շպրտում գրիպի բացիլը: Անկախ քեզնից լավատես ես դառնում: Բայց դա երկար չի տևում: Ընդամենը՝ մի ակնթարթ: Ջուրը տանում է: Տարավ: Չէ՛: Քարշ է տալիս: Փական: Ջուգարանից՝ դեպի նեղ միջանցք: Դեպի լոգարան: Լոգարանի դուռը: Լոգարանում: Հայելի: Հայելու մեջ՝ ես: Մորուքիս մեջ, քունն մազերիս, սպիտակը՝ ավելի շատ: Քթոսկրս՝ ներս ընկած: Ուռած կոպերիս մոտ՝ դեղնություն: Ձախից՝ կապտուկ: Դեմքս՝ հայելուն մերձ: Մոտիկ: Ավելի մոտիկ: Երկու օրում դեղնությունը կանցնի: Կապտուկն էլ կանհետանա: Հայելին գոլորշապատվում է:

Պնչերիցս: Ինձնից ջերմություն է դուրս գալիս: Ես ցուրտ եմ ներծծում: Սառը մատներով՝ ծորակի բռնակից: Ցուրտ է: Եղյամակերպ սառը ջուրը՝ բռանս մեջ: Դեմքիս: Էլի՛: Էլի՛: Խավոտ երեսսրբիչ: Չոր: Առողջ: Սանր: Մազարմատներիս մեջ՝ ցավ: Հիվանդանում եմ: Կհիվանդանամ: Գրիպ: Ձեռքս՝ ծորակի բռնակին: Ջրի ձայնը կտրվեց: Լոգարանից՝ դեպի նեղ միջանցք: Սիգարետ: Ուզում եմ: Սիգարետ: Ունեմ: Խոհանոցի դուռը: Խոհանոցում: Սեղանի վրա՝ սիգարետի բացած տուփ: Սուրճ: Լույս չկա: Ոչ էլ՝ գազ: Սիգարետ: Ուզում եմ: Սակայն նախ՝ մի կտոր բան: Գոնե բերանս մի պատառ դնեմ: Պետք է: Ինչո՞ւ: Չգիտեմ: Ծամում եմ: Թրջվում-փափկում է: Կոկորդիս միջով անցավ: Պատառը, թվում է, շանթում է մազարմատներս: Հիմա կարելի է: Կրակվառիչը՝ երկրորդ անգամ կպցնելիս: Կրակվառիչ պիտի գնեմ: Ծուխս եմ արձակում: Մի շնչով: Անհամ է: Թմրեցնում է: Մարմինս՝ աթոռին: Առավոտյան սիգարետ՝ 6-7 անգամ նաֆաս քաշելով: Վախոն: Երևի կզանգի: Հոլանդիայից: Կամ Բելգիայից: Կամ Գերմանիայից: Պատուհան: Պատուհանից այն կողմ՝ հալչող ձյունից

թաց սալահատակ: Կամուրջ: Ծառեր: Ամպամած երկինք: Ե՞րբ եմ վերջին անգամ եղել փողոցում: Մի շաբաթ առաջ: Չէ՛: Չորս օր առաջ: Թե՞ հինգ: Հա՛: Հնդկացորեն տարա շուկա: Նաև՝ մակարոն: Ցույց: Փակ փողոց: Մեջքիս դրած, շալակած տարա պարկը: Վշագործ մեշոկ էր: Փողոցում: Մեշոկի բերանը երկու ձեռքով բռնած: Ծանրությունից՝ մի փոքր առաջ հակված: Սալահատակի վրա՝ մարդ: Ողջ: Մեռած: Ողջ: Չգիտեմ: Առաջ անցա: Հեռացա: Իր պրոբլեմն է: Ինչո՞ւ հեռացա: Մեշոկը շուկա պիտի տանեի: Լեյլան: Մական: Դարեջանը: Հացի փող: Անցա: Հեռացա: Մնաց: Ողջ: Մեռած: Չգիտեմ: Գուցե այսօր էլ ստիպված լինեմ քարշ տալ: Նախկինների հասարակության մեջ ցույցեր հաճախ են լինում: Պոռնիկի բարդույթ: Անզուսպ ցանկություն՝ բացատրել, թե ինչն է մղել պոռնկության: Խռպոտ խոսափողներից գոռում են՝ դու է՛ս էիր: Դու է՛ս ունեիր: Խռպոտ խոսափողներից քեզ դասեր են տալիս՝ դու էսպիսի՛ն պիտի լինես: Դու էնպիսի՛ն պիտի լինես: Ինչպիսի՛ն պիտի լինել: Նրանց էլեկտորատի՝ ընտրազանգվածի մի մասը: Այս է ու այս: Սկզբից հիշեցնում են: Հետո՝ պահանջում:

Զանգվածների վրա ներգործության ամենալավ միջոցը մասսայի կոլեկտիվ մտածողությունն է: Ունեի: Կայի: Կայի: Ունեի: Այս հասարակությունը նախկիններին հասարակություն է: Ես այս հասարակության արժանավոր անդամն եմ: Առաջ գրում էի: Հետո դարձա մանր մաքսանենգ: Նախկին գրող՝ նախկիններին հասարակության մեջ: Ես էլ՝ նրանց նման: Տաքսու վարորդը նախկին շինարար է: Շինարարական ֆիրմայի տերը՝ նախկին բժիշկ: Կարգին տղեն «կալկուլյատոր» է ձեռք բերել: Մարզիկը քաղաքագետ դառնալ է երազում: Գեղջուկը վաճառական է դարձել: Կայսրությունը փլուզվել է: Մարդիկ հիշում են: Բերանն արնոտ այս կայսրության մեջ ես է՛ս էի, ես է՞ն էի: Այն սուտ ու խաբեության մեջ ես է՛ս ունեի, ես է՞ն ունեի: Մարդկանց չեն էլ մեղադրում: Հիմա անցել են այլ ձևի ստի ու խաբեության: Ու հա՛ մի գլուխ հիշում են: Վախոն: Վախոն կարծում էր, թե այս երկիրն ու քաղաքը իրենն է: Վախոն երևի զանգի ինձ: Ես ու Վախոն: Ես ու Վախոն՝ մանկության ընկերներ: Կանք: Կտրվեց: Մտածելու կարիք չկա՝ կանք: Մտքից ինքնըստինքյան հասկանալի է, որ ես ու Վախոն

մանկության ընկերներ ենք: Մի մտքին հաջորդում է մյուսը: Միտքը սեղմում է բառերը: Չէ՛, կլանում է: Անսպասելի լեզու առած համրի նման: Գրել: Գրող: Գրողը պիտի գրի: Կլմբոգ, մեծահարուստ մաքսանենգի հուսալի վահանի ու խոշոր փողերի հետ միասին նա պիտի ունենա նաև գջլող-փախցնողի ջիղ: Որպես մանր մաքսանենգ՝ կարողանա երկուլարիանոցներ բաժանել պարապ-սարապ կանգնած բլոկպոստերում: Պարտությամբ ավարտված պատերազմից հետո Վախոն վաճառեց իր ավտոմատը և տոնավաճառում՝ «բազրոբայում» վաճառասեղան վարձեց: Վախոյի համար Աբխազիայի պատերազմն առաջին պատերազմը չէր: Մինչ այդ Ցխինվալին էր: Հետո՝ Թբիլիսիի պատերազմը: Եվ ապա միայն՝ Աբխազիան: Վախոն երրորդից հետո վաճառեց ավտոմատը: Վե՛րջ՝ ասաց Վախոն, ես իմ կռվելիքն արդեն կռվեցի: Ինչպես երևում է՝ վատ ռազմիկ եմ, հիմա տեսնենք ինչպիսի վաճառական կլինեմ: Ինձ էլ առաջարկեց: Մերժեցի: Ինչո՞ւ՝ չգիտեմ: Հեռուստացույցից պոկ չէի գալիս: Դրանից հետո Վախոն ձեռք քաշեց վաճառասեղանից և անցավ Թուրքիայից

զովացուցիչ ըմպելիքներ ու գարեջուր ներկրելու գործին: Ինձ էլ առաջարկեց: Այդ ժամանակ էլ մերժեցի: Քեզ էդ հեռուստացույցը խելքից կհանի՝ ասաց Վախոն: Ես էլ հենց էդ եմ ուզում՝ պատասխանեցի: Ժամանակ առ ժամանակ նա օգնում էր ինձ: Վախոն փողն այնպես էր տալիս, որ հանկարծ Քեթինոն չնկատի: Այնպես էր հարմարեցնում, որ մենակ լինեմ: Փողը դնում էր գրպանս: Ու... Շունչ էր քաշում: Խո՛րը, խո՛րը: Աչս սիրտը միջից դուրս գար: Վախոն օդի խիստ կարիք ունի: Դա նրան նեղում է: Երբ զգացմունքը հաղթում է Վախոյին, նրա սիրտն ավելի շատ է օդի կարիք զգում: Սիրտ: Երիկամ: Երիկամ տալը հեշտ է: Բայց դժվար գործ է: Չոլախ Նանան: Ես ու Վախոն առաջարկում ենք մեր երիկամները: Հա՛: Չոլախ Նանայի մոտ գնացի՝ միսս վաճառելու: Մաքսիմեի ընկերոջ սրճարան՝ հոգիս վաճառելու: Այս ու այն պատմությունների արանքում՝ տասը տարի: Թե՞ տասներկու: Տասը կամ տասներկու: Մոտավորապես: Վախոն շուտ է ձանձրանում ձեռնարկած ցանկացած գործից: Ձանձրացավ նաև զովացուցիչ ըմպելիքներ ու գարեջուր ներկրելուց: Առաջարկեց վարձակալել

ավտոնորոգման արհեստանոց: Համաձայնվեցի: Վաճառեցինք Քեթինոյի մեծ դաշնամուրը: Քեթինոյի սիրտը շատ կոտրվեց, բայց հաշտվեց՝ ձար չուներ: Քեթինոն շատ էր ուզում, որ տեղիցս շարժվեմ: Շարժվեցի: Ավտոնորոգման արհեստանոց՝ ձմեռվա մառախլապատ առավոտի մեջ: Որպես աթոռներ՝ ոչ պիտանի անվադողերը: Ցածր սեղան: Սեղանի վրա՝ մեքենայի ձեթից յուղոտված խաղաթղթեր: Դոմինո ևս: Սպիտակ: Արանքները՝ աղտից ու մազութից սևացած: Թակոց: Բախում: Ճռռոց: Ես՝ անվադողին՝ ոտքերս ծալապատիկ: Դրսում՝ ձմեռվա խավարամած օր: Կուզես հեռուստացույցին նայիր՝ կուզես ձմեռվա խավարամած օրվան: Միառժամանակ՝ այսպես: Վախոն ասաց, որ մինչև Քեթինոյի համար դաշնամուր չգնենք, մեր փայաբաժնից ոչ մի կոպեկ չենք ստանա: Գնեցինք: Ոչինչ: Քեթինոն ուրախացավ՝ աշակերտներ կվերցնեմ: Հիմա, երբ մարդուս տնահան արեցի,- ասաց Քեթինոն, անպայման աշակերտներ կվերցնեմ:- Վերցրեց: Սրանով էլ դուռը դեմս փակեց: Ջղերիս է ազդում ստեղնաշարին այս միալար թակոցը: Ես՝ խոհանոցում, աթոռի վրա:

Սենյակից լսվում է Քեթինոյի ուսուցչական ձայնը՝ դե՛, սկսեցինք՝ ռի՛-գո՛-դոնի՛, ֆա-սոլ-ֆա՛: Սոլ-ֆա՛: Մի՛: Դո՛: Դո՛: Սողոցում է: Ջղերս: Ավտոնորոգման արհեստանոցի ձայնն ավելի լավն էր: Նախ՝ մի ավտոնորոգման արհեստանոց բացեցի: Մեր կողմերում: Հետո՝ մյուսը: Երրորդն էլ: Վախոն ասաց, որ շուտով թողնելու ենք ավտոնորոգման արհեստանոցն ու անցնենք մաքսանենգության: Ես ու Վախոն դարձանք մանր մաքսանենգներ: Վախոն հավատում էր, որ մի օր անպայման մեծ փող կկտրի: Փող կտրել: Փողը կտրեցի: Փողը կտրվեց: Որտեղի՞ց եկավ այս բառը: Հաստատվեց: Հա՛: Հաստատվեց: Ժամանակի շունչը: Ժամանակի բնավորությունը: Բառերից զգացվող ժամանակի դրսևորումը: Ես ու Վախոն՝ մեքենայի մեջ: Վախոն՝ ղեկի մոտ: Ես՝ կողքին: Ձեր մե՛րը կլացացնենք, հլը սպասե՛ք՝ ասում է Վախոն: Մեկ է՝ մեծ փող կկտրենք: Հետո խորը շնչում է: Խոր: Խոր: Թեթևանում է հոգով: Այնպես է կռանում ղեկի վրա, որ թվում է՝ ոտով-գլխով պիտի մեջը մտնի: Ոտքն ամուր պահում է գազի վրա: Հոնագույն ժիգուլին՝ Վախոյի էմոցիային հընթաց: Դխկդխկում է:

Սկսում է «ոռնալ»: Վախոն գժվել է: Երբ Վախոն համառում է, նա չի էլ տեսնում է, թե իր դիմաց ինչ է կատարվում: Վթար: Մի քանի անգամ փրկվել ենք: Վախոն շատ վտանգներից է փրկվել: Վիրավորել էին: Այն ժամանակ էլ փրկվեց: Ես ու Վախոն՝ Սուխումիում: Վախոն հագել է գվարդիականի համազգեստ: Ձեռքին՝ ավտոմատ: Ոտքերին՝ կեդիներ: Տեսավ ինձ: Ավտոմատը լիցքավորեց: Ժպտում է ինձ: Հետո օդում կրակեց: Դրանց մե՛րը կլացացնենք: Հաղթելո՛ւ ենք: Պարտվեցի՞նք: Երկար ժամանակ նստած էի հեռուստացույցի առաջ: Ինչո՞վ էի գոյատևում: Պապիս բնակարանը: Փոքր, երկաթե պատշգամբի մոտ՝ բարձրուղեշ չինարի ծառ: Ձմռանն այս ծառը չեմ տեսնում: Վաղ գարնանն եմ տեսնում: Տարվա բոլոր եղանակներին էլ տեսնում եմ: Ձմեռվանից բացի: Մի բնակարան վաճառեցինք: Երկուսը ձեռք բերեցինք: Իրար մոտիկ: Մորս՝ միսենյականոց: Ինձ, Քեթինոյին ու մեր տղային՝ երկու սենյականոց: Մի քիչ էլ գումար մնաց: Ես ուզում էի, որ բոլորս միասին ապրենք: Բայց մայրս քարը փեշից չգցեց՝ համառեց: Հանգիստ թողեք ինձ՝ ասաց մայրս, շատ եմ

խնդրում, թողեք օր ծերության հանգստանամ: Մայրս, իհարկե, այդպես չի մտածում: Բայց մորս չես կոտրի: Համառ է մայրս: Ես՝ հոգնած: Քեթինոն էլ այս ընթացքում մի տեսակ փոխվել է: Ասես իր որջից ամեն ինչի նայելիս լինի: Հետաքրքրասերի նման: Ես չեմ սիրում այսպիսի Քեթինո: Թեև այսպիսի Քեթինո երևի Քեթինոն էլ չի սիրում: Երևում է՝ նա մայր մեղվություն էր ուզում: Ցանկացած կնոջ ուզած էլ վերջին հաշվով սա է: Մեկին հաջողվում է, մյուսին՝ ոչ: Սակայն բոլորի ուզածն էլ սա է: Մայրս հասկացավ Քեթինոյի միտքը: Մայրս ամեն ինչ բարդեց մեզ վրա: Իբրև թե մենք ենք իրեն հոգնեցրել ու հիմա մեզնից հանգստանալ է ուզում: Ես ամեն ինչ պարզ տեսնում եմ: Սակայն իմ առավոտը հոգնած է սկսվում: Երևի դրա համար էլ դարձա մանր մաքսանենգ: Վախոն՝ ղեկի մոտ, ես՝ կողքին: Երթուղային տաքսու գիծ ձեռք բերել: Վախոյի երազանքն է: Հապա՛, հապա՞ համաձայնվում եմ ես: Ձեռք կբերենք: Նման դեպքերում ես պիտի գլուխս թափահարեմ՝ ի նշան համաձայնության և դրանով Վախոյի թիկունքին կանգնեմ: Վախոյին աջակցել է պետք:

Հա դե՛, ես էլ աջակցում եմ: Երկուլարիանոցներ խնայեցինք դեռևս Թբիլիսիում: Ձեռքի պայուսակները և վշագործ մեծ մեշոկերը դրեցինք բեռնախցի մեջ: Շարժվեցինք դեպի Էրգնեթի: Էրգնեթիի տոնավաճառում կգնենք ռուսական արտադրության հնդկացորեն: Բլոկներով սիգարետ: Մակարոն: Շաքար: Շոգեխաշած միս՝ «տուշոնկա»: Պայուսակներն ու մեշոկերը կլցնենք ապրանքով: Կտեղավորենք բեռնախցում: Կվերադառնանք Թբիլիսի: Պարապ-սարապ կանգնած բլոկպոստերի մոտ կբաժանենք երկուլարիանոցները: Ապրանքը կբաժանենք Կոլտնտեսային շուկայի մոտերքում տեղակայված կրպակների միջև ու շահույթը համապատասխանաբար կկիսենք: Երեք միանման կրպակ: Միևնույն ապրանքը՝ տարբեր թարեքների վրա: Լեյլան: Մական: Դարեջանը: Դարեջանի չաղ թշերի վրա՝ տեղ-տեղ մազմզուկներ: Մական հիվանդագին նիհար է: Նա շատ անկախ է: Եվ շատ է տառապում սեփական անկախությունից: Լեյլան մաքուր, կոկիկ ու չափազանց հաստ կին է: Իսկական կաթի մեջ թաթախած բլիթ: Փնթփնթան: Շատախոս: Առույգ: Իբրև թե

բարեհոգի: Սակայն բացահայտ ինչ-որ բան ակնկալող, քանզի չափազանց գործնական է: Լեյլան շատ է կոտրատվում Վախոյի մոտ: Վախոն գիտի, որ Լեյլան անբանի մեկն է, դատարկապորտ և իրենից օգուտ է ակնկալում: Դրա համար էլ քաշվում է: Թեև ո՞վ իմանա, գուցե ինձ է այդպես թվում: Չէ՛: Չի թվում: Եթե ինչ-որ բան լիներ, Վախոն զգացնել կտար: Թբիլիսիից Էրգնեթի կամ Էրգնեթիից Թբիլիսի ճանապարհին: Վախոն շուռ կգար իմ կողմ: Լեյլայի մասին խոսք կգցեր: Իմ հարցին կսպասեր՝ բան-ման հո չկա՞, ա՛յ տղա: Ոչինչ չէր պատասխանի, բայց ոտքը կպահեր գազին: Դրանով էլ ամեն ինչ կասեր: Անծանոթ կին: Նորության սպասման մեջ բաբախող սիրտ: Կարոտեցի: Հեռվում մնաց: Քեթինոն: Իմը: Ծանոթ մարմին: Ես և Քեթինոն՝ ձմեռվա գիշերում: Քեթինոն մեր տղային քնեցրեց: Քեթինոն կոկա-կոլայի դատարկ շշի մեջ տաք ջուր է լցնում: Պլաստմասե շիշը կծկվում է: Մեջքն ասես կոտրտվում է: Չարչարանքի ձայներ է հանում: Քեթինոն խփով փակում է շիշը: Շուռ է տալիս: Ստուգում է: Հետո մոտեցնում է դոշին ու հետևում ինձ: Քեթինոյի ծանոթ

մարմինը, որ ձմեռները մոռանում եմ: Ջանում եմ հիշել: Ծանրաթանձր շապիկը պոկեմ վրայից ու հիշեմ: Քեթինոյի շշուկը՝ սպասի՛ր, ցո՛ւրտ է: Անհարմար վերմակի մեջ մինչև դունչը խրված Քեթինոն: Ձեռքերս սահում են վերմակի տակ ու փորձում հիշել Քեթինոյի մարմինը: Վերմակը ներսից կոկա-կոլայի տաք շշով է շաղոտվել և ավելի անհարմար դարձել: Քեթինոն իր մարմինն ինձ է ընձեռում մինչև պորտը: Իմ ազդրը՝ Քեթինոյի մերկ ազդրերի վրա: Տաքություն՝ ցրտի մեջ: Տաքություն՝ մինչև պորտ Քեթինոյի ընձեռած մերկությունից: Միաձուլումի սպասումից: Հեռավոր «դվիժոկների» դղրդացող մերձությունից: Ջերմություն՝ ցանկությունից: Վերմակն՝ իմ մեջքին: Քեթինոյի ջերմությունը: Քեթինոյի մշուշվող աչքերը: Այնուամենայնիվ, ձեռքը վերմակին՝ կողքից հանկարծ չփչի՛: Հիմա՝ հա՛: Հա՛: Հա՛: Հա՛: Միառժամանակ՝ այսպես: Սեփական մարմնի զգացողությունը հասունանում է: Հա՛: Հա՛: Մի քիչ էլ, ու մոտ է ավարտը՝ հևքը հանգստացնող: Հա՛: Հասուն է: Քաղվեց: Պրծավ: Ձմեռվա գիշերի մեջ ընկղմված մեր սենյակը: Ես ու Քեթինոն միասին միմյանց վերադարձրինք

սեփական մարմինների զգացողությունը: Քեթի-նոն՝ իր շապիկի մեջ: Քեթինոն՝ հանց ուրվական, դեպի լոգարան: Ես՝ գիշերվա դղրդացող լռության մեջ: Սպասում՝ դղրդացող լռության մեջ: Ոչնչի սպասում: Քեթինոն արագ-արագ՝ դեպի անկողին: Քեթինոն՝ մինչև դունչ վերմակի մեջ խրված: Ո՛ւռ՛ռ: Ի՞նչ ցո՛ւրտ է: Առանձին է: Պարտքը հատուցածի պես՝ անկախ: Նա էլ: Ես էլ: Ձմեռվա ցուրտ գիշերներին, այսուայնտեղ դղրդացող «դվիժոկների» աղմուկի մեջ, ես ու Քեթինոն հատուցում ենք մարդուկնիկության մեր պարտքը: Չէ՛: Ձմռան ցուրտ գիշերներին ինձ ու Քեթինոյին անհանգստացնում է սիրո պարտքը: Եթե այդ գիշեր չենք սիրում իրար, ապա անսեր անցած գիշերն է մեզ նեղում: Եթե սիրում ենք, ապա նեղում է այն, որ պարտքից ելնելով ենք իրար սիրում: Գուցե այս պատճառով էլ հորինել ենք այս խաղը: Ո՛չ: Կանչել ենք: Չէ՛: Օգնության ենք կանչել: Երևելի անհատականություններ՝ մ-ով սկսվող: Մոպասան՝ ասում եմ ես: Մոցարտ՝ ասում է Քեթինոն: Միքելանջելո: Մերիմե: Մարկես: Մոդիլիանի: Միկոյան: Միկոյանն ի՞նչ կապ ունի: Ո՞վ է ընդհանրապես

Միկոյանը: Միկոյանին չգիտե՞ս: Էդ հե՛չ: Ոչ թե հեչ, այլ՝ մե՛ջ: Միկոյանը: Ծիծաղում ենք: Համաձայնվում: Կամ՝ նա է ինձ զիջում: Կամ ես եմ նրան զիջում: Մոլիեր: Մարադոնա: Միլեր: Մոնրո: Մաստրոյանի: Մագինա: Մատիս: Մանե: Մոնե: Երբ մեզանից մեկը հիշում է Մանեին, մյուսն անպայման ասում է՝ Մոնե: Որովհետև հնարավոր չէ, որ Մանեն չհիշեցնի Մոնեին: Քեթինոյի ձայնն ինձ հանգստացնում է: Հանգստացնում է նաև այն, որ ինչ-որ տեղ, ինչ-որ մեկն իր հետքն է թողել և հիմա իրեն հիշեցնում է կեցության անհարմար վերմակի մեջ փաթաթված մարդ ու կնկան: Կոպերս ծանրանում են: Սկսում եմ քնել: Արդեն քանի անգամ տեսնում եմ նույն երազը: Վիթխարի կենդանու ողնաշարին թառել է մի փոքրիկ, կարմրադոշիկ ծիտիկ: Ոչ էլ հասկանում եմ՝ ինչ կենդանի է: Երևի՝ ռնգեղջյուր: Կամ՝ դինոզավրի մի տեսակ: Բաց-կանաչավուն մաշկ ունի, որը տեղ-տեղ պլոկված է, և այնտեղից սպիտակ, փափուկ միս է երևում: Ոչ ամեն տեղից: Փորից է կախված միսը: Ոտքերի մոտ էլ: Գլխին, դեմքին էլ: Կոնքերին էլ, ողնաշարին էլ: Ոչինչ չի մնացել: Մարմնի հետ համեմատած

4 1768

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱՐԱՆ ԱԼԲԱՍՏԱՆԻ
Կրթական Համալիր
ԵՐԵՎԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ծիտիկը շատ երկար, սուր, կեռվող կտուց ունի: Նստել է անմիս, վիթխարի կենդանու ողնաշարին, տեղից չի շարժվում, սակայն ժամանակ առ ժամանակ գլուխն է թափահարում: Զարմանալի է, վիթխարի կենդանու լեշի վրա նստած փոքրիկ, շատ աշխույժ, կարմրադոշ ծիտիկ: Զարմանալի և ձանձրալի, քանզի անվերծանելի է: Անհասկանալի: Մի տեսակ համառությամբ լուսավորվող՝ ասես անդունդի խորքից: Երևի նաև տեսիլք է, որ ճակատագրի դաժան բերումով հետևում ու հիշեցնում է ինձ: Աղբակույտում էլ եմ տեսել այս տեսիլքը: Տեսի՞լք, թե՞ երազ: Մորս մոտ էլ եմ ունեցել: Հա՛: Ունեցել եմ: Մայրս: Մայրս երեկ մեզ մոտ էր: Տղայիս համար ականջաբարձ էր կարել: Առանձնացան: Տղաս կանչեց ինձ.– Տե՛ս, տատին ինչ է կարել ինձ համար: Մորս՝ աղերից կոկված ձեռքերով կարած ականջաբարձը: Տղայիս ջերմող աչքերում ուրախության կայծ է պեծկլտում: Հիվանդ է: Կամ նրանից է ինձ անցել գրիպը: Կամ ես եմ նրան վարակել: Քեթինոն ու տղաս հիմա կողք կողքի են քնած: Պահարան: Պահարանում՝ թաշկինակ: Պիտի վերցնեմ: Զգույշ կմտնեմ: Թաշկինակ պիտի

վերցնեմ: Մատներիս արանքում՝ սիգարետ: Արդեն՝ երկրորդը: Ե՞րբ եմ վերցրել երկրորդը: Չեմ հիշում: Սիգարետը սովորություն է: Սովորությունն ամենաանտեսանելին է: Մոխրամանում՝ ֆիլտր: Կայծը ֆիլտրից կրակ առավ ու հանգավ: Մկանները՝ շարժման մեջ: Մկաններում՝ ցավագին տկարություն: Մրսում եմ: Կհիվանդանամ: Գրիպ: Խոհանոցի դուռ: Նեղ միջանցք: Հինգ քայլ: Վեցերորդը՝ ոչ լրիվ: Սառը մատներով՝ երկաթի սառնությանը: Դուռը՝ ճռռալով: Սո՛ւս: Կամա՛ց: Իջեցրած վարագույրներով սենյակի մուժ: Աչքերս եմ ընտելացնում: Ընտելացում: Քեթինոն ու տղաս միևնույն անվրդով հայացքներն ունեն դեմքերին: Ականջաբարձի վրա տղայիս փոքրիկ ձեռքն է: Հեռավոր հիշողություն: Լուռ թախիծ: Թախիծ՝ վարագուրածածկ սենյակի մուժում: Պահարան: Դուռ: Ճռռոցով: Սո՛ւս: Կամա՛ց: Քեթինոն ու տղաս միևնույն խաղաղ հայացքներն ունեն: Պահարանի վերին թարեքին՝ թաշկինակ: Երկուսն եմ վերցնում: Չոր: Առողջ: Սո՛ւս: Կամա՛ց: Գրպանում: Դուռը բաց մնա: Սենյակից՝ ոտնաթաթերի վրա՝ երկաթի սառնությունը մատներիս: Զգուշորեն՝ բռնակին: Նեղ միջանցքում:

Երկու քայլ: Գրպանից՝ թաշկինակ: Ոսկոր: Ցավ: Խոհանոցի կողմ: Թաշկինակ՝ քթի մոտ: Ինձ լքող գրիպի բացիլ: Քթոսկրի ցավ: Շունչս բացվում է: Թաշկինակը՝ գրպանում: Սառնարան: Սառնարանում՝ էնվերի օղին: Օղին ու սխտորը գրիպի դեղ են: Ո՞վ է մոգոնել: Երևի մի հարբեցող լոթի: Միևնույն է: Սառնարանի մոտ: Սառնարանի դուռը: Երկու մատով՝ 22ի պարանոցից: Հայացքս՝ 22ին: Կեսից ավելի: «Տուշոնկա»: Ունեմ: Լույս չկա: Ոչ էլ՝ գազ: Սխտոր: Խոհանոցում պիտի որ լինի: Խոհանոցի դուռը: Խոհանոցում: Սեղանին՝ շիշ: Դարակ: Սխտոր: Հոդերիս մեջ հոգնածություն: Այսօրվա առավոտը պիտի-ով է սկսվել: Հացը հին է: Հացի փող: Լեյլան: Մական: Դարեջանը: Մեշոկն՝ իմ շալակին: Հոգնածություն: Հեռվից առաջ շարժվող: Ինձ մոտ կանգ առավ: Չէ՛: Ես ու հոգնածությունս միասին ենք ճանապարհորդել: Հիմա խոհանոցում ենք: Սխտոր ենք կծպում: Մաքրած սխտորի պճեղները հեռացնում ենք իրարից: Կծեպը թափում ենք աղբամանի մեջ: Դրսում ցուրտ է: Ձմեռ է: Իմ պատուհանից կամուրջ է բացվում: Մերկ ծառեր: Հալչող ձյունից թաց սալարկուղի, որի վրայով ժամանակ առ

ժամանակ մեքենաներ են սուրում: Սխտորի ծանր հոտ: Սխտորի և օղու: Դիրոլ կգնեմ: Դիրոլ: Ջով անանուխ: Քեթինոն: Ամուսինն առավոտից խմում է: Խոհանոց մտած կնոջ դեմքի արտահայտությունը: Ո՛չ: Գլխիս կանգնած: Երբ առավոտն այսպես է սկսվում, ուրեմն ինչ-որ բան կարգին չէ: Անհուսություն: Նրա մոտ էլ: Ինձ մոտ էլ: Երեխան ամաչում է դպրոց գնալ: Ինչո՞ւ է ամաչում: Դպրոցի ֆոնդի համար փող են հավաքում: Զգտում եմ ինչ-որ ծիծաղելի բան հիշել: Դեպք: Անեկդոտ: Պատում: Միևնույնն է: Ցավով եմ ձգտում: Հիշում եմ: Պատմում եմ: Չի ծիծաղում: Ջղայնանում եմ: Քեթինոյի անդրդվելի անտարբերությունը գրգռում է ինձ: Չի հասկանում: Չի հասկանում: Չի հասկանում: Ծիծաղը, որով պատմեցի այդ պատմությունը, հիմա շատ կեղծ և թույլ է թվում: Անհարմար եմ զգում, ավելի եմ ջղայնանում: Նման պահերին ես ու Քեթինոն վիճում ենք: Մեր լարված դեմքերը: Մեզնից արտաբերվող բառերը: Տղայիս աչքերում՝ վախ: Սթափեցնում է: Քաշվում եմ: Մի քանի անգամ չկարողացա ինձ զսպել: Նոր տարվա պատրաստություն: Քեթինոն արհեստական եղևնի է

զարդարում: Ռեթինոն շատ հին խաղալիքներ ունի: Երևի հատկապե՛ս սիրելի իրեն: Ես և Ռեթինոն ամեն տարի երկու կամ երեք նոր խաղալիք ենք ավելացնում հին խաղալիքներին, որպեսզի մեր տղան ուրախանա նորույթի զգացողությամբ: Ռեթինոն այսօր ձախ ոտքի վրա է զարթնել: Կռիվ է ման գալիս: Ջգում եմ: Կռիվ է ուզում, որովհետև սառնարանը դատարկ է: Ես գիտեմ, որ ինչ-որ բան, այնուամենայնիվ, կհաջողեցնեմ: Պարտքով թե պարտամուրհակով, սակայն Նոր տարվան էլի մի փոքրիկ սեղան գցում եմ: Թեև Ռեթինոն ալեկոծվում է և դրա համար կռիվ է ուզում: Չկարողացա պոկվել, խույս տալ: Ինչ-որ բան գամեց ինձ բազկաթոռին: Գուցե այն ցանկությունը, որ ձմեռվանից մի օր գոնե պոկեմ: Հա՛: Երբ իմ բնակարանում տոնածառ է զարդարվում, և իմ տղան ուրախանում է, ինձ թվում է, թե ձմեռվանից իրոք մի օր պոկեցի: Ռեթինոյի կողմից մի քանի ռեպլիկ: Ինչի՞ս վրա ուրախանամ: Կամ գալիս է, որ ի՞նչ անի: Կամ երեխային է կպնում առանց պատճառի: Ջղայնությունը կոկորդի մոտ է սեղմվում: Ջսպում եմ ինձ: Ոչինչ չեմ ասում: Դրա համար էլ կռիվ

ավելի է ուզում: Տղայիս ձեռքից մի խաղալիք պլստում, ընկնում է: Խաղալիքը ռումբի պես՝ հատակին: Ռեթինոն խփում է տղային: Մի քանի անգամ: Վերևից ներքև: Պստիկ գլխին: Վերևից ներքև: Ոգևորված: Պստիկ գլխին: Մինչև երկրորդ անգամ կխփի, Ռեթինոն իմ կողմ է նայում: Մարտահրավերի է նման: Չարադեմ: Շրթունքները չարախնդորեն իրար սեղմած: Ես՝ Ռեթինոյին մոտիկ: Ձեռքս՝ շրը՛խկ՝ երեսին: Ռեթինոն՝ հատակին: Ծեծում եմ: Ոտքով: Ծեծում եմ: Չեմ հիշում՝ որքան ժամանակ: Տղայիս ձայնը սթափեցնում է: Ձայն չէ: Հոգու ճիչ է: Հոգու ճիչի մեջ՝ հատ առ հատ ասված՝ կը-մեռ-նե՛մ: Ես... հի... մա... կը-մեռ... նեմ: Մի ձեռքով շալվարիցս է քաշում, մյուսով՝ խփում: Շունչը կտրվում է, երբ հատ-հատ ասում է՝ կմեռնեմ: Ես հիմա կմեռնեմ: Դռան մոտ եմ: Դուռը՝ շրխկոցով: Ինձ սթափեցնում են տղայիս հոգու ճիչն և նրա արտաբերած բառերը: Ծանր է: Հոգուս իջած ծանրություն: Սիրտս ծանրացել է: Մարմինը հոգու ծանրությունից կծկվում է: Վախոն: Վախոյի մոտ օդի եմ խմում: Չեմ հարբում: Քանզի հոգիս ծանրացած է: Վախոն հարբում է: Երբ Վախոն

հարբում է, աչքերը կարմրում են: Ոտքով հրեց աթոռը: Հեռախոսով է զանգում: Ո՞ւմ է զանգում: Երկվորյակ քույրերին: Ո՞ր երկվորյակ քույրերին: Մայան ու Մանանան: Վախոն ասում է, որ երկվորյակներն իրեն ապառիկով են տրվում: Ո՛չ: Վախոն ասում է, որ երկվորյակները «պոսլեզե» են տալիս: Հա՛: Վախոն է այսպես ասում՝ «պոսլեզե»: Ես ասում եմ, որ բոզերի հավես չունեմ: Վախոն, այնուամենայնիվ, զանգում է: Չեն պատասխանում, բայց՝ այնուամենայնիվ: Էս դուք որտե՞ղ եք, ա՛յ բոզեր: Որտե՞ղ եք, տո՛ քածեր: Ասում է Վախոն և անընդմեջ հավաքում համարը: Ես Վախոյի վրա ուշադրություն չեմ դարձնում: Մտածում եմ տղայիս ու Ռեթինոյի մասին: Մտածում եմ՝ չեմ մոռանա տղայիս խոսքերը: Մտածում եմ Ռեթինոյի մասին: Կատաղած եմ: Մտածում եմ նաև այն մասին, որ ընչազրկությո՛ւնը մեզ ծեծեց: Երեքիս էլ: Հա՛: Երեքիս էլ: Ընչազրկությունի՞ց ծեծված: Ռեթինոն՝ տղայիս: Ես՝ Ռեթինոյին: Տղաս՝ ինձ: Ամենքիս կպավ ամենքիս ձեռքը: Օջախ: Միկրոաշխարհ: Քաոս՝ միկրոաշխարհում: Երկրաշարժ: Հորձանք: Սև ցավ: Ընչազուրկի առօրյա, որն այսպիսի անողորմ

նպատակամղվածությամբ մարդկանց մեջ հուսահատություն է ամբարում: Հուսահատությունը չարացնում է: Հուսահատությունը մի օր պայթում է ռումբի պես: Պայթում է: Ցրվեց: Փշուր-փշուր՝ պաշարեց ողջ տունը: Վառոդի հոտի նման սուր: Անկեղծ երեխայի կողմից ասված ստի նման այրող: Ընչազրկությունն ամոթի պես այրող է: Հա՛: Այրող է: Ամոթի նման: Վախոն, այնուամենայնիվ, հասավ իր նպատակին: Վախոն հիմա սթափի նման է խոսում: Եկեք՝ ասում է Վախոն: Երկուսդ էլ եկեք: Հետո լսում է: Խնդրե՞մ,- հարցնում է,- լսի՛ր,- ասում է հետո,- դու Մայա՞ն ես, թե՞ Մանանան: Մայա՛, խնդրե՞մ,- հարցնում է Վախոն ու դնում ընկալուչը: Վախոն նորից հարբում է: Քածե՛ր,- ասում է Վախոն,- հինգ դոլարանոց քածեր: Թուրքին հինգ դոլարով են տալիս, ինձ խնդրել են տալիս էս քածերը: Հինգդոլարանոց քածերը խնդրել են տալիս ինձ: Վախոն արդեն կատաղում է: Այսպիսին է: Մինչև հետները չկռվի, սիրտը չի կպնի: Ոչ էլ մի կարգին դուր գալու բաներ են: Գեր, չաչանակ դախպեք: Երկուսն էլ ճիշտ միանման: Դեղին ներկած մազեր: Էժանագին օծանելիքի հոտ: Նաև

անվայության հոտ, որը կարագի հոտ է հիշեց-նում: Շաղակրատանք: Անվերջանալի: Ուղղակի շաղակրատանք: Շաղակրատանք՝ շաղակրա-տանքի համար: Դու մի ասա՝ էքստրասենսի շնորհով էլ են օժտված: Իրենք են այսպես ասում: Հա՞ էքստրասենսայի՞ն շնորհով օժտված: Մեկն էլ, մյուսն էլ: Սուրճի վրա գուշակություն էլ գի-տեն: Երկուսն էլ երազում տեսել են իրենց մեռած հորաքրոջը: Նա է ասել, որ գուշակեն: Ու հիմա երկուսն էլ գուշակությամբ են զբաղվում: Հետն էլ հավատացյալ են: Իրենք են այսպես ասում: Այն էլ՝ խորը հավատացյալ: Հետն էլ հայրենա-սերներ են՝ «պատրիոտներ»: Ազգային շարժման զարթոնքի շրջանում այնտեղ էին անընդհատ ֆոֆռում՝ կառավարական շենքի առաջ բացված վրանների մոտ: Մեկը մյուսին խոսելու մաջալ չեն տալիս, հա մի գլուխ իրար հաստատում են: Էսպես չէ՞ր, Մայա: Էսպես չէ՞ր, Մանանա: Հա՛, Մայա: Հա՛, Մանանա: Ու գնա՛ց: Ո՞ւր գնաց: Մարմնին կիպ կպած կարճ շրջազգեստում տե-ղավորված հաստ հետույքն օրորելով՝ խոհանոց: Ո՞ր մեկը գնաց: Չգիտեմ: Միևնույնն է: Շատ տնավարի են պահում իրենց: Աղչի՛, Մանա՛նա:

Աղչի՛, Մայա՛: Եվրոպական սեքս չեն ընդունում: Ի՞նչ է նշանակում եվրոպական սեքս: Մի՞թե չգի-տի: Ծիծաղ: Ծիծաղում եմ: Ինչո՞ւ եմ ծիծաղում: Չգիտեմ: Միևնույնն է: Ի՞նչ է նշանակում ու... Մինե՛տ է նշանակում: Հասկանալի՞ է՝ ի՞նչ է նշա-նակում: Այո՛: Հասկանալի է: Հա՛ դե, չե՞ն ընդու-նում: Հարբած: Ես՝ հարբած: Նրանց բարձրաձայն խոսակցությունը: Իրար հերթ չեն տալիս: Բջջային են ուզում ձեռք բերել: Մեկը հո ունեն, բայց հիմա ուզում են էն տեսակից էլ ունենալ, որը շատ նորառոճ է: Սեղանին՝ երշիկ: Օղու շիշ: Էլի ինչ-որ բան: Բաներ: Սրանց բլբլոցը: Անվա-յության հոտը նման է կարագի հոտի: Մոռացու-թյան ցանկություն: Հա՛: Մոռացության: Միևնույն է՝ ինչո՞վ, ինչպե՞ս, ի՞նչ միջոցով, բայց՝ մոռացու-թյան: Իմ ձեռքը՝ մեկի հետույքին: Որի՞: Որը որ նստեց իմ աջ կողմում: Ծիծաղում է: Ինչո՞ւ է ծի-ծաղում: Դրա համար հո չե՞ն եկել: Ուղղակի հարգում են Վախոյին: Ի՞նչ է նշանակում դրա համար: Ծիծաղ: Իբր չգիտի ի՞նչ է նշանակում: Հա՛: Երեխա է: Դեռ ոչինչ չգիտի: Ծիծաղ: Ծիծա-ղում եմ: Ինչո՞ւ եմ ծիծաղում: Չգիտեմ: Միևնույնն է: Իմ ձեռքը դրանցից մեկի ձեռքին է կպնում: Ո՞ր

մեկի ձեռքին: Որն ինձնից աջ է նստած: Ձեռքով իմ ձեռքն է բռնում: Կլորավուն դեմք, դեղին ներկած մազեր: Վախոն գովում է աղջիկներին: Ինչո՞ւ է գովում: Որովհետև եկան, իսկ եթե եկել են, ուրեմն լավն են: Վախոն մեկի գլուխն է պաչում: Մյուսի թուշն է պաչում: Որի՞ թուշը: Որն ինձնից աջ է նստած: Մտովի առաջին եմ ասում: Ինչո՞ւ: Չեմ հիշում: Հա՛: Առաջինը՝ ինձնից աջ: Երկրորդն ինձնից ձախ է նստած: Իմ դիմաց՝ Վախոն: Վախոն հարցնում է՝ ո՞վ էր հեռախոսով խոսողը: Նա՝ առաջինը: Օղին ու երշիկը՝ ապառիկ, աղջիկները՝ «պոսլեզե»,– ասում է Վախոն: Բան-ման չխառնի: Ինչո՞ւ պիտի խառնի: Որովհետև այսօր ուրբաթ է: Ո՞վ է պատասխանում: Առաջինը: Հա՛, որն ինձնից աջ է նստած: Վախոն կարծես դրան էր սպասում: Մի րոպեով էն կողմ գնանք՝ ասում է առաջինին: Ինչո՞ւ պետք է էն կողմ գնանք: Ուրեմն հենց էստեղ էլ տուր, հենց էստեղ, սեղանի մոտ: Թե կուզես, սեղանի վրա:– Կարող ե՞ս,– ասում է առաջինը: Ծիծաղ: Ծիծաղում եմ: Ինչո՞ւ: Չգիտեմ: Միևնույնն է: Խմում ենք: Շիշը դատարկ է: Գերը, կոշիկները տկտկացնելով, գնում է խոհանոց: Այնտեղից՝ օղու շշերը

ձեռքին: Ո՞րը: Երկրորդը: Նստում է: Խմում ենք: Ծիծաղում եմ: Իմ ձեռքը հպվում է մյուսի ձեռքին: Ձեռքով ձեռքս է բռնում: Կլորավուն դեմք: Դեղին ներկած մազեր: Հետո կանգնում եմ: Գնանք՝ ասում եմ նրան: Որի՞ն: Երևում է՝ առաջինին: Ինչո՞ւ: Որովհետև Վախոն ասում է՝ էս մյուսն այստեղ մնա: Ինչո՞ւ մնա այստեղ: Հեռախոսով սա էր խոսում: Որովհետև: Ի՞նչ նշանակություն ունի: Միևնույնն է: Գնանք՝ ասում եմ երկրորդին: Վրա է պրծնում կոկա-կոլայի շշին: Բերում է: Գալիս է: Ես ու երկրորդը՝ սենյակում: Ինչո՞ւ ուշադրություն չէի դարձնում սեղանի մոտ: Ինչպե՞ս չէի դարձնում: Կարծում է, թե քրոջն ավելի եմ հավանել: Բայց ի՞նչ նշանակություն: Մեկ է՝ լրիվ միանման են: Չէ՛: Նույնը չեն: Լրիվ տարբեր բնավորություններ ունեն: Նա՝ սրա քույրը, սուսիկ-փուսիկ էն մի բանն էլ է անում: Ի՞նչ է անում: Սա արդեն չի ասի: Եվրոպական սեքսը նկատի ունի՞: Չէ՛, չի կարող ասել ինձ: Գուցե երկրորդն էլ անի: Չէ՛: Գուցե: Չէ՛: Գուցե: Չէ՛: Չէ՛: Կանի: Հիշեց, որ «ռեգինկա» չունի: Լրիվ միանման են: Հա՛: «Ռեգինկա»: Այսպես է ասում: Էն խաթրի համար էլ է անում, որ հավանել է ինձ և մի քիչ էլ՝ հարբել: Իմ

ձեռքը՝ դեղին ներկած մազերին: Նրա գլուխը միատոն շարժվում է, ժամանակ առ ժամանակ սակայն կանգ առնում: Շարժվում է: Շարժվում է: Կանգ է առնում: Կանգ է առնում: Անասնական սպասմամբ կանգ առավ: Ինձնից տաքություն է ժայթքում: Ցրվում է: Ծնկներիս մեջ՝ թուլություն: Դատարկ: Դատարկ: Անուժ: Կեղտ: Կեղտոտ: Անլվայության հոտը կարագի հոտի է նման: Իմ կողքին: Մոտիկ: Կողքիս: Ջգայական: Ավելի կծված: Շշից կոկա-կոլա է խմում: Ես՝ մահճակալին: Աչքերս փակում եմ: Ինչո՞ւ: Ինձ թվում է, որ եթե աչքերս փակեմ, կծված կարագի հոտը կցնդի: Էժանագին օծանելիքի հոտն էլ: Մոտիկ: Կողքիս: Չի ցնդում: Հետո հարևան սենյակից լսում եմ՝ ինչո՞ւ խնդրել տվիր, հը՞, պոռնիկի՛ մեկը: Տղլա՛շ... Տ՛ն, անա՛ռակ, թուրքին հինգ դոլարով, ինձ էլ խնդրելո՞վ ես տալիս: Տղլա՛շ... Ինչ-որ բան ընկավ: Իմ կողքին գտնվողը վազում է այն կողմ: Կծված կարագի հոտն այնուամենայնիվ մնում է: Դուռը բաց, թե չէ կջարդեմ՝ գոռում է նա: Երևի երկրորդը: Գնա՛, քու...,- ասում է Վախոն: Իսկ նա խռխռում է: Հա՛, խռխռում է: Ես՝ անուժ: Կեղտոտ, անուժ: Սո՛ւս, պոռնիկի մեկը:

Տղլա՛շ: Տղլա՛շ: Լռում է: Հիմա միայն նա է աղմկում կողպած դռան մոտ: Երևի երկրորդը: Հիմա մահճակալը ճռռաց, ու նա էլ լռեց: Թուրքին հինգ դոլարո՞վ, տո՛ քա՛ծ: Ճռճռում է: Ինձ խնդրել ես տալի՞ս, տո՛ դախպա՛: Ճռճռում է: Ճռճռում է: Ավելի հաճախ: Ավելի: Օ՜հ: Ասում է նա: Առաջինը: Առաջինը կամ երկրորդը: Ի՞նչ նշանակություն ունի: Գլխավորն այն է, որ լռություն է: Գիտեմ՝ հիմա կգնան: Կքնեմ: Կեղտոտ: Կեղտոտ: Անուժ: Գնում են: Քնում եմ: Աղտի զգացողություն: Առավոտյան էլ ունենում եմ: Սրտխառնոց էլ: Վախոն ուզում է խումհարից դուրս գալ: Հենց առաջին բաժակից սկսվում է սրտխառնոցը: Մորդ մոտ կտանեմ՝ ասում է Վախոն: Ես ինքս կգնամ՝ ասում եմ ես: Ո՛չ: Վախոն ինձ այս վիճակում չի թողնի: Իջնում ենք բակ: Վախոյի հնաոճ ժիգուլին: Մեքենայի մեջ վշագործ մեշոկի հոտ: Մկան ծերտ: Դուրս եմ գալիս մեքենայից: Ինչ-որ մեկի ավտոտնակի մոտ թափում եմ սիրտս: Լեղուցս դուրս եկած կանաչ: Մի քիչ թեթևացա: Նորից՝ մեքենայի մեջ: Դու ողջ մայր ունես, ընտանիք ունես, դրա համար էլ զզվող ես: Հա՝ ասում եմ, գնանք մորս մոտ: Ընտանիք

պետք է կազմեմ, թե չէ կգժվեմ՝ ասում է Վախոն: Մայրս ինձ ոչինչ չի հարցնում: Մայրս ջուր է տաքացնում: Լողանում եմ: Երկար ժամանակ: Երկար ժամանակ: Մայրս սենյակն ինձ է տրամադրում, աշակերտներին պարապելու տանում խոհանոց: Երկրորդ օրը մայրս գնում է: Իսկ հետո վերադառնում: Տղադ էր քեզ հարցնում, շատ է կարոտել,– ասում է մայրս: Տուն եմ գնում: Քեթինոն ու տղաս օտարոտի են, որովհետև այնպես են պահում, կարծես թե ոչինչ չի պատահել: Քեթինոն տղայիս ուղարկում է խաղալու հարևանի երեխայի հետ: Նախքան դուրս գալը, երեխան մոտենում է ինձ: Տղայիս հայացքը՝ անսպասելի հասունացած: Տղայիս պահվածքը՝ չի համբուրում, բայց ձեռքը քսում է ոտքիս: Ես եմ համբուրում: Նա միայն ոտքիս է ձեռք է տալիս ու գնում: Ես փորձում եմ որսալ Քեթինոյի հայացքը: Քեթինոն աչքերը փախցնում է: Իմ ինքնասիրությունը խաղաղվում է, քանզի Քեթինոն լսում է: Աչքերը հևված: Խոսում եմ: Հաճախ եմ հուզմունքով հիշատակում «սեր» բառը: Իսկ ի՞նչ անենք, եթե իրար չենք սիրում: Եթե իրար չենք սիրում, երեխան ի՞նչ մեղք ունի:

Մոտավորապես այսպես: Վերջում հաշտվում ենք: Հաշտվելուց հետո ես ու Քեթինոն նորից սիրում ենք իրար: Միշտ այսպես է եղել: Հիմա էլ այդպես է: Երբ մարդ վախենում է, նրա ախորժակն ու հույզերը սրվում են: Երբ զգում ենք, որ այս այլանդակ ձմռանը կարող ենք մենակ մնալ, մեզ անսպասելի համակում է վախը, և հույզը ավելի է տիրում մեզ: Միառժամանակ այսպես է: Հետո՝ սովորականի պես: Մարդուկնկա ամուսնական պարտք ենք կատարում: Կամ էլ հայտնի մարդկանց անուններ ենք հիշատակում՝ ան-ով, բան-ով, գան-ով, դոն-ով, էն-ով, վին-ով սկսվող... Քնում ենք: Արթնանում ենք: Մեկ սիրում ենք իրար: Մեկ՝ չենք սիրում: Ձմեռը երկար է: Ձգված: Սերն էլ է դեպի իրեն ձգում ու իրարից զզվելն էլ: Իրար չտանելն էլ: Հիսունգրամանոց բաժակ: Հարյուրգրամանոց են ասում: Պապս էր խմում դրանով: Շշից՝ բաժակ: Մինչև վերջ: Էն-վերի օդին: Ճաճա: Սպիրտի նման: Սխտորի կծեպը՝ աղամանում: Ձեռքս՝ բաժակին: Փողոց: Ձմեռ: Կամուրջ: Ծառեր: Բաժակը՝ շուրթերիս: Երկու մեծ կումով: Սխտորի սուր համ: Աչքերիս մեջ՝ արցունք: Թաշկինակ՝ աչքերիս: Թաշկինակ՝ քթի

մոտ: Ոսկոր: Ցավ: Բացված շնչառություն: Թաշ-
կինակ՝ գրպանում: Սիգարետ: Ուզում եմ: Սիգա-
րետ: Ունեմ: Տաքություն: Ոտքերիս ծայրերից
մինչև վերև: Կրակվառիչ: Հենց առաջին կպցնե-
լուց: Սկսվեց: Հալվեց: Սիգարետ: Լավն է: Ծուխը՝
թույլ և թմրեցնող: Աչքս՝ բաժակին: Մորիցս եմ
բերել: Մորս մոտ վալերիանիի հոտ կար: Վալե-
րիանին վտանգի հոտ ունի: Բժշկական սպիր-
տից ավելի վտանգավոր: Հայրս: Իմ տղայից
հինգ տարով ավելի մեծ կլինեի այդ դեպքում:
Հա՛: Հինգ տարով: Դռան մոտ պպզած: Մեկն իր
ձեռքը դնում է գլխիս: Մյուսը՝ ուսիս: Ես կանգ-
նած եմ: Նրանք հպվում են ինձ: Մինուճարու-
թյունն ասես ճակատագիր է: Հայրս էլ մինուճար
էր: Ես էլ մինուճար եմ: Իմ տղան էլ: Պապս մինու-
ճար չէր: Պապս եղբայր ուներ: Պապս քաղաք
տեղափոխվեց բնակության: Նրա եղբայրը
մնաց գյուղում: Պուսյա հորաքույրս ու հայրս հո-
րեղբոր զավակներ էին: Հորաքույրս ամուսնա-
ցել էր Օչամչիրեում: Պուսյա հորաքույրս ու
Նեստոր բիձան՝ հորաքրոջս ամուսինը: Օչամչի-
րե: «Օչամչիրա՛, Օչամչիրա՛, սամի լուչշի գորոդ
միրա՛՛՛...: Ծովափին՝ պիոներական ճամբար:

Ռուս դեռահասների հանպատրաստից հորի-
նած երգը՝ այս քաղաքի մասին: Քաղաքի կենտ-
րոնում՝ Լենինի մի մատ արձանը: Էն
ժամանակվա Սովետական Միությունում երևի
ամենափոքրն ու ամենաածիծաղելին: Կարիկա-
տուրա էր, ի՞նչ արձան: Օչամչիրեի երկաթու-
ղային կայարան ոտք դնելուն պես՝ սրտի
հաճախացած զարկեր: Կայարանամերձ փոք-
րիկ հրապարակ: Օչամչիրե-Տղվարչելի ավտո-
բուսներ: Երկու կամ երեք: Մեկի մոտ՝ մարդիկ:
Սևազգեստ կանայք: Տղամարդիկ սիգարետ են
ծխում: Հրապարակում՝ այծեր: Հրապարակի դի-
մաց՝ դաշտում՝ ճաշարան ու մի քանի շեկ կով:
Ճաշարանում խինկալի են սարքում, մեջը՝ լիքը
կանաչի: Լավը չի, բայց հաճախորդներ, այնուա-
մենայնիվ, ունեն: Հրապարակից հետո՝ երեք փո-
ղոց: Հորաքրոջս բնակարանը կենտրոնական
փողոցում է: Երկաթուղային կայարանի ու ծովի
միջև: Գնում եմ: Մոտենում եմ: Սիրտս ավելի հա-
ճախ է խփում: Հորաքույրս հարազատի հոտ
ունի, տնեցու: Հորաքույրս գրկում է ինձ, ու փա-
ղաքշելով ասես հովացնում իր սիրտը, հետո մի
տեսակ սկսում է դժգոհել: Ինչպես մայրերն են

տրտնջում, երբ կարոտ են մնում զավակներին: Այդպես: Ես Նեստոր բիձայի մասին եմ խոսում: Կարևոր չէ, թե ինչ: Մի ինչ-որ բան: Ասենք, թե հորաքույրս Նեստոր բիձային ինչպես բռնեցրեց բոգի մոտ: Կամ ասենք, թե այդ ժամանակ ինչպես կարդարանար Նեստոր բիձան: Կամ այնպես եմ անում, որ հորաքույրս հիշի իրենց առաջին հանդիպումը: Ինչ-որ զվարճալի բան եմ հիշել տալիս: Ինչ-որ բարի հիշելիք, որպեսզի ես ու հորաքույրս միասին ծիծաղենք: Գնում եմ: Մոտենում եմ: Սրտիս խփոցն ավելի է հաճախանում: Տնից տուն եմ գնում: Նեստոր բիձան: Գեր, հաղթանդամ տղամարդ: Կիսով չափ եմ հասկանում՝ ինչ է ասում: Խոսում է հետս ու խուզարկու աչքերով նայում ինձ: Անհարմար վիճակի մեջ եմ՝ քանզի կամ հա՛ պիտի ասեմ, կամ՝ չէ՛: Ես ոչինչ չեմ հասկանում, իսկ նա խուզարկու հայացքով նայում է ինձ ու անընդմեջ բլբլացնում: Երևի քաղաքականությունից: Այն ժամանակվա քաղաքականությունն էլ հո նշանակում էր Ստալինից խոսել: Ստալինի՞ց: Չէ՛: Էնվերից: Էնվերի անունը տվեց: «Օ՛հ»-ի է նման: Կարճ ու կտրուկ բացականչություն: Այդպես է: Էնվերը

«օհ»-ի է նման: Կարճահասակ: Աշխույժ աչքերով: Նիհար, բայց միաժամանակ՝ մկանուտ: Ասես՝ նախապես զարմացած: Կամ՝ ծիծաղելու նախապատրաստված: Եվ կամ՝ «օհ» բացականչության: Փայտե դարպաս: Երեք հարկանի տուն: Մերոնք ապրում են առաջին հարկում: Շուշաբանդից հետո՝ ցանկապատ: Նեստոր բիձայի տաղավարը: Տաղավարում՝ զո՛վ, զո՛վ: Աստիճաններ: Աստիճաններին՝ հորաքույրս: Պուայա հորաքրոջս աչքին ես հա մի գլուխ մեծանում եմ: Տարեցտարի: Անընդհատ: Վա՛յ, էս ո՞նց ես մեծացել, բալե՛ս: Հորքո՛ւր, Նեստոր բիձայի օղուց կտա՞ս, խմեմ: Գժվելու բան է, բալա՛ջան, կգժվեցնի քեզ: Տուր էլի՛, հորքո՛ւր: Սուփրա՝ շուշաբանդում: Տապակած կարտոֆիլ: Ձվածեղ: Մատղաշ պանիր: Համով կեղևով հաց: Տղեմալի: Խոր ամանի մեջ կտրտած վարունգ ու լոլիկ: Վիքը-լիքը՝ սոխ, հետը՝ աջիկա: Լա՛վ խառնած: Որպեսզի առանց այն էլ բուրումնավետ համեմունքների՝ սունելիների հոտն ավելի լավ տարածվի շուրջը: Սառնարանից հանված բարակավիզ օղու գրաֆինը միանգամից գոլորշապատվում է: Ես՝ հորաքրոջս մոտ: Նեստոր

բիձայի ու Էնվերի մոտ: Երեք սենյականաց բնակարան, որի մի սենյակը հիմա ինձ է պատկանում: Ամառ: Ծովի ձայնը թեև չի հասնում մինչև հորաքրոջս տուն, բայց բույրը կա: Ծովաղի ու խոնավության: Ցող: Շոգ: Վախ: Ցանկություն: Շուշաբանդից մինչև ցանկապատ՝ մի քանի քայլ: Հորաքրոջս ամուսնու տաղավարը: Հենց այդտեղ՝ նստարան ու սեղան, որտեղ հարևաններով թուղթ ու դոմինո են խաղում: Ծովափից վերադառնում եմ արևահարված ու սոված: Հենց ոտքս դնում եմ տաղավարի ստվերում, սիրտս տեղն է ընկնում՝ հարազատ տան մեջ եմ զգում ինձ: Շունչս՝ տեղը: Հանգստացած: Ինչքան գինի պիտի քամեր հորաքրոջս ամուսինը, որ մի ամբողջ տարի հերիք աներ հորաքրոջս բազմահյուր օջախին: Դե՛, նա էլ հա մի գլուխ քամում էր: Հետն էլ գովում-գովաբանում: Նախ ինքն էր խմում՝ ուրիշին ներկայացնելու համար: Թթու էր գինին: Դաղում էր լեզուդ: Իսկ երբ շաքարի համը գալիս էր, սիրտդ էր վառում: Գույնը՝ անգույն դեղին, լեղակի գույնի խփող: Բայց օղին լա՛վ էր ստացվում: Քիչ: Բայց՝ լավը: Սուր: Միանգամից զգացվող: Կրակի պես: Վառող: Օղին՝

թրաշավոր «գրանյոննի» բաժակում: Բաժակը՝ շուրթերի մոտ: Երկու մեծ կումով: Ջերմություն՝ կոկորդում: Տարածվում է կրծքավանդակում: Լավ է: Նեստոր բիձայի նման Էնվերն էլ է օղի քաշում: Էնվերի օղին շուշաբանդում առավոտյան բացված սուփրան է հիշեցնում: Էնվերը՝ Աբխազիայից Գուրիա ապաստանած: Թբիլիսիում մի կերպ բնակարան պոկելու մասին է խոսում հետս: Ժամանակի բնավորություն: Խոսքից զգացվող ժամանակի շունչ: Բնակարան ձեռք գցել Թբիլիսիում: Սա գաղթականների գրույցի թեմա է: Սեփական տունուտեղը կորցրած մարդիկ իրենք էլ ցանկություն ունեն ինչ-որ մեկին նեղելու, թեկուզև խաբելու, որ իրենց հարիփի տեղ չդնեն: Ես Էնվերին ասացի, որ ինքը բան պոկող չէ: Մինչդեռ ինքը կարծում է, թե... Վախոն էլ մի կողմից շիրա տվեց՝ բա ո՞նց անի: Իմ մոտ թող ապրի՝ պատասխանեցի ես: Այդպես Գուրիայում էլ է ապրում՝ ասաց Վախոն: Պատերազմ, որում պարտվեցին Էնվերն ու Վախոն: Անձրևից առաջ ցավում է Վախոյի ուսը: Որովհետև ուսն է վիրավորված: Իսկ Էնվերի ոտքն է ցավում, որովհետև ոտքն է վիրավորված:

Միաբանություն չկար, դրա համար էլ պարտվեցինք՝ ասում է Էնվերը: Ռուսը հրահրեց այս պատերազմը: Եվ ռուսն էլ հաղթեց մեզ: Նորությո՛ւն՝ արձագանքում է Էնվերը: Հիշում ենք Օչամչիրեն: Ես ու Վախոն Էնվերի հյուրերն ենք: Երկու՝ բերանները բաց, որսորդական շներ՝ Օչամչիրեի ճեմուղում: Աղջիկներ՝ բաց սարաֆաններով: Աղջիկներ՝ տնային խալաթներով ու ոտների մատները բաց «շլյոպանցիներով»: Նրանց մերկությունը: Այսպես են անսպասելի աչքիդ զարնում: Բաց սարաֆաններով կամ կոճակները բաց սարաֆաններով: Հա՛: Անսպասելի աչքի զարնող: Լույսի պես ցոլացող մերկություն: Ուժեղ արևայրուք ստացած: Ցանկությամբ լի: Չգիտես ինչու մեզ վրա ուռած-փքված, մեզնից նեղացած: Կամ՝ անտարբեր: Կամ՝ մեղադրանքով: Կամ՝ բանի տեղ չդնելով: Վախոն ինձնից ղոչաղ է: Աղջիկների հետ հաջողեցնում է լեզու գտնել: Վախոն միանգամից է հասունանում իմ աչքին: Մագնոլիաներ: Մագնոլիաներ: Մեր պատանությունը: Մագնոլիաներն արթնանում են թռչունների դայլայլից: Իսկ քնել պատրաստվում այն ժամանակ, երբ հանց ալեծուփ արահետ, ծովի՝

միանգամից մգվող իրանի վրա փռվում-տարածվում է հրաշեկ արևի սկավառակը: Արևն իջնում է ծովի վրա: Մագնոլիաների աչքերը տամկանում են: Երբ արևն իջնում է ծովի վրա, նրանք համարյա քնած են լինում: Արևը բավական փոքրացել է: Մի կետ է դարձել: Իսկ հետո պարզապես հանգել: Մագնոլիաներն արդեն զով ու մի քիչ էլ ջերմ երազներ են տեսնում, ինչը որպես լուռ ու համաչափ, անխոով շնչառություն, փռվում է ճեմուղու վրա: Ճեմուղով՝ ես ու Վախոն: «Շլյոպանցիների» գայթակղիչ քստքստոցը: Աղ ներծծած, սովահար մարմինների երջանիկ թմբիր: Պարտադիր կերպով ծովափնյա քաղաքի ճեմուղիներին քաջածանոթ լուսանկարիչ: Գլխին՝ սոմբրերո: Մանր բեղերով: Փոքրիկ, բզով ծակած աչքերով, հետևողական, զննող, պրպտուն հայացքով: Կապիկի հետ: Ճեմուղում գրոսնողների մեջ անմիջապես կտարբերես տեղացուն: Գավառական քաղաքի այն ժամանակների մոդան: Կիսագուլպա՝ հանգուցած կապիչներով: Ջանադրաբար պլպլացրած կոշիկներ: Ազդրերին կիպ կպած, լայն փողքերով «շլաքս» շալվար: Երեք կոճակը՝ բաց, ուսերին՝

ձիգ տարածված օձիքով վերնաշապիկ: Բակեր: Բեղեր: Էնվերն էլ՝ դրանցից մեկը: Էնվերն այս քաղաքում բոլորին ճանաչում է: Այս քաղաքն էլ Էնվերին է ճանաչում: Բա՛րև, Էնվե՛ր: Օ՛, բա՛րև, բարև՛: Ո՞նց ես, Էնվե՛ր: Օ՛հ, ոչի՛նչ, ոչի՛նչ: Թե ի՞նչ կապ ունի այստեղ «օհ»-ը: Բայց Էնվերն այդպիսին է: Կարճահասակ: Շարժուն: Աշխույժ աչքերով: «Օհ» բացականչության պես կարճ ու կտրուկ: Ու ջերմ: «Օհ» բացականչության պես միշտ ամեն ինչի համար պատրաստ կանգնած: Կատակի համար՝ կատակող: Կռվելու համար՝ կռվող: Օգնելու համար՝ օգնող: Մտերիմների մեջ: Մերձավորների: Դրա համար էլ Էնվերին ասացի, որ ինքը ոչ մեկից էլ բան պոկող չէ: Սա ինքը՝ Էնվերն էլ գիտի: Գիտի, բայց էլի խոսում է այդ մասին, որովհետև դա դարձել է քաղաքում տուն գջլելու պատրաստ գաղթականների խոսակցության թեման: Հա՛ դե, նա էլ ուրիշների նման խոսում է: Ուրիշներն էլ Էնվերի նման են խոսում: Իրար մեջ են խոսում, հետո նույն բանն ասում ու կրկնում տնեցիների մոտ: Էսքան բան: Հետո Վախոն հիշեց Մադոննային: Հիշեց ու մեկեն լռեց: Մադոննան: Դամիանեն ու նրա

դուստր Մադոննան: Բեղերը կարճ կտրած Դամիանեն: Չարաճճի, կկոցած աչքերով Դամիանեն: Նեղ ուսերով: Ուռած փորով: Ինչի մասին էլ խոսեր, անպայման հիշատակում էր ավագ որդուն, որն այն ժամանակ ապրում էր Սարատովում: Դամիանեի եռանիվ մոտոցիկլը: Մեջքը կռացրած՝ Դամիանեն իր մոտոցիկլով գոռոզ-գոռոզ ֆռֆռում էր Օչամչիրեի ասֆալտաքանդ փողոցներով: Ժամանակ առ ժամանակ մոտոցիկլը թռչում էր ասես: Դամիանեն էլ վերուվար էր լինում մոտոցիկլի հետ միասին: Այսուայն կողմ խռիվ մազերն ավելի էին խառնվում իրար ու փռփռում պիոներական վզկապի նման: Դամիանեն մի պահ ձախ ձեռքը բաց էր թողնում ղեկից ու մազն իր տեղը դնում: Ջիգզագավոր ճանապարհն անցնում էր դխդխկացնելով, բայց մի տեսակ աղքատ-հպարտի կեցվածքով: Ու մի՞թե հնարավոր էր, որ Դամիանեն այդպիսի գեղեցիկ աղջիկ ունենար: Մադոննան: Մադոննան նման էր մագնոլիաների երազի աղջկան: Սպիտակ, ճեփ-ճերմակ: Մուգ սև մազերով: Մագնոլիայի տերևի նման փարթամ էր նա: Արդեն հասուն՝ քաղելու համար: Մագնոլիայի

ծաղկի պես՝ նազ ու քնքուշ: Խաղաղ գրուցակից: Բարի աչքերով: Առաքինի: Նուրբ: Մի գեղեցիկ ու բարի պարզությամբ փայլող: Օշամչիրեի կինոն: Էկրանը: Փայտի նստարաններ: Մադոննան նստած է իմ ու Վախոյի միջև: Մերթ ընդ մերթ Վախոն ինչ-որ բան է ասում Մադոննային: Մադոննան նայում է էկրանին և շատ ցածրաձայն պատասխանում Վախոյին: Ես զգում եմ Մադոննայի երկար, ձգված պարանոցը: Վախոյի պատասխանից Մադոննան ժպտում է: Աչքը՝ առանց էկրանից հեռացնելու: Ես չեմ նայում Մադոննային: Ես չեմ նայում Մադոննային, որովհետև ինձ թվում է, թե իմ հայացքի մեջ ամեն ինչ անխոս կբացահայտվի: Սակայն, այնուամենայնիվ զգում եմ, որ Մադոննան ժպտում է Վախոյի կատակից: Հաջորդ ամառ Մադոննային այլևս չտեսա Օշամչիրեում: Սարատովում բժշկական է հանձնել: Դամիանեն աղջկան ուղարկել է այնտեղ, որտեղ իր ավագ տղան է: Օշամչիրեն առանց Մադոննայի: Պսակվել է՞ հարցնում եմ Էնվերին: Չէ՛: Պատասխանում է Էնվերը: Ես այլևս ոչինչ չհարցրեցի: Էնվերն ինքը պատմեց այդ սարսռալի պատմությունը: Խե՜ղճ

Մադոննա: Ասացի բարձրաձայն: Խե՜ղճ: Խե՜ղճ: Մադոննան: Ցնորվել էր: Հիմա Քութահիի գժանոցում է: Եվ զարմանալի էլ չէ, որ գժվել է: Հա՛ դե, գժվել է: Անկողնուն գամված Դամիանեին մենակ չի թողել: Չի հասցրել դուրս գալ: Դամիանեին հենց անկողնում են սպանել: Խառը բանակի հրամանատարի անունը Բատկա է եղել: Բայց Բատկան չի, որ սպանել է Դամիանեին: Նա՝ ոսկի ատամնավորն է սպանել: Հրացանը դրել է Դամիանեի ճակատին ու կրակել: Ու... ժպտացել է: Ոսկի ատամն է լպիրշորեն ցույց տվել: Այդ պահին Բատկան ոտքերին «պարտյանկաներն» է փաթաթել ու նայել Մադոննային: Մադոննային նայել են և ուրիշները: Ցոթ հոգի: Տարբեր ազգի ու հավատքի: Միմյանց հետ ատելությամբ միավորված: Հեգնական լոգերը գնալով: Ու խելագարվել է թշվառ Մադոննան: Ավելի լավ չէ՞ր սպանեին: Չէ՛: Չսպանեցին: Ասացին՝ ձեր գիժը՝ ձեզ: Այստեղ թողեցին: Հիմա Քութահիի գժանոցում է: Քութահիի գժանոցում սանիտար է աշխատում Դողլապիա Շակոիան: Բալավանիում են նրան այսպես անվանել, որովհետև կախ ընկած շրթունքներ

ունի, ու բերանը կարծես թե բաց է: Իսկապես որ շշմած, բերանբաց[1] Շակոիա: Հա՛, պռոշի մեկը կախ է՝ դողլապիա, բայց սրա հետ միասին նաև ծալապակաս է: Գժանոցի կյանքը հենց էն գլխից նրան շատ դուր եկավ: Ու մնաց ու մնաց: Հնամաշ, քաքոտ սավաններն է մանրանիվ պատգարակով այսուայն կողմ տանում-բերում: Գնում-գալիս է՝ բադի պես օրոր-շորոր: Ինքն իրեն միշտ ինչ-որ բան է խոսում: Ինչ-որ մեկին միշտ սպառնում է բռունցքով: Եթե անտրամադիր է, ծեծում է գժերին: Եթե բարձր է լինում տրամադրությունը, իր ամոթույքն է ցույց տալիս ու հռհռում: Հռհռում ու հռհռում է: Ես լսում եմ նրա քրքիջը: Լսում եմ, որովհետև աչքերս պաղում են: Լսում եմ, որովհետև երևի զառանցում եմ: Գուցեև իսկապես զառանցանք է այս ամենը: Ու եթե զառանցանք է, ուրեմն Դողլապիա Շակոիան ոչ եկել է Բալավանիից, ոչ էլ հաստատվել Քութաիսիի գժանոցում: Գուցեև Բատկան էլ ոտքերը «պարտյանկաներով» չէր փաթաթում, երբ ոսկի ատամը ցուցադրելիս այն մյուսն էր կրակում վախից լեզուն ցամաքած,

1 Վրացերեն՝ դողլապիա (ծ. թ.):

լեղապատառ Դամիանեի ճակատին: Հա՛: Զառանցանք է: Ամեն ինչն էլ զառանցանք է: Իմ հորինած զառանցանքը: Սակայն, երբ խեղճ Մադոննային պատկերացնում եմ գժանոցում, ամոթույքը դուրս հանած՝ Դողլապիա Շակոիայի քրքիջն եմ լսում: Ծիծաղում հա՛ ծիծաղում է: Ծիծաղում հա՛ ծիծաղում է: Իսկ իմ աչքերը պաղում են, քանզի աշկարա նրա քրքիջն եմ լսում: Հետո Վախոյի ձեռքն եմ զգում ուսիս: Վախոն ուշադիր նայում է ինձ: Վախոն գիտի, որ երբ աչքերս պաղում են, ես մտովի զառանցում եմ: Վախոն լիքը բաժակ օղի է լցնում ինձ համար: Էնվերի օղին սպիրտի է նման: Էնվերին միշտ հաջողվում է ինձ համար օղի պահել: Էնվերի օղին ինձ միշտ հիշեցնում է Օչամչիրեն: Անհնար է մոռանալ՝ այդ օղին խմելով: Հիշելը մոռանալուց լավ է: Որքան էլ՝ ծանր, այնուամենայնիվ, ավելի լավ է: Պուլյա հորաքույրը պատերազմից մեկ տարի շուտ մահացավ: Նեստոր բիձայի ցավից կծկված դեմքը: Մորուքը թողած: Էնվերի անփայլ, խամրած աչքերը: Ես էլ նրանց հետ: Նրանց կողքին: Դատարկ բնակարանում: Հետո՝ պատերազմը: Էնվերը՝ պատերազմում: Նեստոր

բիձան՝ Գուրիայում: Աստանդական Նեստոր բիձան: Հորաքրոջս գերեզմանը Օչամչիրեում: Նեստոր բիձայի գերեզմանը Գուրիայում: Արանքում այն երկրի զորքը, որը կայսրության փլուզումն ընդունեց որպես սեփական անարգանք, անպատվություն: Իր ուժը ցույց տվեց: Դեռևս մինչև այն, երբ աշխարհի քարտեզի վրա տեղ կգտներ կայսրության նախկին հանրապետությունը: Դեմն առավ: Ատելությամբ միավորված բրիգադաներ ստեղծեց: Ջենք բաժանեց: Ապատակությունների ճանապարհ բացեց: Որպեսզի չվրիպի, ճանապարհներին կարմիր սլաքներով նշեց, թե ինչ ուղղությամբ պիտի անցնեն, իսկ տակը գրեց՝ դեպի Վրաստան, դեպի Վրաստան: Վերջում իր հրամայական նշանը՝ !!!!: Այո՛: Այս հրամայական, սաստկական նշանն ավելի շատ էմոցիա է ենթադրում: Դե, ուրեմն՝ մեկ այսպես, մեկ այնպես, մեկ այնպես, մեկ այսպես: Մանասեա, մանիսիրա: Դամպարապար՛: Դիմպո՛մ-պո՛: Դամպարապարա՛: Դո՛մպ: Անունը դրել են խաղաղապահ բանակ: Հավանաբար այն պատճառով, որ այսպե՛ս են գտել անհրաժեշտ: Որովհետև այդպե՛ս էր

պետք: Իմ երկրի նախագահն է հեռուստացույցից ինձ այսպես ասում: Ես հավատում եմ, որ իմ երկրի նախագահը պատերազմում պարտություն կրած երկրի նախագահ է: Որ նա երեսպաշտություն է անում պատերազմում հաղթանակած երկրի դեմ: Այո՛: Քանզի ուժը նշանակում է բարձրություն: Ուժն ամեն ինչ է: «Ուժեղի մոտ միշտ էլ թույլն է մեղավոր» ասացվածք կա: Այո՛: Քանզի այն, ինչ զիջեց զենքի առաջ, այժմ վերադարձնել է ջանում միայն երեսպաշտությամբ: Այո՛: Այդպես է: Ես հասկանում եմ: Բայց Էնվերն ու Վախոն չեն հասկանում: Էնվերն ինձ խնդրում է, որ իրեն տանեմ մորս մոտ, որովհետև կարոտ է մայրական ջերմության: Վախոն ասում է, որ անջատեմ հեռուստացույցը: Մինչ կանջատեմ հեռուստացույցը, ձեռքս պարզում եմ առաջ՝ նախագահին՝ բա՛րև, բատոնո՛ նախագահ, բա՛րև: Երկրիս նախագահը բարևում է ինձ: Բարձրաստիճան պաշտոնյա մարդիկ մի զարմանալի հատկություն ունեն՝ ողջունում, բարևում են քեզ, բռնում են ձեռքդ, աչքերիդ մեջ նայում, սակայն ինչ-որ մի անտեսանելի, բայց զգալի էկրան կա ձեր միջև:

Այսպես, հեռուստացույցից են խոսում քեզ հետ: Բայց դե, ի՞նչ նշանակություն ունի՝ նախագահիդ ձեռքը կբռնե՞ս, թե՞ ոչ: Այստեղ կարևորն այլ բան է: Կյանքն ինձ նետել է չափազանց քաղաքակա-նացված ժամանակի մեջ: Կատարվում են հա-մաշխարհային մասշտաբի տեղաշարժեր: Ինձ՝ փոքր երկրիս խեղճուկրակ որդուս, հետաքրքիր է մի բան միայն՝ կփրկվի՞ արդյոք իմ երկիրն այս շրջապտույտից: Նա ինչ-որ հույս ներշնչում է, բայց հիմնականում ընդհանրական բաներ է ասում: Հենց այնպես, ինչպես պիտի խոսի պա-տերազմում պարտված երկրի նախագահը: Ոչ ավել: Ոչ պակաս: Ես մատս դնում եմ հեռուստա-ցույցի կոճակին: Հեռուստացույցը մարում է՝ կետ դարձած արևի նման: Գնում ենք մորս մոտ: Երբ մայրս ակնոց է դնում, տատիկի է նմանվում: Բո-լորի տատիկներին: Ընդհանրապես՝ տատիկի: Թեև որքան էլ տատիկի նմանվի, նա ինձ հա-մար նախևառաջ մայր է: Ականջաբարձ: Ինչպե՞ս կսկսեի ականջաբարձի մասին վիպակս: Շատ պարզ՝ մայրս որդուս համար ականջաբարձ կա-րեց: Սովորական ականջաբարձ: Սպիտակ մթե-լով կարված հավի բմբուլներով լցված բարձիկ:

Բարձի երեսին հնությունից դեղնած երկու կո-ճակ է կարված: Իսկ ինչո՞ւ երկու: Ուրեմն՝ ինչ-բա՞ն: Երեք: Ո՛չ: Երկու: Թեև մի կոճակ էլ որ լիներ, լավ կլիներ: Փոքր է, իսկապես ականջին մոտ դնելու հարմար: Երևի ահա այսպես կսկսեի: Գիր: Գրող: Գրողը պիտի գրի: Էներգիայի հա-մակենտրոնացում: Կենտրոնացված խտացում: Չեմ կարողանում: Ցրվում է: Ասես ոմբակոծված կերակրաման լինի՝ «կատելոկ»: Մատներս քիչ են բոլոր ծակոտիները լցնելու համար: Չեն բա-վում: Հեռվում մնացած մենությունը, ուր ափե-ափ երջանիկ էի իմ զառանցանքներով: Ինչ-որ բան ասացի: Արտաբերեցի՞: Վերջակետ դրեցի: Որսորդի համառությամբ պահակեցի և, այնուա-մենայնիվ, հասա քեզ: Ինձ ուժ կտա: Հավատ կներշնչի: Հետո ինչ, որ պիտի տանջվեմ: Պիտի տանջվեմ, այո՛, որովհետև մարդը ստեղծված է տառապանքի համար: Ոմանք ընթանում են թեթև զեփյուռի հոսանքի հետ: Ամեն մարդ իր ճամփան ունի: Իր ճամփով է անցնում ամեն մարդ: Ե՛ս գիտեմ, թե ինչո՞ւ և ինչպե՞ս եմ տառապում: Մի ուրիշն էլ իրենը գիտի: Փնտրտուք: Փնտրտուք: Չես գտնում: Կամ էլ

չի բավարարում այն, ինչ գտնում ես: Դու քո՞նն ես փնտրում: Քո՛ ռիթմը: Քո՛ ուզածը: Քեզ տրամադրվածը: Քո՛ ոգին: Քո՛ շունչը: Քո՞նը: Ուրիշինը թող ուրիշը փնտրի: Էներգիայի համակենտրոնացում: Դրանով ես ապրում: Եթե այդպես չապրես, երբեք ոչնչի չես հասնի: Բացառված է: Գալիս է հարայ-հրոցով: Եկա՛վ: Հասա՛ր: Քեզ թվում է, թե հոգուդ ամենամերձը հենց դա է, որ կա: Տեղաշարժվե՛ց: Գնա՛ց: Քնած էլ լինես, մեկ է՝ հանգիստ չի տա: Գալիս է: Մոտենում է: Խոսքով: Դեմքով: Տրամադրված: Որպես ռիթմ: Համանվագ որպես: Ուղեղն աշխատում է անկանգ: Քնի մեջ էլ այդ մասին ես մտածում՝ չմոռանա՛ս հանկարծ: Չմոռանա՛ս: Այնպես ես մղվում դեպի թուղթն ու գրիչը, ինչպես պապակ շուրթերով մարդը՝ դեպի ջրով լի շիշը: Գրառում եմ: Նշում եմ: Մտածում եմ՝ հիմա կքնեմ: Բայց՝ չէ: Գալիս է: Մոտենում է: Երբ գալիս է, մեծապես երջանիկ ես: Երբ վերջակետ ես դնում, այդժամ՝ ևս: Թեև շուտով օտարվում ես: Քեզ թվում է՝ խաբված ես: Չէ՛, այն չէր: Ինչ-որ բան թերի ես թողել՝ մտածում ես: Կամ՝ ինչ-որ բան այնպես չես արտահայտել: Հե՛չ բան էր:

երանի չգրեիր: Դիմանաս պիտի այս օտարումին: Հա՛: Դիմանաս պիտի: Դիմագրավես: Որպեսզի կրկին համարձակվես ու կրկին կպչես գործին: Եվ մի անգամ էլ ըմբոշխնես բարձրակետին հասած մարդու ցնծալի փրկությունը, և հոգուդ ցնցումը քեզ նորից հիշեցնի գոյությունը ոգու: Թեև սա էլ է շուտով օտարանում: Դժվար է, քանզի մինչև վերջ հետամուտ ես կասկածին: Վերջին հաշվով ստացվում է էներգիայի կոնցենտրացիա, քանզի համոզվում ես քո ոչնչության մեջ: Դրանով գերված: Ինքդ էլ դրան նպաստող: Պարադոքս: Այո՞ պարադոքս: Պարադոքսից մինչև աբսուրդ: Պիտի հեռանաս: Իսկ կյանքն ընթանում է իր ճամփով: Եթե չհեռանա, չես կարող զգալ: Սա էլ է պարադոքս: Պարադոքսից մինչև աբսուրդ: Ուժ պիտի հավաքես և գոնե միառժամանակ մի կողմի քաշվես: Որպեսզի ավելի լավ տեսնես: Քեզ պատիվ չի բերի, սակայն, մի կողմի քաշվելը: Դու վշագործ մեշոկն ես գցում ուսերիցդ: Մեշոկը: Իմ մեշոկը: Վշագործ: Մինչև բռնելս, պատրաստվում եմ: Կանգնած եմ: Դիտում եմ: Հետո մի անորսալի պահի օդն եմ հավաքում թոքերիս մեջ՝ ի նշան

գործողության՝ որպես մեկնարկ: Մկանները՝ շարժման մեջ: Մի քայլ դեպի մեշոկը: Կռանում եմ: Աջ ձեռքով բռնում եմ մեշոկի վզից: Արյունս գրգռվում է վշագործ մեշոկին կպչելուց: Դա ինձ ուժ է տալիս: Մի բարձրացնելով՝ ուսիս: Թոքերիս մեջ օդը մաքրվեց: Մեշոկը բնավորվեց շալակիս: Ծանրությունն առաջ է տանում: Գնա՛: Գնում եմ: Ո՛չ: Չեմ գնում: Թեև կարող եմ ճամփորդել, սակայն հիմա դրա գլուխը չունեմ: Դեռ ոչ: Առայժմ հանգստանում ենք ես ու հոգնածությունս: Միասին: Ես նստած եմ պատուհանի մոտ: Իմ դիմաց՝ իմ հոգնածությունը: Ես ու հոգնածությունս 100-100 գրամ օղի խմեցինք: Մի բաժակ էլ խմեմ ու հետո գուցե մի տեղ գնամ: Ո՞ւր: Ճանապարհորդության: Ես կարող եմ մի տեղում նստած էլ ճանապարհորդել: Քանզի անշարժության մեջ էլ շարժում կա: Ամենամեծ շարժումը հենց անշարժությունն է: Նստել եմ մի տեղում, բայց գտնվում եմ հեռո՛ւ-հեռավոր աստղածիրներում: Կա նման բան: Այո՛: Հիշում եմ: Բայց նախ խմեմ: Հա՛: Որովհետև հոգնածությունս էլ է խմել ուզում: Ուզում է՝ ուզի: Բարի: Շշից՝ բաժակ: Մինչև հատակ: Բաժակ՝ շուրթերի

մոտ: Պատուհանից այն կողմ՝ ձմեռ: Մառախլապատ առավոտ: Կամուրջ: Ծառեր: Երկու մեծ կումով: Աչքերից՝ արցունք: Գրպանից՝ թաշկինակ: Աչքերիս: Քթիս մոտ: Ոսկոր: Ցավ: Բացված շնչառություն: Թաշկինակ՝ գրպանում: Հայացք՝ բաժակին: Հիսուն գրամանոց: Ասում են՝ 100 գրամանոց: Պապս այս բաժակով «վիշնյովկա» էր խմում: Բայց՝ ընդամենը մի բաժակ: Ոչ ավելի: Հանգստյան անգործ օրվա առավոտ: Պապս նստած է սեղանի առաջ: Սեղանի վրա դրված են թղթեր ու մեծ հաշվիչ՝ չոթք: Պապս գրում է: Ժամանակ առ ժամանակ հաշվիչի քարերն է տանում-բերում՝ հաշվում է: Հագին՝ «սետկա» մայկա: Գլխին «հագցրել» է կանացի չուլքի: Երեսը՝ մաքուր սափրած: Սենյակում՝ օդեկոլոնի հոտ: Ռադիոյից լսվում է տղամարդ հաղորդավարի խռպոտ ձանը: Հետո հաղորդավարի ձայնը կորչում է ռադիոյից: Լսվում է շատ խրոխտ ձայն: Պապս ինձ վրա ուշադրություն չի դարձնում: Երբ պապս տարված է աշխատանքով, ես շատ սուր զգում եմ, որ օդեկոլոնի հոտը մեծերի հոտն է: Ես մտնում եմ սեղանի տակ: Սեղանն իմ տունն է: Այնտեղից ես տեսնում եմ զանգվածեղ

մահճակալի անկյունը: Աթոռը: Երկաթի պատշգամբը: Պատշգամբի դուռը բաց է: Արևը խաղում է չինարի տերևների հետ: Ես քսվում եմ պապիս ոտքերին: Պապս ուշադրություն չի դարձնում: Սենյակ է մտնում տատս: Տատս հարցնում է՝ որտե՞ղ է երեխան: Զգիտեմ՝ պատասխանում է պապս: Ես բարձրաձայն ծիծաղում եմ: Ես հավատում եմ, որ իմ ծիծաղը ոչ մեկը չի լսում, որովհետև տատս պապիս է հարցնում, թե երեխան որտեղ է: Փախցրած չլինե՞ն՝ հուզված ձայնով իրար է անցնում պապս: Ես ավելի բարձր եմ ծիծաղում: Օ՛յ, ահա թե որտեղ է եղել նա: Ճի՛տա՛: Միասին ծիծաղում ենք: Երեքով: Հետո գալիս է Վախոն: Վախոն նկատել է, որ իմ դեն նետած կոնֆետը երբեմն տատիկս է տանում: Վախոն սա ասում է այն ժամանակ, երբ մենք ուտում ենք քաղցր խուրմա: Իմ ու Վախոյի մեջ միտք է ծնվում: Ես ու Վախոն համ ծիծաղում, համ էլ խուրմա ենք ծեփում: Խուրմա ծեփելը շատ հեշտ գործ է: Խուրմայի կտի վրա քսում-ծեփում ենք սրճագույն պլաստիլին, և խնդրեմ՝ խուրման պատրաստ է: Ես ու Վախոն արագ-արագ վեր ենք կենում, խուրմաները

թափում հատակին, որ տատիկս գա ու տեսնի: Հետո նորից թաքնվում ենք սեղանի տակ և սպասում, թե երբ կհայտնվի տատս: Տատս իսկապես խաբվում է, քանի որ աչքերի լույսը պակասել է և կտով պլաստիլինն իրոք խուրմայի տեղ է դնում: Կռանում, գետնից վերցնում է խուրման, փոշին վրայից փչում ու կծում: Տատս ծամածռում է դեմքը: Ես ու Վախոն ծիծաղից թուլանում ենք: Երկար: Երկար: Տատս մեզ վրա չի բարկանում, իսկ մենք ուզում ենք, որ բարկանա: Ու դրա համար էլ նորից ենք ծիծաղում: Արդեն ծիծաղներս չի գալիս, բայց, այնուամենայնիվ, ծիծաղում ենք: Մանկություն: Ականջաբարձ: Ականջաբարձին՝ տղայիս փոքրիկ ձեռքը: Լուռ թախիծ: Լուռ: Լուռ: Ես սիրում եմ այդպիսի թախիծ: Այդպիսի թախիծը դառնահամ ունի: Լեղին ներսից է տանջում: Անբացատրելիորեն է անհանգստացնում քեզ: Թախիծը լուռ է: Հուշեր է բերում իր հետ: Ջերմախառն: Բարեխառն: Ջուլալ: Քեզ լցնում է մաքրության զգացողությամբ: Հույսով: Կարմիր կոթով խոզանակն իմ ձին էր: Խաղալիք ձի ունեի: Բայց գերադասում էի կարմիր կոթով խոզանակը: Նրան ասպետի

կագավիճակ էի տվել, ասպետական բնավորության գծեր շնորհել: Թշնամիներ էի գտել նրա համար: Վատերին: Չար մարդկանց: Իբրև թե նրանցից վիրավորված՝ դառը վրնջում էր: Այդ ժամանակ ես խոզանակի վրայից հանում-պոկոտում էի մազերը, ինչպես ձիուց են հանում: Որ ինձ համոզեմ: Իբրև թե իսկապես ցավաց: Ոչ թե իբր, այլ՝ իսկապես: Օ՜հ, ինչպես է ցավում: Մեկ է՝ ծնկի չես բերի: Ընդհակառակը, ավելի կընդվզի ու քացու տակ կտա վատերին, չարերին: Վերջում էլ կհաղթի: Անպայման կհաղթի: Ինչ ասել կուզի: Ամեն առարկա իր բնավորությունն ունի: Անբացատրելի, բայց զգայական էներգետիկա: Մաշված-քրքրված բազկաթոռ: Մեջտեղը՝ մաշված, եզրերը՝ մի քիչ կանաչագույն: Պահպանված: Մենակ: Ծերացած: Տխուր: Ծեր բազկաթոռ: Տխուր: Մորս կողմից վերջերս ձեռք բերած վարագույրները: Վառվռուն, պայծառ գույն: Արև: Դեպի սենյակ՝ պայծառ, վառվռուն վարագույրների միջով: Ես՝ մորս գրկախառնված: Նոր ձեռք բերած իրը նշանակում է՝ ամեն ինչ լավ է: Մայրս ջահել է: Մայրս ժպտում է: Արևը սենյակ է ներխուժում ուրախ

վարագույրներից: Հաստ թեյնիկ: Ուռած-փքված: Բարի: Թեյի գավաթ: Կարագով հաց: Վերևից՝ պանրի շերտ: Հացի բույրին շաղախված թանձրաղի ու շաքարով լի թեյի սպասում: Թեյնիկը եռաց: Թեյը եռում է: Սպիտակ: Ուռած-փքված: Բարի: Հանդերձապահարանի խորհրդավոր խորքում նավթալինի հոտ է իշխում: Նավթալինի հոտը սրում է մենության զգացողությունը: Վախենում եմ: Բայց սիրտս էլի այնտեղ է ձգում: Մինչև վերջ խցկվում, փակում եմ դուռը: Խավար: Խավարչտին, խիտ անտառում՝ մենակ: Սսկված: Սսկված: Համակ ուշադրությամբ: Քիչ անց դավադրաբար դեպի ինձ եկող քայլերի ձայն: Դեպի ինձ: Թե՞ աղմուկ: Դեպի ինձ: Սիրտս կանգ առավ: Քարացավ: Կտրվեց: Հետո՝ ավելի ուժեղ: Սիրտս խփում է: Անակնկալ: Անակնկալ: Արագ-արագ: Կոկորդս սեղմվում է: Ցատկ: Հորս վրայով շատ լայն պիջակի թևքը մի վիթխարի թռչունի թևի նման իջնում է պարանոցիս: Խավարչտին անտառում: Մենակ: Իմ ականջաբարձն էլ այդ տարիներից: Նա էլ այս ականջաբարձի նման: Նա էլ սրա նման դեղնած կոճակներով, բերանը փակած: Այն ժամանակ

ինձ հետ էի նույնացնում ականջաբարձը: Նա էլ էր փոքր: Ես էլ: Ես՝ իմ ծնողներից կախված: Նա էլ հայր բարձից կախված: Ինչո՞ւ հայր բարձ: Չգիտեմ: Այդպես էի պատկերացնում: Ծիծաղելի նմանություն: Ավագ հայր բարձն ու իր որդին՝ ականջաբարձը: Մեկը մյուսի հետք ու հետագիծ: Քթից-պնչից ընկած: Շարունակության զգացողություն՝ նրանց նմանությունից ու միասին լինելուց: Անընկալելի հույս առ այն, որ ժամանակի հետ ես ու ականջաբարձն էլ կմեծանանք, երկուսս էլ միաժամանակ հերոսներ կդառնանք ու մեր որդիների համար կդառնանք ամենակարող, խաղաղ պաշտպաններ: Հույս՝ մութ սենյակում: Հույս՝ մութ սենյակում: Ես ինձ մենակ չեմ զգում: Այստս մի քանի անգամ հպում-անցկացնում եմ ականջաբարձի վրայով: Ձեռքիս մեկը՝ վրայից, մյուսը՝ տակից եմ անցկացնում, որպեսզի ավելի մերձ զգամ նրա մոտիկությունը: Դող: Հիշողությունից: Ո՛չ: Հիվանդանալուց առաջ: Հիվանդանում եմ: Կհիվանդանամ: Գրիպ: Գրպանից՝ թաշկինակ: Կհիվանդանամ: Քթին մոտիկ: Ինձնից դուրս եկող գրիպի բացիլ: Շունչս բացվեց: Օդին թուլացրեց քթոսկրիս ցավը: Բութ

ցավ է: Շիշ: Բաժակ: Մինչև վերջ: Շրթունքների մոտ: Երկու մեծ կումով: Ծանր է ներս գնում: Մի պատառ: Կտորտանքներ սեղանին: Սխտոր: Չեմ ուզում: Հայացք՝ փողոցին: Պիտի գնամ: Ամպամած, մառախլապատ առավոտը լուսացել է «պիտի»-ով: Լեյլան: Մական: Դարեջանը: Հացի փող: Ջիպ: Կամաց: Շատ կամաց: Երևի անծանոթը տուն է փնտրում: Ծանր-ծանր անվադողերի վրա: Ջիպն այն օրն էլ անցավ: Այն օրն էլ ծանր-ծանր անվադողերի վրա: Որ հանկարծ չշրջվի: Երբ անցավ, ես սալահատակին ընկած մարդ տեսա՝ զինվորական բատինկաներով՝ կապերն արձակած: Անցա: Հեռացա: Ո՞ղջ, թե՞ մեռած: Չգիտեմ: Ինչո՞ւ հեռացա: Խոնավություն: Խոնավություն: Հետո շուռ եկա: Բայց մինչ այդ էի հեռացել: Ջիպը կանգ առավ: Նայում եմ: Նայում եմ: Հետո նորից ծանր շարժվեց: Դանդաղ: Ծանրորեն: Հայացքը հետևում է: Իմ հայացքը: Աչքերը հառած: Հետևում է: Հիշեցնում է: Ի՞նչ է հիշեցնում: Հա՛: Հիշում եմ: Եվ կամ ինչպես՝ չեմ հիշի: Անպայման պիտի հիշեմ: Շոգենավ՝ ծովում: Շառագունած ամպեր: Կարմրի մեջ մխրճված մռայլ, մռայլի մեջ՝ կարմիր: Մի թեթև էլ

կանաչ քսված: Երկնքում: Թույլ կանաչն ավելի է սրում սև-կարմիր ամպերը: Ծովը՝ մուգ կապույտ: Երկու-երեք տեղ: Ծովն էլ է խփում մուգ կանաչի: Որպես խոշոր բիծ՝ խառնվել է նաև ցեխագույնը: Ծովի խորքում ծնված ու մակերևույթին հանգրվանած դարսեդարս, խիտ-խիտ ալիքներ: Ալիքներից բռնած ճերմակ փրփուր: Ճերմակ փրփուր: Ահա երևաց մի ճայ: Կորավ: Ես՝ զառիվայրին: Մենակ: Աչքս՝ շոգենավին: Շոգենավը բարձրանում է: Ալիքից գլորվեց: Իջավ: Հեռանում է ինձնից: Անձրևում է: Անձրև: Հոնքերիցս իջնող անձրևի կաթիլը չի թողնում, որ աչքս թարթեմ: Այտոսկրերիս՝ անձրևաշիթեր: Պարանոցիս: Ականջիս մոտ: Ականջիս մեջ: Որդի նման ողջ կաթիլ: Շարժվող: Թաց: Պլաստան փորով լողացող: Ճայթյուն: Հրագույն: Ինչպե՞ս: Սպասում: Բուռ՛՛՛ուխխխխ: Բուռ՛՛՛ուխխխխ: Անպայման կլինի: Անկարելի է, որ չլինի: Ինչ-որ վատ բանի: Նախանշան: Որպես ավարտ: Չարագույժ: Հայացք՝ շոգենավին: Շոգենավը վեր է ելնում: Ալիքը գլորում է: Քշեց: Իջավ: Հեռանում է ինձնից: Վայր ընկավ: Ասես ձոր գլորվեց: Որպես թե՝ ծովում ցեխագույն մի փոքր բիծ: Ծովը

հատած: Ծովին խառնված: Ձոր: Ձորի միջով՝ գետ: Աչքի պոչով զգալի: Փոքր էր: Հոսում էր դեպի ծով: Ցեխագույն դարձած: Փրփրած: Ժամանակ առ ժամանակ փլվող հողը՝ շառաչյունով՝ դեպի գետ: Շառաչյունի ձայնը՝ որպես երանգ մյուս ձայներին: Անձրևի ձայնն էլ որպես երանգ: Ալիքներինն էլ: Ամպերում տարուբերվող թռչունների չուն ևս՝ ամպերի մեջ դատապարտված: Ձառիվերներից՝ փողրակներ, որոնց մեջ նորածին անհամար վտակներ են սուրում դեպի վարարած գետը: Լանջի վրա ծառ է կախված: Մի տեսակ ծռմռված, այլակերպված: Արմատով հանդերձ, ատամի նման միանգամից աճած ու տգեղ, այլակերպ: Այնուհետև՝ շառաչյունով՝ դեպի գետ: Վարար շռինդով: Գետը գրկում է ծառին, առնում իր մեջ: Հետո դուրս է շպրտում: Տանում է: Կորցնում: Գետը բերում է նաև դիակներ: Աստուների: Անասուների: Այս ու այնտեղ՝ մոլեգնած, կատաղած ջրի մեջ՝ գլուխներ: Նպատակամուղ: Ձեռքեր: Վեր պարզված սմբակներ: Ուռած-փքված մերկ որովայններ: Հայացք՝ շոգենավին: Շոգենավը՝ հեռվում: Ինձնից հեռու է: Ծովի մեջ՝ հոգնաբեկ հավք՝ երկնքից պոկված,

երկնակախ: Գահավիժող: Մի հարվածով պայքարած ու հետո քարացած: Ծանր-ծանր՝ դեպի ծով: Պայքարի վերջին փրկագինը: Թևածալ: Այնտեղ էլ: Այստեղ էլ: Երկուսը միասին: Վերջին փրկագնին ուղեկից՝ վերջին փրկագին: Շոգենավը գլորվեց ալիքի վրայով: Իջավ: Հեռանում է: Փրկագնի հաճախականություն: Ակնասևեռ: Դատապարտվածության մեջ՝ դատապարտվածություն: Շոգենավը՝ հեռվում: Հեռանում է ինձնից: Ապահովության զգացողություն: Տանը: Հանգիստ: Խաղաղ: Սրտամոտ: Հեռանում է: Վարձք: Փրկություն: Աստված: Հեռանում է ինձնից: Հայացք: Ուղեկցում: Հեռանում է ինձնից: Հայացք: Իմ հայացքը: Ակնասևեռ հայացքն է ինձ հիշեցնում: Հայացք փողոցին: Ձմեռ: Կամուրջ: Ծառեր: Թաց ասֆալտ: Ջիպ: Անցավ: Հարազատ, սրտամոտ զգացողություն: Այսպես հանկարծակի ձեռքիցս թռած: Կորավ: Անհետացավ: Հեռու է: Անդրոն: Անդրոյից հարազատության պակաս զգացի: Անդրոն: Այն ե՞րբ էր, որ հանդիպեց ինձ ու Վախոյին: Հա՛: Երբ գնում էինք չոլախ Նանայի մոտ՝ մեր միսը վաճառելու ու երբ դրանից առաջ Մաքսիմեի ընկերոջ

սրճարանում էինք քարշ գալիս՝ հոգի վաճառելու: Անդրոն: Մեր դասարանցի Անդրոն: «Ռուսթավելի» մետրոյի մոտ: Ռուսթավելի: Ռեմբրանտ: Ռախմանինով: Ռոլան: Ռեյգան: Ռեպին: Ռոսսինի: Ռաստրոպովիչ: Ռուրկի: Ռինգո: Բիթլզներ: Մեր շատ սիրելի խումբը: Սերունդ: Սերունդը սերնդացել ու սերնդացման մեջ սերնդացնում է սերնդականներին: Նորից՝ Նանան: Սերունդը սերունդ է դարձել: Վախոն ինձ զանգեց: Արի՛, ասաց, պետք ես: Ու ընկալուչը դրեց: Վախոն: Տամուկ աչքեր: Ուռած ակնախոռոչներ: Ընկճվածություն: Աչքերիս նայել չի կարողանում: Պիտի դեն նետեմ՝ ասաց, կմեռնեմ, բայց դեն կշպրտեմ: Երկու օր անընդհատ ողբում էր: Նստած էր կռացած: Օրորվում էր: Նայում էր հատակին ու տնքում էր: Քրտնած: Քրտնքի մեջ կորած: Պառկում էր: Պառկած: Մի կերպ ննջում էր: Հետո նորից աչքերը բացում: Վեր էր կենում: Քայլում սենյակում: Քրտինքը վրան: Քրտնքի մեջ կորած: Ձեռքը բռունցք անում՝ պատին էր խփում: Ցավով ցա՛վ էր հանգստացնում: Նորից էր նայում: Հատակին: Նվում էր, տնքում, հեծեծում: Ճոճվում էր: Վեր էր կենում: Քրտինք:

Քրտնքի մեջ կորած: Վեր էր կենում: Ջուգարանում: Սրտխառնոց: Քրտնքոտ: Քրտնքի մեջ կորած: Ձեռքը բռունցք անում՝ պատին էր խփում: Ցավով ցա՛վ էր հանգստացնում: Քրտնքի մեջ կորած: Ճոճվում էր: Երերում էր: Հատակին էր նայում: Երրորդ օրն արդեն երեսիս նայեց: Խմեցինք: Քնեց: Տեսքն ավելի լավ էր: Միառժամանակ քաշվում էր դուրս գալ փողոց: Հետո դուրս եկանք: Միասին: Ո՞ւր գնանք՝ հարցրեցի Վախոյին: Ուր որ գնում էինք մանկության օրերին,- ասաց Վախոն,- արի քայլենք Ռուսթավելիի պողոտայով ու Լաղիձեի ջրերից խմենք: Անդրոն: «Ռուսթավելի» մետրոյի մոտ: Ճաղատ է արդեն: Մազերը՝ բլանժե: Դաստակից կախ՝ «պեդեռաստկա»: Ի՞նչ կապ ունի այստեղ «տկա»-ն: «Պե-դե-ռաստկա» – սա ճիշտ ձև չի: Վախոն է այդպես ասում: Ես չգիտեմ անգամ, թե այդ «պեդեռաստկան» ընդհանրապես ինչի՞ համար է: Հա՛: Երևի կամ փաստաթղթեր դնելու կամ բջջայինի: Չգիտեմ: Չի հետաքրքրում: Կաշվե գոտիով կախում են դաստակից: Քայլելիս՝ դրանք օրորվում են: Դրա համար էլ մի տեսակ տարօրինակ են քայլում: «Պեդեռաստկայի»

ռիթմին հընթաց: Վախոն տանել չի կարողանում: Դրա համար էլ բարդ բառ էր դարձնում ու ավելացնում՝ «տկա»-ն: Անդրոն ու բլանժեն: Անդրոն ու իր դաստակից կախ «պեդեռաստկան»: Դեռևս սովետական իշխանության օրոք էր հասցրել Չեխիայից աղջիկ բերել: Դրանից հետո չեմ էլ տեսել: Այսինքն՝ ոչ էլ հետաքրքիր էր: Մի տեսակ անմարդամոտ տղա էր: Բայց դա չէր պատճառը, որ ընկերներ ունենալու ցանկություն չուներ: Ընդհակառակը: Այդ հարցին մոտենում էր բավականին գիտակ, կարդացած մարդու ըմբռնումով: Քաղաքագետի նման: Այո՛: Հենց այդպես: Քաղաքագետի նման: Եթե ընկերանամ սրա կամ նրա հետ, ինձ ավելի ապահով կզգամ: Մոտավորապես այսպես: Իրոք քաղաքագետի նման: Անդրոն ամեն կերպ ձգտում էր բարեկամություն անել Վախոյի հետ: Ինձ հետ էլ: Սակայն ինձ հետ այն պատճառով, որ ինձնից անցներ Վախոյին: Այո՛: Քաղաքական գործչի նման: Կեղծիք: Տհաճություն: Դյուրըմբռնելի: Համակերպվածություն կեղծիքի հետ: Ստիպված հետևում ես, թե ուր կհրավիրի քեզ: Ինքդ երեխա ես: Քեզ թվում է, թե դա հեշտ է: Բայց,

այնուամենայնիվ, տհաճ զգացողությամբ ես համակվում: Գիտես, որ կեղծ է: Սարքովի է: Իհարկե: Ամեն ինչ հաշվարկված: Նախօրոք մշակված ծրագիր է ներկայացնում քեզ: Գնանք խինկալանոց, ես փող ունեմ: Կամ՝ կինո գնանք, ես փող ունեմ: Կամ՝ ո՛ւր գնանք: Ոչ էլ տեղ կար գնալու: Ասենք՝ ձիարշավարան: Թեև երբեք չի առաջարկել ձիարշավարան գնալ: Ոչ էլ թատրոն: Զարմանք: Ողջունում: Նորից զարմանք, որը կրկին զարմանք չէ: Ուսին ձեռք զարկելով ասվող բառեր՝ գնանք ռեստորան: Ասում է Անդրոն: Փող ունե՞ս՝ ծիծաղում է Վախոն: Անդրոն չի ծիծաղում: Անդրոն փոխվել է: Մի տեսակ ինքնավստահ: Հավասարակշռված: Հասունացած: Վախոյի ծիծաղն այլ կերպ է հնչում: Նվաստացուցիչ: Հենց իրեն՝ Վախոյին նվաստացնող: Ինձ էլ: Ես սա զգում եմ: Անդրոն էլ: Սակայն Անդրոն չի ծիծաղում: Անդրոն փոխվել է: Ես ու Վախոն վաղուց չենք եղել ռեստորանում: Մենք քաշվում ենք: Ի՞նչ վերևից է Անդրոն դիմում մատուցողին: Միաժամանակ՝ իբրև թե քաղաքավարի: Միաժամանակ՝ խստաբարո՝ ի՞նչ ունեք: Իսկ այսինչ բանը չունե՞ք: Ինչո՞ւ չունեք: Լա՛վ, թող լինի այն,

ինչ կա: Ու շրջում է դժգոհ հայացքը: Ես զգում եմ, որ Վախոն ուզում է վարվել առաջվա Վախոյի նման: Չի կարողանում: Դրա համար էլ երևի հանդուրժում է շատ կոպիտ Վախոյին՝ էս ի՞նչ է, ա՛յ տղա, էս ինչո՞ւ ես էս բլանժեն թողել, կամ էլ՝ բա էդ «պեդեռաստկան» ինչո՞ւ ես ձեռքիցդ կախել: Վախոն «պեդեռաստկա» բառը շատ ընդգծված է ասում: Անդրոն աչքերով ժպտում է: Անդրոն հասկանում է, թե ի՞նչ է թաքնված այս կոպիտ վերաբերմունքի ետևում: Ես էլ եմ հասկանում: Վախոն էլ: Վախոյի կոպտությունը հնչում է որպես ծիծաղ: Անդրոն մեզ նկարներ է ցույց տալիս: Իր բնակարանը Պրահայում: Կնոջ հետ: Երկու դուստրերը: Վրացերեն չեն խոսում, բայց գիտեն, որ վրացի են: Հատկապես կրտսերը գիտի, որ վրացի է: Ի՞նչ է նշանակում՝ հատկապես կրտսերը գիտի: Զեմ հարցնում: Լռում եմ: Վախոն էլ է լռում: Հիմա մեծ մասամբ Անդրոն է խոսում: Լուսանկարչական ապարատների վաճառքով է զբաղվում: Լավ գործ է: Կայուն: Չեխիան շատ է առաջ գնացել: Ի՞նչ ասի, լեզվի պրոբլեմ էլ չունի, որովհետև չեխերենը բարդ լեզու չէ: Չեխիայում Արևմուտքը շատ

ներդրումներ է արել: Որովհետև Չեխիան Եվրոպայի սիրտն է: Առանց ներդրումների երկրի տնտեսություն չի զարգանա: Նրան բացարձակապես չի հետաքրքրում, թե ով է Չեխիայի նախագահը: Վացլավ Հավելը չի՞: Ես էլ եմ միանում նրանց գրույցին: Ժպտում է: Այո՛, Վացլավ Հավելն է, բայց բանն այդ չէ: Բանն այն է, որ մարդիկ իրենց գործն անում են լուռ: Այդ թվում՝ նախագահը: Նա էլ նույնպիսի քաղաքացի է, ինչպես և ինքը՝ Անդրոն: Ահա՛ թե բանն ինչ է: Իսկ ընդհանրապես սկզբից դժվար է եղել, իսկ հետո գնալով առաջ է գնացել: Լավ ընտելացել է: Հիմա հիանալի աշխատանք ունի: Նորմալ վարձատրություն: Բնակարան: Մեքենա: Կինն էլ՝ իր մեքենան: Մեծ աղջկան էլ է խոստացել, ու հենց հասնի Չեխիա, նրա համար էլ անպայման կգնի: Փոքրի համար դեռ վաղ է, թե չէ դա էլ մի պրոբլեմ չէ: Խմում ենք: Խոսում է: Շատ է խոսում: Աչքին ինչ ընկնում, դրա մասին էլ կարող է խոսել: Խմե՞լ: Քիչ է խմում: Բայց, այդուամենայնիվ, հարբեց: Շատ ուտելուց խուսափում է, որովհետև հակված է գիրության: Մարդ պիտի միշտ «ֆորմայի» մեջ լինի: Եվրոպայում արտաքին

տեսքին կարևորություն շատ են տալիս: Եթե «ֆորմայի» մեջ չես, վե՛րջ, հաշիվդ պարզ է: Բոլորովին այլ փոխհարաբերություններ են՝ գործնական, պրակտիկ: Բոլորովին այնպես չէ, ինչպես՝ Վրաստանում: Որտեղ միայն ուտելու մասին են մտածում: Չէ՛: Այնտեղ ուրիշ է: Իսկ ընդհանրապես, նրան այնտեղ էլ պետք եկավ վրացական «ժիլկան»՝ ջիղը: Շա՛տ պետք եկավ: Վրացին Վրաստանում բանի պետք չէ: Իսկ ահա արտասահմանում՝ ապրի՛ ու ապրի՛: Դե նրան էլ հարգում են: Վաստակել է այդ հարգանքը: Մի բանի անգամ վրացավարի է վարվել, հավանել են: Քեզ հատուկ դրսևորելու կարիք չկա, բայց ինքնատիպ կոլորիտ հանդես բերելն էլ չի խանգարի: Ինքնատիպ կոլորիտ: Միանշանակ: Տեսնես սա ի՞նչ է նշանակում: Չեմ հարցնում: Խոսում է: Հետո հայացքով փնտրում է մատուցողին: Մինչև հիմա որտե՞ղ է պատվիրած ուտելիքը: Սա ի՞նչ սպասարկում է: Ի վերջո, իրեն վիրավորված է զգում: Ոտքի է ելնում: Գնում է պարզաբանելու: «Պեդեռաստկան» թողնում է սեղանին: Հիմա սրա գլխին չտա՞մ՝ ասում է Վախոն ու նայում Անդրոյի ետևից: Անդրոն շուտով

վերադառնում է: Դեմքից երևում է, որ դժգոհ չէ: Էլի խոսում է: Էս ի՞նչ կրակ ու պատիժ է. վերջն էս երկրում խելքի չեկա՞ն: Դեռ օդանավակայանում զգաց, թե ինչ քաքի մեջ ընկավ: Բա մաքսայիններն ինչի՞ նման են: Անընդհատ ինչ-որ պատճառ են փնտրում էդ մուրացկանները: Բայց լա՛վ դաս տվեց: Բա չէ՞, կուլ տար, համբերեր: Անձնագիրը ցույց տվե՞ց: Էն էլ ո՞նց ցույց տվեց: Չեխիայի՞ քաղաքացի է: Բա չէ՞: Լավ տեղը դրեց: Բա դեղատնե՞րը: Ինչի՞ նման են այստեղի դեղատները: Որ մեռնի, էդ կրպակներից դեղ չի գնի: Բա օ՛դը: Մի՞թե կարելի է շնչել այս թունավոր օդը: Ի տարբերություն Թբիլիսիի, Պրահայում 10-20 անգամ ավելի շատ մեքենա է երթևեկում, բայց օդն այսքան թունավորված չէ: Այնտեղ վաճառում են նորմալ բենզին: Ես դրանց ցա՛վը տանեմ: Ա՛յ, հենց մենակ դրա համար: Չէ՞: Լավ է՝ ժամանակին հասցրեց այստեղից հեռանալ: Կամ քաղաքն ինչի՞ նման է: Կամ մարդիկ ինչի՞ նման են դառել: Ինչո՞ւ չեն թափում սեփական տան մոտ կուտակված աղբը: Սրա մեջ ի՞նչ դժվար բան կա: Սա էլ հո մեծ բան չէ՞: Այնտեղ՝ Պրահայում փողոցներն օճառով են լվանում,

իսկ այստե՞ղ... Բա էլ ո՞ւր էիր գալիս, բրշկվում էստեղ՝ ասում է Վախոն: Աչքերի խորոց խորքից, ինչ-որ տեղից մի նապաստակ նայեց թաքուն այդ պահին ու նորից կորավ: Անդրոն այլևս այն Անդրոն չէ, ուստի և իրեն նվաստացած է զգում: Ի՞նչ է նշանակում՝ բրշկվում... Դա ի՞նչ արտահայտություն է՝ բրշկվել... Ոչ թե բրշկվել է, այլ եկել է ծնողներին տեսության: Դու եկել ես ոչ թե ծնողներիդ տեսության, այլ նրա համար, որ քո նմանները քեզ լսեն, ու երբ դու վարկաբեկում ես այս երկիրը, բերանով ծը՛, ծը՛, ծը՛ անեն: Անդրոն ավելի է վիրավորվում: Անդրոն համարում է, որ իր հայրենիքը ոչ մեկից պակաս էլ չի սիրում: Դեռ ավելին, հնարավոր է, որ ուրիշներից էլ շատ է սիրում և հենց այն պատճառով է այսպես ճիշտն ասում, որ իր երկրի լավն է ուզում: Գիտե՞նք արդյոք ես ու Վախոն կամ մի ուրիշը, թե նա Պրահայում քանի՞ վրացու է օգնության ձեռք մեկնել: Չգիտենք: Սո՛ւս, տո՛ գանդո՞ն,- ասում է Վախոն,- դու իրավո՛ւնք չունես էս երկրի մասին էդպես խոսելու: Դու ոչ էլ էն մարդն ես, որ ինչ-որ մեկին օգնության ձեռք մեկնես: Անդրոն նորից է պատրաստվում ինչ-որ բան ասել: Վախոն

ձեռքը տանում է դեպի Անդրոյի բլանժեն: Մի փոքր դեպի իրեն է քաշում: Զենդ կտրի՛, քանի դեռ չեմ շոել էդ «պեդեռաստկիդ» մեջ,– ասում է Վախոն: Անդրոն լռում է: Հիմա արդեն Անդրոն նման է առաջվա Անդրոյին: Ինչո՞ւ: Որովհետև ծիծաղում է: Էս ո՛վ եք եղել, ա՛յ մարդ, էս ի՞նչ մարդիկ եք դուք... չէ՛, մենք փոխվող պտուղ չենք... անհնար է: Չէ մի չէ՛, քեզ նման փոխվեմ ու հրլը մի բան էլ բլանժե թողնեմ, ձեռքիցս էլ «պեդեռաստկա» կախեմ՝ ասում է Վախոն արդեն խաղաղ ձայնով, որովհետև իր դեմ տեսնում է առաջվա Անդրոյին: Հիմա արդեն նա կատակում է: Բայց էս ի՞նչ լավ կթու կով ե՛ս եղել դու, հա՛... Հա, բայց ես իմ հարազատ համադասարանցուն ո՞նց կթեմ: Ասում ու աչքերով ծիծաղում է: Անդրոն էլ է ծիծաղում ու նմանվում մանկութ օրերի Անդրոյին: Վախոն այնքան հաճախ է հիշատակում կթել բառը, որ հնարավոր է, որ այդպիսի բան մտքից անցնում էլ է... Անդրոն, այնուամենայնիվ, հին օրերի Անդրոն չէ: Բավակա՞ն է, յալլա՛, կորի գնա՛ այստեղից, ու էլի իր սրտով սիրած տեղում կլինի: Կեղծիք: Կեղծիք: Կեղծիքը հոգնեցնում է ինձ: Վախոյից էլ

Անդրոյից էլ: Վախոյից, որովհետև այս մասին հենց սկզբից էր մտածում: Անդրոյից, որովհետև նա ոտքից գլուխ է կեղծիք: Ճշմարտությունն ասաց: Կարծում եք՝ ճշմարտություն չէ՞ր ասածը, բայց մեկ է, կեղծ է: Զարմանալի բան է ստացվում: Անդրոն ճշմարտությունն ասաց, բայց Անդրոն ճիշտ չէ: Հա՛: Չէ՞: Մարդ արարածը սովորաբար այնպես վառված, այնպես զգացմունքով չի խոսում, երբ ինքն անձամբ չի տապակվել յուղում: Ասում են՝ յարեն տիրոջն է ցավ տալիս: Անդրոն ճշմարտությունը դարձրել է մատի փաթաթան, որպեսզի թոզ փչի մեր աչքերին: Իբրև թե մեզ ինչ-որ բան էր հասկացնում: Էլի ու էլի նույն սանձարձակ էմոցիայով: Իրավունք չուներ: Իրավունք: Իրավունքը մեծ բառ է: Ճշմարտությունն ասելու համար իրավունք պիտի ունենալ: Վախոն ուներ այդ իրավունքը: Թբիլիսյան պատերազմից հետո նա բախում ունեցավ իր համագվարդիականների հետ: Այդ շրջանում Վախոն տառապում էր անքնությունից: Ջղագրգիռ էր դարձել: Իսկ ջղագրգիռ մարդն, ինչպես հայտնի է, ամեն բառ հիվանդագին է ընդունում, ամեն արարքի էլ իր տալիս հագցնում:

Հրավիրել էին ջոկատի ժողովին: Ինձ էլ տարավ: Գնացինք: Կիրովի այգում էր: Պարզվեց, որ գվարդիականներին բատինկաներ են բաժանում: Նվիրեցին: Պոլիէթիլենի տոպրակի մեջ փաթաթած: Ես այս ռուսական բատինկաները պատից կկախեմ, որ հաճախ հիշեմ, որ վրացու վրա չպիտի կրակեմ՝ ասաց Վախոն: Ո՞ւմ մասին ես ասում, էդ փտածների՞՝ ասաց ջոկի հրամանատարը: Վախոն ձեռքով հարվածեց հրամանատարին: Հրամանատարն ընկավ: Հետո մեզ էլ ծեծեցին: Անզեն: Կրակոց չեղավ: Ոչ էլ դուբինկայով գլխին խփել: Ոտքերով ծեծեցին: Ծեծեցին ու գնացին: Գուցե այսօր արդեն քնել կարողանամ՝ ասաց Վախոն: Թեև, միևնույն է, չքնեց: Երկար ժամանակ տանջվում էր անքնությունից: Աչքերի տակ սևացել էր: Մի օր էլ ասաց՝ արի եկեղեցական կյանք վարենք: Ես ու Վախոն քաղաքում: Հյուրանոց «Թբիլիսի»: Միայն պատերը: Սևացած: Քարուքանդ տներ: Փլատակներից գոլորշի է բարձրանում: Բուդ: Թանձր ու միգապատ: Արդեն որքան ժամանակ է այս տներն ավերված են, բայց բուդը դեռ բարձրանում է: Ավելի բարձր, քան տներն իրենք էին մինչև

ավերակ դառնալը: Ու սարերից բարձրացող վիթխարի ամպերի նման անընդհատ ձևափոխվում: Ահա՛, հիմա դևի է նման: Չարաղետ դևի: Փոխվում է ձևը: Բայց, այնուամենայնիվ, դևի է նման: Ավերակների մեջ մարդիկ այնպես լուռումունջ են գնում-գալիս, ասես պաշտամունքային ծես իրականացնելիս լինեն: Ես ու Վախոն մոտենում ենք եկեղեցուն: Մուրացիկներ: Խումբ-խումբ: Միանման դեմքերով: Որպես մի բիծ՝ ընդհանուր համապատկերում: Եկեղեցում ահագին բազմություն է: Պատարագ է: Ես ու Վախոն առաջ ենք անցնում: Մեր ձեռքերում մոմեր են: Այն ժամանակ նկատեցինք: Չնկատել հնարավոր չէր: Ինքն այնպես էր անում, որ իրեն նկատեն: Սարկավագը: Սարկավագը: Սարկավագը՝ սարկավագի հագուստի մեջ: Դեմքը՝ պզուկոտ: Բոյով: Երկար ու ծղոտագույն մազերով: Սակռակավոր: Բայց ասես նման է կռվելու պատրաստ կռունկի: Իր բարձրությունից այնպես է նայում ներքև, ասես կտուցով հարվածել է պատրաստվում: Շրջվում է դեպի քիչ այն կողմ կանգնած մի կնոջ՝ քալբատոնո՛, մոմը պիտի ձեռքի մեջ պահել: Կինն անակնկալի եկավ: Չկարողացավ

աչքերի մեջ նայել: Վերև նայեց: Սարկավագն անցավ առաջ: Հիմա անցավ ուրիշներին՝ սա ի՞նչ ողորմություն տվող է... Էլի առաջ անցավ: Հետո մոմ վառեց: Նորից առաջ անցավ: Գլխաշո՛ր էլ չեն ծածկում: Դոշերը բաց են եկեղեցի մտնում: Նայեց չորս կողմը: Տմբտմբացրեց գլուխը: Գնաց: Ժողովուրդն անմիջապես ճամփա տվեց: Առաջ անցավ: Նորից հայտնվեց: Գնում-գալիս՝ մեր շուրջն է պտտվում: Այնքան է պտտվում, ինչքան ժողովուրդն իրեն հնարավորություն է տալիս: Դեմքը՝ խստահայաց: Սակռակի նման: Կտուցը՝ հարվածի պատրաստ կռունկի նման: Ինչ-որ մեկին հանդիմանեց: Երեխայական համբերությամբ ինչ-որ բան՝ բացատրեց: Գնաց: Վերադարձավ: Պարզ երևում է, որ դուրը գալիս է, որ ուշադրություն է գրավում: Մի տղամարդ հարցնում է, թե հանգուցյալի ո՞ր մասում պիտի դնել մոմը: Խաչի մոտ՝ պատասխանում է նա, խաչի մոտ: Ահագին մարդ ես, էդ էլ չգիտե՞ս: Տղամարդը գնաց: Սարկավագը խստաբարո դեմք ընդունեց: Էս ժողովուրդն ինձ կգժվեցնի: Հասարակ բանն ի՞նչ է, էդ էլ չգիտեն: Փոքրիկ տղայի բարդույթ, որին տվել են խելք բաժանելու

և անպատիժ մնալու հնարավորություն: Գնում է: Նորից է գալիս: Ամենուր է: Այստեղ: Այնտեղ: Ոչինչ աննկատ չի մնում նրա աչքից: Ես ու Վախոն մոմեր ենք վառում և եկեղեցուց դուրս գալիս: Մենք այլևս կարիք չունենք միմյանց հետ խոսելու այն մասին, որ այսօր չենք գա քահանայի մոտ ու չենք անցնի եկեղեցական կյանքի: Դա սուտ կլինի: Թողնենք գալիքին: Ավելի լավ կլինի: Հետո: Երբևիցե: Նա մնացել է առաջվա Վախոն: Ես էլ առաջվանն եմ մնացել: Մտորումի, գիտակցումի իրավունք: Իրավունքն իրոք մեծ բառ է: Սիրո նման: Խոհի ու մտորումի իրավունք միայն սերը ունի: Ճոճիմ է: Տափակ է: Երևի: Հետաքրքիր չէ: Սեփական մաշկի վրա զգացած: Նախկինների հասարակությունը զգացնել է տալիս: Գաղափարախոսի թափուր տեղ՝ նախկինների հասարակության մեջ: Այս տեղի համար պայքարում են շատերը: Կուսակցություններ: Հասարակական կազմակերպություններ: Տարբեր կրոնական խմբավորումներ: Ես՝ հեռուստացուցին սևեռված: Հեռուստացույցից դուրս նետվող ինքնավստահություն՝ սեփական ճշմարտության հանդեպ: Գժվել կարելի է:

Խենթանում եմ: Այսքան քարոզ: Այսքան քարոզաբանություն: Այսքան քարոզվող: Եվ ամենահետաքրքիրն այն է, որ ոչ մեկի քարոզածն էլ մի նշույլ, մի թիզ կասկած անգամ չի հարուցում: Ես հիշում եմ, որ նախկինների հասարակության անդամ եմ ու մի քիչ թեթևանում եմ, որովհետև գտնում եմ ինձ հետաքրքրող պատասխանը: Թեև խաղաղվելու ոչ մի բան էլ չկա, քանզի ոչ ոք չգիտի, թե որտեղ է այս պղտոր գետի պղտոր հունը: Ես գենետիկորեն քրիստոնյա եմ ու ժամանակ առ ժամանակ այն եկեղեցու ընդերքում եմ սփոփանք փնտրում, որն ինձ պահ են տվել իմ նախնիք: Ես գիտեմ, որ մեկը պատերազմներում սուր է ճոճել, մեկը՝ չարչարանքի մահով նահատակվել, ինչ-որ մեկն էլ եկեղեցական գիրքն է արտագրել: Եթե անգամ այս ամենը չի արել, ապա գոնե Սուրբ ծննդյանը բլիթ է հասցրել թխել ու իր տանն Ալելուիա երգել: Հետո Կարմիր ուրբաթին հավկիթ է ներկել, Զատկից հետո էլ գերեզմանոց գնացել: Ինձ մատուցեցին կարմիր ձու ու ասացին՝ դու գլորի, որդյա՛կս, քո վարձքը շատ է ավելի: Ահա այսպե՛ս մեծացած: Այս ամենի հետ կապված: Տատիս գուրգուրած

սրբապատկերից իմ մեջ տպավորված Աստծու պատկերը: Ինչպիսի աթեիստական հասարակության մեջ էլ մարդը մեծանա, նա, ի վերջո, Աստծու մասին է մտածում: Երբ Աստծու մասին եմ խորհում, ես անմիջապես տեսնում եմ տատիս գուրգուրած սրբապատկերից ինձ նայող դեմքը: Նրան եմ դիմում, ուստի և մտնում եմ այնպիսի եկեղեցի, որտեղ սրտով նման սրբապատկեր եմ տեսնում: Եկեղեցու շեմին կանգնած են մուրացկաններ: Նախկինների հասարակության մեջ մուրացկանները շատացել են: Նախկինների հասարակության մեջ ընդհանրապես մուրացկանի հոգեբանությունն է իշխում: Մարդիկ փնտրտուքի մեջ են: Չեն գտնում: Փնտրում են: Չեն գտնում: Ընկնում են հոռետեսության գիրկը: Նորից են սկսում փնտրել: Ի վերջո, ինչ-որ մեկը տեղ է տալիս քեզ: Նստեցիր: Հարմարվեցիր: Ճիշտ է, մինչ կհարմարվեիր, աղաչանք-պաղատանքով, կաշառքով ու եսիմ ինչով ճանապարհ անցար, ու աստիճանաբար տեղն ընկավ արժանապատվությունդ: Քանզի հիմա էլ հայտնվեց քեզ խնդրող: Եվ այսպես: Այս պտուտաձիրում: Այս շրջապտույտում: Ամենօրյա

այս համապատկերում: Ո՞վ է նա: Նա նրա ի՞նչն է: Ի՞նչ կարող է տալ: Կամ ի՞նչ կարող է վերցնել: Ի՞նչ տեսանկյունից մոտենանք: Ինչպե՞ս անցնենք, որ մի բան էլ մեզ ողորման: Այո՛: Այս առօրյա համապատկերը կեղծիքի նման նամշահոտ է: Հոգիներն են նամշած: Դատարկապորտ երեսպաշտությունից: Երբ շատ եմ հոգնում, ես եկեղեցու ընդերքում եմ գտնում իմ հանգստությունը: Թեև մինչև եկեղեցի մտնելս, պիտի դիմանամ մուրացկանների հայացքներին: Նախկինների հասարակության մեջ ակնառու մուրացիկներ: Հո միայն փող չէ, որ նվիրում ես: Դու նաև հավատ ես ներարկում, որ ինքը՝ այս մուրացիկը, այն մյուս մուրացիկից, ում կողքին կանգնած է ինքը, ավելի լավ մուրացիկ է: Այստեղ ամեն ինչ մակերեսային է, առերևույթ: Ըստ մեկնած ձեռքի պլաստիկայի: Դա էլ է աբվեստ: Դա էլ է ռիթմ: Պիտի ճկուն լինես: Ունենաս մշակված, խղճահարություն հարուցող ինտոնացիա: Մոլեռանդության աստիճանի կարողանաս ողորմելի մարդու դեմք սարքել: Դա քեզ կօգնի: Սա էլ է առևտուր: Քանզի նա էլ է քեզ ինչ-որ բան առաջարկում: Իր մուրացկանությունը: Իր

ունեցածն է քեզ ներկայացնում: Կարեկցանք առաջացնելու իր հմտությունը: Քո վրա ինչ-որ բան է ծախում: Վաճառում է այն, ինչը դու ի վիճակի ես առնել: Թեթրիներով: Խուրդա փողով: Մանրադրամով: Դու գնորդն ես: Նա վաճառողն է: Այս պլաստիկայով: Այս ոճով: Այս ձայնով: Այս դիմակով: Այս կերպ: Իսկ Նա առևտրականների հետ միասին սրան էլ է վոնդել: Կարող էր անել այսպես: Նա մարդու վերափոխված Աստված էր: Իսկ ես մարդ եմ, ու մանրադրամը պիտի բաժանեմ ինձ լայն մեկնված ձեռքերի միջև: Նա ուներ վոնդելու իրավունք, քանզի ճշմարիտ սիրով էր սիրում նրանց: Ու երբ մի քանիսին ծոծրակից բռնած դուրս շպրտեց, ապա դրանով ոչ թե մնասեց մարդկանց, այլ փրկեց նրանց ընչաքաղցությունից ու կեղծիքից: Այո՛: Պատժելու, դատաստանի իրավունք էլ միայն սերը ունի: Ես դրա իրավունքը չունեմ: Երբ ես տեսնում եմ մուրացիկների աղճատված դեմքերը, մենակ մի բան եմ տենչում՝ շտապ դուրս գալ եկեղեցուց: Կամ՝ եթե մոտս մանրադրամ ունենամ, ապա գնեմ այն, ինչ նրանք են վաճառում: Որ ձեռք բաշեն ինձնից: Այո՛: Գլխիցս ռադ անեմ, հեռացնեմ:

Եթե փող չեմ ունենում, հայացքս մի տեսակ օտարոտի է դառնում: Երկու դեպքում էլ ուղեղս թելադրում է հեռանալ նրանցից: Թեև երրորդ ճանապարհն էլ կա՝ նույն մուրացկանության ճանապարհը. ես էլ նրանց նման պարապ-սարապ նստեմ և այն հույսով փող նվիրեմ, որ հետո հաշվի առնվի Նրա հետ հանդիպման ժամանակ: Այդպես է: Եվ ոչ մի դեպքում էլ սերը չէ, որ ուղղորդում է իմ վարմունքը: Դրա համար էլ չունեմ ո՛չ դատաստանի, ո՛չ էլ վրդովվելու, զայրանալու իրավունք: Երբ բացահայտ խարդախության հետ եմ առերեսվում: Նա մարդու կերպարանքով Աստված էր: Եվ հենց սիրո համար վրդովվեց: Ուստի չէր ստեղծում այն, ինչ ստեղծում էր: Ոչ թե փարիսեցիություն, այլ Հոբի անկեղծությունն էր խնդրում մարդուց: Աղետալի վիճակում հայտնված մարդու անկեղծությունը: Այն ամենը, ինչն իսկապես տեսավ, ցնցեցին ու դառնացրին նրան: Այո՛: Անկեղծություն էր խնդրում: Եվ միայն անկեղծությամբ էր արդարացնում իր արածը: Դրանից ավելին չէր ուզում: Ուզում էր այն, ինչ խլել էր ինքն իր ձեռքով: Հազարապատիկ ավելի էր պահանջում:

Անսահման ավելի շատ ու թանկագին անկեղծություն: Անկեղծություն: Նախկինների հասարակության մեջ: Անկեղծ լինել ու խնդրել կարող է միայն մեկը: Բոլորի անկեղծությունն անհնար է: Իսկ նախկինների հասարակությունը միավորումների հասարակություն է: Մարդկանց ուղղորդում է մենության վախը: Դրա համար էլ միավորվում են տարբեր կուսակցություններ ու հասարակական կազմակերպություններ: Գլխավոր գաղափարախոսի թափուր տեղի համար միմյանց հետ սուր պատերազմի մեջ խրված: Կուսակցությունների ռազմավարական նպատակներ: Արհմիությունների ռազմավարական նպատակներ: Տարբեր սոցիալական խավերի տարբեր ռազմավարական նպատակներ: Ամենուր մոլի, անհագուրդ ընչաքաղցություն: Ամեն մեկն ունի իր նպատակն ու իր ճշմարտությունը: Արդարությանը հետամուտ մարդն այստեղ գլուխ է կորցնում: Ընտրազանգվածի մի միավոր, մի բաղադրիչ: Եթե ոչ, ապա գոնե կուսակցության ակտիվիստ: Կամ էլ՝ կուսակցության առաջնորդ: Այո՛: Առաջնորդ: Խորապես համոզված իր ճշմարտության մեջ: Դրա համար էլ

կոկորդում լի մաղձ՝ չարամտորեն նայելով իր մրցակցին: Լավ է ճանաչում: Լավ է ճանաչում, որովհետև ինքզինքն էլ լավ է ճանաչում: Այն, ինչ ինքն է զիջել, նույնն էլ նա է զիջել: Անձնական: Մարդկային: Ջուտ իրենը: Անհատականը: Զիջել է: Ինչ-որ բանի կամ ինչ-որ մեկի շահերն է պաշտպանել: Հիմա միմյանց նեղում են: Իրար մրցակից են: Սա էլ: Նա էլ: Հեռուստաէկրանից: Գնա՝ գալիս եմ: Ինքնահաստատման բնազդ: Ինքնափրկության բնազդ: Ամենուր վախ է զգացվում: Յուրաքանչյուր հայացքի դիմաց քողարկված է վախ: Յուրաքանչյուր մարդու խոսքի դեմ վախն է աղաղակում: Մարդիկ՝ վախից չարացած: Աչքերը վախից մշուշված: Վախով վախ սերմանողներ: Գիտեր: Գիտեր, թե որտեղ է եղել ամեն մեղքի սկիզբը: Դրա համար էլ մարդուն ասաց՝ նայի՛ր երկնի հավքերին: Նայի՛ր արտի ծփանքին: Մի՛ ալեկոծվիր: Մի՛ ալեկոծվիր: Մի՛ վախեցիր: Կուռք դարձրած շահեր: Կամ կուռքի զոհասեղանին դրված քո ամենամեծ պարգևը, ինչով Նա քեզ շնորհել է քո սրտի զարկը: Քո՛ միտքը: Միայն քոնը: Քանզի մեկն ես: Ծնված: Կուզես մեղք անվանիր: Կուզես սխալ:

Սակայն, միևնույն է, քո կողմից ցավագին ապրված: Քո՛ կողմից: Այդ ցավն էլ հո դու ես: Դու: Մի հոգի: Մի մարդ, որն ի վերջո մեն-մենակ պիտի կանգնի Նրա առաջ: Նա չի խաբվի: Չես կարող խաբել Նրան: Չես կարողանա արդարացնել քեզ, որ դու մենակ չես եղել: Որ քեզ հետ ուրիշներն էլ կային: Որ շատերը կային քո նման: Նա քեզ դա չի ների: Չի խաբվի, որովհետև լավ գիտի, թե ինչն է քեզ կապել, միացրել նրանց: Ոչ թե սերը, ինչը Նա հենց ի սկզբանե էր մատուցում քեզ, այլ՝ վախը: Վախով միավորվածները միմյանց հայացքի մեջ վախ են մոռանում: Վախով միավորվածները՝ ընդդեմ վախով միավորվածների: Դեմքերին՝ փսլինք ու լորձ: Ճշմարտության անունով: Ով ումից ավելի առաջ կանցնի: Ո՞ւմ ձայնն է ավելի թափով: Ո՞ւմ կարծիքն է ավելի հանրամատչելի հեռուստադիտողին, որպեսզի ավելի խտանան իրենց շարքերը: Որպեսզի ավելի շատ ուժ հավաքեն: Որ հետո ոտքի տակ տան: Սրան: Նրան: Կամ ինչ-որ մեկին: Որպեսզի իրենց երբեք ոտքի տակ չտան: Երբեք քացու տակ չտան: Իրենք լինեն միավորված ու համախումբ: Միասին: Լինեն հանրամատչելի: Բոլորին

տեսանելի: Բայց երբ հասնում են այս ամենին, պառակտումն արդեն իրենց մեջ է սկսվում: Ճեղք: Անհնար է, որ բոլորը գոհանան: Անհնար է, որովհետև ոչ թե սիրով, այլ վախով ու ատելությամբ են միավորված: Շատ էին սպասում, քիչ ստացան: Մարդկային ընչաքաղցություն: Սկսվե՛ց: Գլորվե՛ց: Գնա՛ց: Նոր շրջապտույտ: Նոր տարաձայնություններ: Նոր դեմքեր, նոր պերսոնաժներ, որոնք իբրև թե նոր, բայց իրականում հին, հնամենի գաղափարներ են առաջ քաշում, նոր զգեստ հարմարեցնում հին կաղապարներին: Այո՛, հարմարեցնում, սակայն ժամանակավորապես, որովհետև նրանք էլ վախով ուղղորդված են ղեկավարվում: Եվ մի օր անպայման կերևա, որ հնամաշ է նրանց հագուստը: Մարմնի մերկությունն էլ: Մի օր անպայման ականջիդ խեցին կծակի նրանց սին խոսքերի դատարկությունը: Եվ ավելին՝ քեզ կցնցի նրանց փուչ հոգիների հետ հանդիպումը: Դատա՛րկ հոգի: Վախից ու չարությունից այնպես պարփակված, այնպես ներամփոփ, որ սիրո մի նշույլ շող անգամ չի տեղավորվի այնտեղ: Դատարկ հոգին երբեք չի դիմի իր երկրին այնպես, ինչպես

մի օր նա, այն մարդն ասաց. «Իմ լա՛վ հայրենիք, ինչո՞ւ ես տխուր»[2]: Հենց վախից չարացածները դրդեցին նրան օր ծերության կուսակցություն ստեղծել: Միաձայն իրար անցան, արձագանքեցին: Միասնաբար առերեսվեցին: Իրենց կարծիքով՝ ամենավտանգավոր հակառակորդի սիրով լի սրտին: Դեմ գնացին իրենց սիրով միավորել ցանկացողին: Աչքերը սիրով լայն բացած այն մարդուն, որն իսկապես ուներ զայրանալու և պահանջելու իրավունք, քանզի նրանց նման էլ սարսափահար էր, որ արտաքսված է Հայրական դրախտից: Իմ սերը չբավարարեց ու դրանից ուժասպառ, նախկինների հասարակության անդամ դարձա: Հիմա նստել եմ բազկաթոռի մեջ և երկու միմյանց հակառակորդ քաղաքագետների շաղակրատանքի վրա եմ ժամանակ սպանում: Շշմեցուցիչ ինքնավստահություն՝ առ սեփական ճշմարտացիությունը: Ճիշտ է: Շատ ճիշտ է: Չափազանց ճիշտ է: Սա էլ: Նա էլ: Եթե անդունդի եզրին կանգնած հայրենիքը, ազգն ու երկիրը փրկի, ապա միայն սրա

2 Սա Իլիա Ճավճավաձեի հայտնի արտահայտությունն է, Իլիան է ասել (ծնթ. թրգմ.):

կուսակցությունը կփրկի: Թեև ո՛չ: Ներո՛ղ եղեք: Անդունդի եզրին կանգնած հայրենիքը ոչ թե այս, այլ ա՛յն մյուս կուսակցությունը կփրկի: Ոչ էլ նրա: Չէ մի չէ՛: Նրա՛: Բարբաջանք: Բարբաջանք: Այս բարբաջանքին ունկնդիր ու ակնդիր մարդն ուզած-չուզած ինչ-որ մեկի կողքին է կանգնում: Այս պահից էլ նա դառնում է պոտենցիալ ռազմավար: Ընտրազանգված-էլեկտորատի մի միավոր: Մի բաղկացուցիչ մաս: Սա նրանք էլ գիտեն՝ առաջնորդները: Փոքրից սկսում, մեծ են ուզում դառնալ: Դրա համար էլ քինոտ են նայում մրցակցին: Կոկորդի մեջ սեղմված արցունք: Կամ սպառնալիք: Ով ինչպես կարող է: Կամ՝ վերամբարձ հեգնանքով: Վերևից նայող: Ով ինչպես կարող է: Պայքարի ինչ զինանոցի որ տիրապետում է: Ինչպես կհաջողվի: Անբարո կայսրության ընդերքից ակունքված գետ: Փլուզվող հողից ցեխագունացած: Դիակներ է բերում: Այս ու այնտեղ տղամարդու գլուխ է երևում: Ինչ-որ մի ձեռք: Ծերացած, մերկ որովայն: Ստից դեպի սուտ: Վախը սուտ գիտի նաև: Վախ: Վախով ղեկավարվողներ: Վախից չարացածներ: Վախից ընչաքաղց դարձած: Գնա՛, քանի դեռ

ժամանակն է: Գնա՛, այլապես մի ուրիշն էլ է քո նման վախեցած է և կարող է առաջանցել քեզ: Գնա՛, այնտեղի՛ց հավաքիր բերք, որտեղ չես ցանել: Այսպես է ընդունված նախկինների հասարակության մեջ: Անանմուսություն չեն համարի: Ընդհակառակը՝ հզորությանդ կվերագրեն: Ո՞վ է ավելի հզոր: Ով արդեն հասցրել ու հիմա արդեն յուրային է: Անհասանելի է այլոց: Նստած է՝ ամուր զենք ու զրահով, պաշտպանիչ հագուստով: Քեզ է նայում ճշմարիտ աչքերով ու քեզ խրոխտ խոսք ասում: Սուտ-կեղծիքի ճշմարիտ աչքեր: Սուտ ու կեղծիքի կողմից փնտրված, գտած անհրաժեշտ բառեր: Սա նրանով է շահեկան, ինչը ձեռք բերել իր խարդախությամբ: Նա, ով առերեսվում է այս բանին, չի բավարարվում նրանով, ինչ ձեռք է բերել է իր խարդախությամբ: Պղտոր գետ: Դարձյալ պղտոր: Փլուզվող հողից ցեխագույն դարձած: Մարդ: Մարդիկ: Այս ու այնտեղ դուրս պրծած գլուխներ: Ջրից՝ սպառնալից դուրս ցցված ձեռք: Դիակի մերկ, ուռած որովայն: Նոր պետություն՝ աշխարհի բարտեզին: Ծնկները՝ դեռ թույլ: Դրսի աչքերին՝ լավ պատառ: Տարբեր պետությունների

կենսական շահեր, որոնք միջօրեականների պես սնում են նրան: Գոտիների են բաժանում: Ըստ ուղղանկյունների կամ քառանկյունների: Հավեսով պատառներով: Դանակ-պատառաքաղով: Դանակ-պատառաքաղով: Ցավ է տալիս ինձ: Ցավ: Ցավում է: Ցավ: Ցավն է ցավում, քանզի սուր է: Ազգային էներգիան՝ նարկոզած ագահությամբ, փոխադարձ ընդդիմությամբ, նիհիլիզմով: Երկնքից կաթսաներով թափվող հայհոյանքներ մոր հասցեին: Մինչդեռ դու՝ անկարող: Անկարող: Անկարող, քանզի ներսում, քո երկրում վախով ես կառավարվում: Տարբեր կուսակցությունների ռազմավարական շահեր: Վախով կառավարողներից անպակաս ամբարտավանություն: Անգործության մատնված ժողովուրդը՝ մեծ քաղաքականության մեջ: Հակառակ դեպքում՝ բանվորական «բիրժայում»: Ծանրությունից քարշ եկող ձեռքեր: Ծանրությունից կքված մեջք: Տխուր, մտասևեռ աչքերից քեզ է նայում նախամարդու սովը: Ժուռնալիստի ուրախացած ձայնը՝ սկանդա՛լ, սկանդա՛լ, սկանդա՛լ: Մի կուսակցության ակտիվիստը ծեծել է մյուս կուսակցության ակտիվիստին: Ի՞նչ ես

ասում: Իսկապե՞ս ծեծել է: Հա՛: Էն էլ ո՞նց: Ներսում, խորհրդարանի ընդունարանում: Հետո՞: Իսկ նա՞: Նա էլ է խփել: Բայց, ասում են, սրա խփածն ուրիշ է: Ղոչա՛ղ: Ուրեմն լավ կռվող է: Հա՛, իսկապես զիլ է: Իմ լա՛վ հայրենիք, ինչո՞ւ ես այսպես տխուր: Այս բառերի հեղինակը առանց աշխարհի քարտեզի էլ լավ տեսնում էր, թե ում է դիմում: Այնպես, ինչպես մարդը՝ մարդուն: Դրա համար էլ լի էր կարեկցանքով: Դրա համար էլ քեզ հույս էր ներշնչում: Աստվա՛ծ իմ, որտեղի՞ց հիշեցի այս մարդուն: Դրա ժամանա՞կն էր: Աստվա՛ծ իմ, ես խեղդվում եմ այս գավառական տափակությունից: Ինչպե՞ս չեմ կարող մոռանալ: Օ՜, մայ գաղ: Հա՛: Չեմ կարող մոռանալ: Ի՞նչ նշանակություն ունի՝ ո՞ր դարից է խոսում հետդ: Կարևորն այն է, որ հետդ մարդ է խոսում: Մարդկային կարեկցանքի հույս է քեզ ներշնչում, ներարկում: Այնպես է քեզ նեղում-անհանգստացնում, ինչպես անձնական անարգանք-անպատվությունը: Այնպես են օտարացել, ինչպես այլ մոլորակից հասած ինչյուններ: Խեղդում են: Ժանտահոտ սկանդալների ձայներ են տարածել: Սոդոմգոմորացած աչքերի

թարթումներ: Օտար մեղեդուն հարմարեցված վրացական գորսալիզմ: Խռպոտ խոսափողներից: Անկարագրելի պատվախնդրություն՝ ամբիցիոզություն: Մենություն: Մենություն: Եկեղեցու խորքում մենակ՝ սրբապատկերի առաջ: Եկեղեցու մուտքի մոտ՝ մուրացկաններ: Քո վրա փլված կյանք: Ֆշշացող: Քսի տվող: Քիչ է մնում շորդ վրայիցդ հանեն: Կոկորդի մեջ՝ արցունք: Աչքդ ինձ ընկավ: Ինձ տեսար: Իմ ձայնից է կախված երկրի փրկությունը: Դու քո ձայնը տուր: Մնացածն իմ գործն է: Դու քո ձայնը տուր, թե չէ էն ոչուփուչն արդեն օգտվել է իմ կարգախոսներից և էլեկտորատի իմ բաժինը կարագի պես հարել: Ձայն տուր, եթե ոչ՝ քո մեղքով այս երկիրը կկործանվի: Իմ մեղքը: Իմ հանցանքը: Այնուամենայնիվ, համակարգն ինձ քարշ տվեց: Քարշ տվեց, որովհետև ուժերս չբավարարեցին: Թույլ դուրս եկա, չդիմացա, և դրան նպաստեց նաև այն, որ ջրապտույտ է, ու երբ մեկը քեզ տանում է, նա նաև կքաշի-կիրի: Հենց Թբիլիսիում խնայած երկուլարիանոցներով՝ դեպի էրգնեթի: Հետո, ետդարձի ճանապարհին՝ Թբիլիսի գալիս, բաժանում ես այս երկուլարիանոցները՝

մեղքի այս շատ փոքր թղթերը, որոնք և՛ քեզ, և՛ բլոկպոստերում պարապ-սարապ կանգնած ոստիկաններին վերածում են նույն համակարգի հարազատ զավակների: Կեղծիք: Կեղծիք: Կեղծիք: Այն ժամանակ էլ էիր այսպես կանգնած: Ոչ թե այսպես, այլ դրա համար: Կեղծիքին հետամուտ: Կեղծիքին հանձնված: Վերջին դատաստանի սպասման մեջ: Միալար անձրևի տակ: Մենակ: Աչքին անհասանելի անծայրածիր ծովում միակ շոգենավին աչքերդ հառած: Հենակետ: Իմ հենակետը հանուն գոյության պայքարն է: Այսպես վարվեցի: Նախկիններ հասարակության մեջ այս տեղն ընտրեցի: Ընտրեցի՞, թե՞ բաժին ընկավ: Ի՞նչ նշանակություն ունի: Կարևորն այն է, որ ես անկարող եմ: Ծանր է մեղքդ: Իմ լռության մեջ հիմա մեղքով ծանրացած մարդու հոգեբանություն է: Իսկ առաջ այլ կերպ էր: Ե՞րբ: Չգիտեմ: Վաղուց: Գուցե և մինչև իմ ծնվելն էլ: Գուցե հեռավոր անցյալում: Այո՛: Կար: Շարժում: Շարժում՝ լռության մեջ: Հեքիաթային գույների հորձանք: Հեքիաթային ձայների, որոնք վերածվեցին հոգնածության: Հայացքը՝ մշուշված: Պղտոր հայացքը՝ խեղճացած: Նստած է մի

տեղում՝ մտքերի մեջ խորասուզված: Ժամանակ առ ժամանակ ցնցվում է: Հենց հանդիպում է իմ հայացքին, գլուխը կախում է: Ոչինչ չի ասում ինձ, սակայն լավ գիտեմ, թե ինչ է ուզում: Մինչ հայացքն ինձնից կթեքի, 22ին է նայում, հետո՝ ինձ: Որպեսզի համոզվի, որ այս հայացքով իրեն չի մատնել: Արի՛, մի տանջիր քեզ: Քո ասածը չլինի, ես էլ եմ ուզում խմել: Շշից՝ բաժակ: Մինչև վերջ: Հայացքը՝ 22ին: Մի բաժակ էլ կլցնի: Ձեռքը՝ բաժակին: Շշին: Ծկա՛պ: Ո՛ղջ լինենք: Մո՛րս կենացը: Տղայի՛ս կենացը: Քեթինոյի՛ կենացը: Աստված հո՛րս հոգին լուսավորի: Տատիկ-պապիկների՛: Հորաքրո՛ջս ու հորաքրոջս ամուսնո՛ւ: Էնվերի կենացը: Լավ օղի է քաշում Էնվերը: Բաժակ՝ շրթունքների մոտ: Երկու մեծ կումով: Աչքերը՝ արցունքոտ: Գրպանից՝ թաշկինակ: Թաշկինակը՝ քթի մոտ: Բացված շնչառություն: Թաշկինակը՝ գրպանում: Սխտոր: Հաց: Հացը հին է: Պիտի գնեմ: Լեյլան: Մական: Դարեջանը: Այսօրվա առավոտը «պիտի»-ով է սկսվել: Դիրոյ էլ պիտի գնեմ: Կրակվառիչ էլ պիտի գնեմ: Ինչ-որ մեկն ուշադրությունիցս վրիպեց: Անտեսվեց: Անտեսվեց: Անտեսվեց: Սալահատակին՝

տղամարդ: Ողջ: Մեռած: Չգիտեմ: Ուրիշին էի հիշում: Սրան հիշեցի: Ո՞վ անտեսվեց: Անտեսվեց: Վախոն: Վախոյի՛ կենացը: Երևի կզանգի ինձ: Հոլանդիայից: Կամ Բելգիայից: Կամ Գերմանիայից: Վախոն: Ես ու Վախոն: Ծեծված-ջարդված դուրս եկանք Կիրովի այգուց: Ժամանակ առ ժամանակ ծիծաղներս գալիս էր, երբ տեսնում էինք միմյանց ծեծկռտված դեմքերը: Ճիշտն ասած՝ լավ պրծանք: Այն ժամանակ բոլորը ջղային էին: Հնարավոր է, որ մեկնումեկն իրեն չզսպեր ու կրակեր: Լա՜վ ծեծ տվին: Ո՞ւմ չեն ծեծել որ: Համարյա տասն օր՝ ապաքինում: Հաճախ խոսում էինք հեռախոսով: Ո՞նց ես: Դո՞ւ: Եսի՛մ, դո՞ւ: Կա՛մ էլի, իսկ դո՞ւ: Ու այսպես: Հետո Վախոյին հյուր եկան իր բանակային ընկերները: Ջանգեց, թե՝ արի: Գնացի: Սեղանին՝ անծեռնմխելի ուտելիք ու օղու շշեր: Վախոյի դեմքը համարյա տեղն էր ընկել: Եթե սրանց ներողությունն ընդունես, ուրեմն հարբելու կարիք կլինի: Խմեցինք: Գինովցած Վախոն հանեց ջոկատի հրամանատարի բատինկաները, մեխ գտավ, շնուրոկները կապեց իրար ու բատինկաները կախեց պատից: Բա տուն ինչո՞վ գնամ՝

հարցրեց ջոկի հրամանատարը: Չգիտեմ՝ ասաց Վախոն, իմ բատինկաները մնացին Կիրովի այգում, հո մի բանով պիտի հիշե՞մ, որ վրացու վրա երբեք չկրակեմ: Ջոկատի հրամանատարը ծիծաղեց ու հագավ Վախոյի հին, կրունկները մաշված կոշիկները: Տուն էլ դրանցով գնաց: Ո՛չ: Տուն մեքենաներով գնացին: Դրա համար էլ տրտնջալու հարկ չեղավ: Հաջող՝ ասաց Վախոն, երբ նրանց ճանապարհեցինք,– մինչև մյուս պատերազմն ինձ էլ չեք տեսնի: Ծիծաղեցին: Համբուրվեցին: Թեև Վախոն իրոք հեռացել էր նրանցից: Հետո եկան սովի ժամանակները, անհաց վիճակ, հացի հերթեր: Վախոն որոշեց մի մեծ գործ ձեռնարկել: Վախոն իրենից դուրս է: Հենց սովի ժամանակ էլ որոշեց ինչ-որ բացառիկ բան անել: Այդ ժամանակ էլ իմացավ, որ ինչ-որ մարդիկ վաճառել են իրենց երիկամներն ու լավ փող են շինել: Այս մտքից Վախոն կսկծու եղավ: Հիվանդացավ: Ես էլ էի ուզում երիկամ վաճառել, բայց ի տարբերություն Վախոյի, ոչ թե գործ սկսելու, այլ պարզապես գոյությունս պահպանելու, հեռուստացույց նայել կարողանալու համար: Հետո Վախոն ինձ ծանոթացրեց չոլախ Նանայի հետ:

Որտե՞ղ հանդիպեցինք: Մարջանիշվիլու մետրոյի մոտ: Մարջանիշվիլի: Մարատ: Մայակովսկի: Մենդելսոն: Միցկեվիչ: Մորիլիո: Մասնե: Մանդելշտամ: Մուսսոլինի: Միկոյան: Ի՞նչ կապ ունի Միկոյանը: Ծիծաղեցինք: Համաձայնվում ենք: Կամ Քեթինոն է զիջում ինձ: Կամ ես եմ զիջում Քեթինոյին: Քեթինոն ինձ ոչինչ չի ասում: Ես էլ Քեթինոյին ոչինչ չեմ ասում: Եվ կամ ի՞նչ պիտի ասեի: Գնում եմ երիկամս վաճառելու: Քեթի՞: Հա՛: Ծիծաղելի է: Վախոյի մեքենայի մեջ: Վախոն՝ ղեկին: Ես՝ նրա կողքին: Երևաց: Երկար վերարկուով: Գոռոզ-գոռոզ: Մեղրագույն ներկած մազերով: Աջ ձեռքին՝ բռնակով ձեռնափայտ: Վերարկուն հին էր: Դա հեռվից էլ լավ նկատելի էր: Վախոն դուրս եկավ մեքենայից: Պատրաստակամ դիմավորում է Վախոյին: Ժպտաց: Ձեռքը մեկնեց: Միասին եկան դեպի մեքենան: Բացեց ետևի դռնակը: Բա՛րև ձեզ՝ ասաց ու քաղցր-մեղցր աչքերով ժպտաց ինձ: Բարև ձե՛զզզզզզզզզ: Այս «զ»-ի մեջ լսելի է ցանկություն: Հաճելի տպավորություն թողնելու ցանկություն: Ինչ-որ թախիծ զգացի: Գուցեև չզգայի, եթե այսքան գոռոզավարի չլիներ: Հետո

մեջքով շրջվեց: Նստեց մեքենայի նստատեղին: Մի ոտքը՝ դժվարությամբ տեղավորեց, մյուսը՝ հեշտ: Ձեռնափայտը դրեց ծնկներին: Դուռը փակեց: Ժպտաց: Նորից թախիծ զգացի: Եթե այսքան խոշոր չլիներ ու լավ տպավորություն գործելու համար այսքան ջանադիր, գուցեև չզգայի: Մեղրագույն ներկած մազեր: Քաղցր աչքեր: Մեծ կոճակներով վերարկու: Կանաչ: Մի քիչ մաշված: Բացահայտ՝ հին: Վարվում էր կախեթեցու պես: Հաճախ էր օգտագործում «անձնավորություն» բառը: Նա այնպիսի անձնավորություն է, ո՛ր... Ես այնպիսի անձնավորություն եմ, ո՛ր... Կամ՝ ես ի՞նչ պատասխան տամ այն անձնավորությանը... Ո՞ր անձնավորության մասին է խոսքը... Ինչ-որ մեկի, որի անունը չոլախ Նանան չի ուզում ասել: Ինչո՞ւ չի ուզում: Ինչո՞ւ չի ասի: Որովհետև նա՝ այնպիսի անձնավորություն է, որի անունը չի կարելի բարձրաձայն ասել: Որովհետև չոլախ Նանան բազմաթիվ խորհրդավոր գործարքների մեջ է: Փողային հաշիվների մեջ: Դեռևս այն ժամանակ, երբ այս երկիրը հաստատված էլ չէր աշխարհի քարտեզին, չոլախ Նանան լայն

գործունեություն էր ծավալում Կովկասյան բիրժայում: Վարկ: Կուպոն: Դոլար: Տոկոս: Չոլախ Նանան արտասահմանում աշխատանք փնտրողների համար վիզաներ է սարքում: Չոլախ Նանան հիմա ամեն ինչ անում է, որովհետև մի անխիղճ-անաստվածի պատճառով ահագին պարտք ունի, իսկ չոլախ Նանան այնպիսի անձնավորություն է, որ ավելի լավ է մեռնի, քան թե պարտքը չվերադարձնի: Մեզ հետ ամեն ինչի մասին խոսում է երիկամից բացի: Վարկ: Տոկոսով պարտք: Այն ինչ-որ անձնավորությունների մասին, որոնց հետ նա ծանոթ է իր բոլոր գործարքների բերումով, ու նրանք բոլորն էլ չոլախ Նանային ահավոր հավատում են: Վախոն հիշեցնում է, թե ինչի համար ենք եկել: Ա՜ա՜, երիկա՜մ,- ասում է չոլախ Նանան: Մի տեսակ է ասում: Մի տեսակ չուզելով խոսել այդ մասին: Փողի շահավետ փոխանակում է առաջարկում մեզ: Դրանից հետո ամերիկյան սիգարետների մեծ պարտիայից է խոսում մեր հետ: Նա ինչ-որ տեղից կարող է ճարել շատ էժան գնով: Ես ու Վախոն ուզում ենք վաճառել մեր երիկամները: Ես ու Վախոն մի-մի երիկամով էլ կապրենք՝ յոլա

կգնանք: Իսկ ի՞նչ կարժենա երիկամը: Երիկամը,– ասում է չոլախ Նանան: Այդ մասին առայժմ ոչինչ ասել չի կարող մեզ: Բայց երևի իմացել է, որ յուրաքանչյուրիս կմնա հինգ հազար դոլար: Հինգ հազարով մեծ գործ չես սկսի: Ինչո՞ւ հինգ հազար: Բա ինչքա՞ն: Տա՛սը: Ո՛չ: Հենց՝ հինգ: Որովհետև այն անձնավորությանն էլ հո ինչ-որ բան պիտի մնա, չէ՞: Ով պիտի գլուխ բերի այս գործը: Ի՞նչ անձնավորություն: Սա արդեն չի՛ ասի Չոլախ Նանան: Որովհետև նա այնպիսի անձնավորություն է, որ... Ոչ թե մեզ չի վստահում... Վստահում է, բայց դե... Բոլոր դեպքերում, էլի՛... Բայց գոնե ա՛յն ասի չոլախ Նանան, թե որտե՞ղ են ուզում մեր երիկամները: Երևի գիտի, որ Մոսկվայի մասնավոր կլինիկաներում են ուզում: Մաքրություն: Տեր-տիրություն: Հոգածություն: Մնունդ: Վերակենդանացման շրջան: Հետն էլ յուրաքանչյուրիս՝ հինգ-հինգ հազար դոլար: Հինգին գումարած հինգ հավասար է տասի: Հետո չոլախ Նանան առաջարկում է աշխատանքի մեկնել արտասահման: Հոլանդիա: Բելգիա: Գերմանիա: Իսկ սրա համար չոլախ Նանային անհրաժեշտ է որոշակի գումար: Ես ու

Վախոն այն կողմ անցնելու փող չունենք: Ես ու Վախոն այս կողմում ենք սպասում փողի, որովհետև երկուսս միասին չորս երիկամ ունենք և պիտի գիջենք չորսից երկուսը: Ես երբեք չեմ մտածել, որ երիկամ ունենք: Երևի այն պատճառով, որ նա ինձ երբեք չի անհանգստացրել: Դրա համար էլ ինձ իշխեց տհաճ զգացողություն: Կարծես թե մեկին դավաճանում էի: Ո՞ւմ էի դավաճանում: Ո՞ւմ... Իմ երիկամին: Իսկ երիկամս ինձ երբեք չի դավաճանել: Իմն է եղել միշտ, հիմա ուրիշի՞նը պիտի դառնա: Այսպես անմեղ, այսպես անպրոբլեմ ու այսպես սուսուփուս: Այսքան հավատարիմ ու գործունյա, այսքան աշխատունակ: Հետո չոլախ Նանան թերթեց իր մաշված ծոցատետրը, մեր հեռախոսահամարները գրեց, հենց նույն տեղում գիծ քաշեց ու մանր տառերով գրեց՝ երիկամ: Մոսկվայի մասնավոր կլինիկա՞ պիտի գնաս, իմ լա՛վ երիկամ: Մաքուր, ճեփ-ճերմակ սավանի, մանրանիվ պատգարակի վրա պառկած՝ քեզ վիրահատարան են գլորում: Վիրահատարան: Նարկոզից մշուշվում են աչքերս: Հետո՝ հիվանդասենյակ: Հոգատար բուժքույրերի հսկողության տակ:

Հինգ հազար դոլարի սպասման մեջ: Կողքի շրջված պառկած: Բայց արդեն առանց երիկամիդ: Ես ու երիկամս իրար ձեռքով անում, մնաս բարով ենք անում: Ես ու երիկամս բաժանվեցինք որպես փայատերեր: Երիկամս ինձ պարտք մնաց հինգ հազար դոլար: Փակեց հաշիվն ու իր ճամփով գնաց: Երիկամս օրինապահ բիզնեսմեն է: Նա հո մենակ իմ հետ չփակեց իր հաշիվը: Նա հաշիվը փակեց նաև չոլախ Նանայի հետ, նաև այն անձնավորության հետ, որի անունը չի ուզում բարձրաձայնել չոլախ Նանան: Մինչև մեքենայի դուռը բացելը, մի անգամ էլ հիշեցրեց իրեն: Հանկարծ աչքերի մեջ ինչ-որ շող պսպղաց՝ տղանե՛ր, տղանե՛ր,– իրար անցավ միանգամից,– Վակեում 5 սենյականոց բնակարան ուզողի տեղ հո չգիտե՞ք: Չէ՛, քալբատոնո Նանա, մենք, մեր երիկամներինը չլինի, ես ու Վախոն էլ լուրջ բիզնեսմեններ ենք: Ու երբ պատրաստվում ենք երիկամ վաճառել, մակլերություն չենք անում: Դե լա՛վ, ուրեմն կապի մեջ կլինենք: Հեռախոսով: Հետո բացեց մեքենայի դռնակը: Դժվարությամբ առաջ քաշվեց: Ձեռնափայտին հենվեց: Ոտքը մարմնից դժվարությամբ առաջ

տարավ: Հետո նորից փլվեց մեքենայի փափուկ նստոցին: Ձեռնափայտին ավելի լավ հենված: Ավելի նպատակամետ, ավելի վճռական: Ավելի վստահ առաջանցումով: Մեծ կոճակներով վերարկուի մեջ մի տեսակ ինքնաբավ, գոռոզ տեսք ստացավ: Հետո կռացավ: Ժպտաց մեզ: Ձեռքով արեց մեզ և արժանապատիվ կաղությամբ անցավ փողոցը: Անցնում էր, և այդ պահին մի անբացատրելի լուռ թախիծ էր ուղեկցում նրան: Այդպես բարձրահասակ ու գոռոզ որ չլիներ, երևի չզգայի թախիծը: Ու վերջ: Կորավ բազմության մեջ: Վախոն մեքենան լարել չի շտապում: Ինչպես ես, նա էլ հայացքը հառել է փողոցին: Սա,– ասում եմ ես,– ինչպես երևում է, ինքն էլ հաճույքով կվաճառի իր երիկամը: Վախոն ասում է, որ նրան էլ կօգտագործի, ով իրեն ցույց է տվել չոլախ Նանայի մոտ տանող ճանապարհն ու նրան էլ կքաշի գործի մեջ: Այնուհետև Վախոն լարում է մեքենան: Մենք գնում ենք: Այդ կնոջը տեսնելուց հետո մի զարմանալի միտք է համակել ինձ: Ո՛չ: Ոչ թե միտք, այլ հավատ առ այն, որ ես ինչ-որ բան ունեմ: Որ ես ինչ-որ մի բանի տեր եմ: Որ իմ մարմնի մի որոշակի մասն

ինչ-որ գումար արժե: Խենթի հույս: Այո՛: Հնարավոր է՝ խելագարի հույս է, բայց հույսն, այնուամենայնիվ, հույս է: Հույսը յուրօրինակ բալասան է: Չնայած հենց սկզբից էլ պարզ էր, թե ում հետ գործ ունենք, բայց, այնուամենայնիվ, ինչ-որ բան փոխելու սպասումով եմ համակված: Հենակետ: Հենակետ: Հենակետ: Իմ հենակետն իմ ամենօրյա սպասումն է: Թեկուզև այն բանի սպասումը, որ մի գեղեցիկ օր էլ չոլախ Նանան կզանգի ինձ, քաղցր-մեղցր, ծորուն ձայնով կհարցնի որպիսությունս, ապա և կավետի, որ այն անձնավորությունն ամեն ինչ կարգավորել է: Ինձ չի էլ հետաքրքրի, թե ով է այդ անձնավորությունը: Կարևորն այն է, որ գործը գլուխ է բերել: Երիկամներ վաճառողների բազմահազարանոց բանակի մեջ ընտրել են հենց իմ ու Վախոյի երիկամները: Ինչո՞ւ: Որովհետև ես ու Վախոն իրոք աշխատունակ, առողջ ու անսակարկ երիկամներ ունենք: Երբ այսպես եմ մտածում, իմ երիկամը դեռ ինձ է պատկանում, դեռ իմն է: Դեռ նրան չեմ լքել: Դու հիմա ասա՛, թե խելագարի հույս: Բայց մեկ է՝ հույսը հույս է: Քեթինոն բզբզում է իր նոտաների տետրը, սակայն

ես զգում եմ, որ նա ալեհավաքի նման որսում է ինձնից ճառագայթվող հույսը: Նման պահերին Քեթինոյի հայացքը փափկում է, ու նա դառնում է առաջվա Քեթինոն: Այս երեկոն իմ ու Քեթինոյի՝ ձմեռվանից փախցրած երեկոներից մեկն է: Ինձ հիմա չի հետաքրքրում երկու հակոտնյա կուսակցությունների քաղաքական գործիչների շաղակրատանքը: Ես հողաթափերը չեմ շպրտում հեռուստացույցի ուղղությամբ: Չեմ հայհոյում: Դեմքս չեմ ծռմռում: Ես հիմա սրտանց ծիծաղում եմ: Ծիծաղում է և Քեթինոն: Որովհետև նա իմ ծիծաղից կեղծիքի նոտա չի որսացել: Քեթինոյի համար սա էլ բավական է, որ դրանով նմանվի առաջվա Քեթինոյին: Ինձ մինչև վերջ վստահող Քեթինոյին: Քեթինոյին հարցնես, նա հիմա էլ է ինձ ապավինում: Բայց ես գիտեմ՝ սա ուրիշ ապավինություն է: Ոչ թե ապավինություն, այլ ինչ-որ բան հավատացնելու միջոց: Այո՛, բատոնո՛, ոնց կասես: Լա՛վ: Թող այդպես լինի: Այդպես լինի, ու նույնիսկ այդպես է: Փլվում եմ բազկաթոռի մեջ: Հայացքս՝ հեռուստացույցին հառած: Հետն էլ լուռ հույս եմ ճառագայթում, որը Քեթինոն ալեհավաքի պես

անմիջապես որսում է: Մեկ էլ հանկարծ անհուսության կնճիռներով է ակոսվում ճակատս: Բայց դարձյալ՝ հայացքս հեռուստացույցին: Սրանց շաղակրատանքին: Սրանց անպատկառությանը: Անգթությանը: Իրենց ճշմարտության մեջ՝ խորապես համոզված և վերամբարձ կոմերիտական բառերի ոգևորությունից փայլող աչքերին հայացքս հառած: Հետո, երբ որևէ մեկը շատ է չափն անցնում, ես ամոթից կախում եմ գլուխս: Ուստի և ջղանությունից ձեռքով ճանկռում, ծռմռում եմ դեմքս: Այն օրն էլ ահա այսպես նստած էի, երբ Վախոն եկավ: Ե՞րբ էր: Վերջերս: Վերջերս: Հենց ներս մտավ, անմիջապես զգացի, որ մի բան կա: Մի տեսակ թափառ հայացք ուներ: Մի քիչ խոսեցինք: Վերջում պարզվեց՝ ինչու է եկել: Ընտրությունները մոտենում են: Քաղաքական մի կուսակցություն հետաքրքրվել է իմ անձով: Ո՞նց որ, Վախո՛: Իբր ես էդ ի՞նչ մի անձնավորություն եմ, որ... Ասում ու չոլախ Նանային եմ հիշեցնում: Դրանով ուզում եմ ասել, որ լեզուն ատամների տակ պահի: Վախոն իրար է խառնվում: Ջղայնանում է: Ի՞նչ կապ ունի այստեղ չոլախ Նանան: Այդ կնոջ հետ

հանդիպումից անցել է տասը-տասներկու տարի: Ինչո՞ւ չեմ կարողանում մոռանալ: Չոլախ Նանան հանձնվել է անցյալին: Աստծու ողորմածությամբ մեր երիկամներն էլ էլի մեզ հետ են: Մեզ են պատկանում: Եվ, ընդհանրապես, արդեն ժամանակն է, որ ինչ-որ բան փոխենք մեր կյանքում: Առաջ չես գնա, եթե որևէ լուրջ ուժի չապավինես: Էս տարիքի մարդիկ՝ մինչև ե՞րբ պիտի քարշ գանք էրգնեթիի տոնավաճառում: Ինքն արդեն ամաչում է դրանից: Մի՞թե ես կորցրել եմ ամոթի զգացումը: Ինձնից բեթար նա չի տանում էդ բոզությունը: Լավ, Վախո: Ասա՛, ախպեր, լսում եմ: Ասում եմ ես: Վախոն ինձ է նայում կասկածոտ աչքերով: Վախոյին թվում է, թե իմ կողմից ասած «ախպեր» բառի մեջ հեգնանք կա, ու դրանից շատ է վրդովվում: Մե՛ծ բան. մի երկու խոսք էլ ասեմ էն կուսակցության մասին: Մի քիչ էլ թող գովեմ, ի՞նչ կպատահի, որ... Մարդիկ, տե՛ս, ինչ բարի աչքով են նայում ինձ: Փող իհարկե չեն տա: Բայց գործի համար պետքական մարդիկ են: Թեև փող տալն էլ բացառված չէ, որովհետև նրանք փնտրում են ուղղակի լավ իմիջ ունեցող մարդկանց: Իմիջ: Իմիջ: Իմիջ:

Ո՞վ է քեզ սովորեցրել այդ բառը, Վախո՛: Վախոն ավելի է կատաղում: Նա ինձ ասում է, որ ես երեկվա մարդ եմ: Ավելին: Երեկ չէ առաջին օրվա: Ես համաձայնվում եմ Վախոյի հետ: Իսկապես երեկվա: Ո՛չ: Նախանցյալ օրվա: Դրա համար էլ ասում եմ՝ Վախո՛, ա՛րի կլինի դու ինքդ մի բա՞ն ասա էդ կուսակցության մասին: Վախոն ուսերն է թոթվում: Եթե իրենով լինեին հետաքրքրված, այդ դեպքում ինչո՞ւ կգար ինձ մոտ: Նրանք հենց գրող են փնտրում: Իսկ ինքը՝ Վախոն, կյանքում պատմվածք գրած չկա: Նա միայն կռվել է: Պատերազմել է: Իսկ նրանց ինչների՞ն է պետք ռազմիկը: Այն էլ այնպիսի ռազմիկ, որը պարտվել է երեք պատերազմում: Այդ կուսակցությունից մի ակտիվիստ կին է ինձ հիշել: Այդ քալբատոնին էլ գրող է: Վաղուցվանից է ինձ ճանաչում: Առաջ մեթոդիստ էր Արվեստի ստուդիայում: Հետո անգործ մնաց: Ու ահա սկսել է մելոդրամներ գրել: Հիմա մի հեռուստաընկերություն նրան պատվիրել է նաև սերիալներ գրել: Բայց կարևորն այն է, որ ինձ հիշում է ու համարում, որ ինձ նման մարդն աղբարկղերից կախվելու համար չի: Վախոն ասում է, որ իմ

բարօրությունը կախված է այս հանդիպումից: Վախոն շատ է փոխվել: Որովհետև նրա հայացքի մեջ ես երբեք չեմ նկատել այսպիսի կեղծիք: Ես հեռվից էլ լսում եմ նրա ձայնը: Ես մտածում եմ այն մասին, որ այս հասարակությունն իսկապես նախկիննների հասարակություն է: Եվ ականջիս մեջ ընկած բառն ավելի է ծակում: Աղբարկղի վրա: Աղբարկղի վրա: Աղբարկղի վրա: Կոլտնտեսային շուկայի դիմացի տարածքում՝ երեք միանման կրպակներ: Միանման թարեքներին՝ միանման ապրանք: Լեյլան: Մական: Դարեջանը: Ես՝ իմ մեծ մեշոկով: Ո՞ւմ մոտ: Լեյլայի կրպակում: Տրտնջում է: Տրտնջում է: Հայացքը՝ փողոցին: Երկաթի ոչ շատ մեծ աղբարկղ: Հենց այստեղ՝ մի վտիտ պառավ: Կանգնել ու ակնդետ նայում է արկղին: Սմքած: Սմքած: Զորուկ: Փնտրող հայացքը հառած աղբարկղին: Հետո ձգվում է: Կանգնում է ոտնաթաթերի վրա ու նայում աղբարկղի մեջ: Ձեռքն իջեցնում է վար: Չի հասնում: Բռնվում է աղբարկղի եզրից: Ու կախվում է: Թափահարում է ոտքերը: Սրտաճմլիկորեն ճարպիկ է այս ծեր կինը: Աղբահավաք մեքենան առավոտյան կմոտենա

երկաթե ոչ այնքան մեծ աղբարկղին: Աղբը կթափեն մեքենայի մեջ ու կտանեն Մուխաթգվերդիի աղբանոց: Վախոն: Վախոյի հին ժիգուլին: Արևախանձ, լերկ բլուրների համայնապատկերը և Մուխաթգվերդիի աղբանոցը: Ապակե կոտրտված բանկաներով: Հավի մսից պոկոտած ոսկորներով: Լրագրի մեջ փաթաթած հիգիենիկ փաթեթներով: Կորիզներով: Չուլուփալասով: Ձեռքերը պոկած, աչքերը հանած տիկնիկների խուլ լռությամբ: Երկաթե մահճակալների այսուայնկողմ ընկած ճաղեր: Հին լրագրերի «ծածանում»: Գաղջ, նեխած օդից գլխապտույտ օրորվող մարդկանց այսուայնտեղ դեգերումներ: Սերմնագռավների երամի՝ մենության զգացողություն ներշնչող կռռոցներով: Ես: Վախոն: Վախոյի հին ժիգուլին՝ խոր ձմեռվա այլանդակ ակունքի մեջ խրված: Ե՞րբ ծնվեց այս տեսիլքը: Տեսի՞լք, թե՞ երազ: Երևի մեքենայի մեջ, մինչև աղբակնոց հասնելը: Հա՛, մեքենայի մեջ քնած ժամանակ հյուրընկալեց: Խավարի հեռավորությունից լույս տվող: Ճակատագրի համառությամբ ուղեկցող, վիթխարի կենդանու ողնաշարին նստած փոքրիկ

շիկահավիկ՝ երկար կտուցով ծիտիկ: Այս ու այնտեղ անասունի միս: Նա էլ սպիտակ ու անզոր: Փորի մոտ՝ կախված մսով, ոտքերի մոտ էլ: Իսկ ծիտիկը նստած է: Ժամանակ առ ժամանակ ծիտիկը գլուխը թափահարում է: Երկարակտուց: Կարմրադոշիկ: Փոքրիկ: Հետո տեսիլքը չքվեց, և ես հայտնվեցի աղբակոյտի վրա: Ես: Վախոն: Վախոյի հին ժիգուլին: Վախոյի հին ժիգուլին և Մուխաթգվերդիի աղբանոցը: Թռավ սերմնագռավը, թռավ: Կռռաց: Տեղը փոխեց: Հայացքն անցավ սերմնագռավին: Մարդիկ: Մեկը նստել, սիգարետ է ծխում: Մյուսը քայլում է: Քայլում է երրորդն էլ: Դեգերում է: Գլխապտույտ գարշահոտից օրորվող, այսուայնկողմ դեգերող մարդիկ: Գլխանոցով բաճկոնով, քթին շարֆ կապած մարդը ձեռնափայտով քրքրում է աղբը: Ինչ-որ բան գտավ: Սկսեց տնտղել: Թողեց: Մեզ նայեց: Մեզ է նայում: Անծայրածիր, խոր ձմեռվա հատակին ընկած ջրաբույսերի պես ժլատ առաջ շարժվող: Մշուշի մեջ: Մշուշի մեջ: Մենք նույնպես: Մի բծով: Մշուշին հընթաց: Այն կողմում՝ մեքենա: Սպիտակ: Երկու կով: Մենք բոլորս՝ ձմռան հատակին: Մշուշի մեջ: Մշուշի մեջ: Մեզ:

Նստածը վեր կացավ: Սիգարետը շպրտեց: Գլխանոցով բաճկոնավորը նորից ձեռնափայտով քրքրում է աղբը: Այստեղ ի՞նչ գործ ունեինք: Վախոն նայում է աղբակույտին: Առանց աչքերը հեռացնելու աղբակույտից, պատասխանում է՝ դու չէի՞ր ասում, որ քեզ կտանեմ աղբանոց: Պատասխանում ու լռում է: Նայում է աղբակույտին: Հիշվում է: Հանդիպում այն քալբատոնիի հետ: Ի՞նչ էր անունը: Հա՛: Մաքսիմե՛: Իսկ ինչո՞ւ տղամարդու անուն: Դու մի ասա՝ մականուն է: Ճակատին՝ դրած ակնոց: Սև շալվար: Ոտքը՝ ոտքին: Մատների արանքում՝ բարակ սիգարետ: Սպիտակ վզով սվիտեր ու վզին ստեղծագործական հնարանքով փաթաթած վարդագույն շարֆ: Նիհար: Թեթև: Հաճախ ժպտում է: Այդ ժամանակ երևում են կնճիռները: Ակնանկյուններում: Անհարմար էի զգում Մաքսիմե անվանել: Ժպտաց: Կնճիռները պարզ երևացին: Լավ բան մտածեց Վախոն: Այո՛, լա՛վ: Այո՛: Ի՞նչ խոսք: Վերա թաղամասում: Մաքսիմեի ընկերոջ սրճարանում: Կանաչ մահուդապատ պատեր: Ոսկեգույն բռնակներ: Ինչ-որ կարմիր բան էլ եմ հիշում: Գուցե աթոռնե՞րը: Չգիտեմ,

բայց նախասրահում ինչ-որ կարմիր էլ կար: Մաքսիմեն մեզ ասում է, որ Վրաստանում մելոդրամներ գրել չեն կարող: Ինչո՞ւ չեն կարող գրել: Մուղամը չգիտեն՝ դրա համար: Մելոդրամային թեթևություն է պետք: Պարզունակ խարդավանք: Շատ սեր ու թեթևություն: Էս է ու էս: Ուղեղ մաշելու հարկ չկա: Կյանքն այնպես է, ինչպես որ է: Ինչպիսի՞ն է կյանքը: Ճիշտ այնպիսին, ինչպիսին որ կա: Ա՜հ՜հ՜: Այո՛: Թեթև աչքով պիտի նայես, և այն էլ բոպե առ բոպե, ու կթեթևանա: Ինչի՞ն նայենք թեթև աչքով: Ինչի՞ն ու... Ամեն ինչին: Վախոն ժպտում է Մաքսիմեին: Վախոյի դեմքին երբեք չեմ տեսել այսպիսի ժպիտ: Վախոն չի կարող այն Վախոն լինել: Երևի ես էլ ես չեմ, որովհետև համաձայնվում եմ Վախոյի հետ: Հիմա սրճարանում ենք: Կանաչ, մահուդածածկ պատեր: Ոսկեգույն բռնակներ: Ինչ-որ կարմիր մի բան էլ՝ նախասրահում: Սուրճ ու նարնջի հյութ են բերում: Մաքսիմեն տնավարի ժպտում է մատուցողին: Աչքերի անկյուններում՝ կնճիռներ: Ցանկություն ջահելի պես անկաշկանդ երևալ: Ստեղծագործորեն վզին փաթաթած վարդագույն շարֆ: Սուրճը քաղցր է:

Կոկորդում քաղցրով կանգ առած: Նարնջի հյութ եմ վրայից ըմպում: Սա էլ է քաղցր: Սուրճի սառը քաղցրությունը հարվածեց կոկորդիս: Ինձ թվում է, թե իմ ձեռքերը քաղցրությունից շիրոտվել են: Հիշում եմ՝ ձեռքով կպա ոսկերիզ բռնակներին: Երևի դրանք էլ քաղցր էին: Ինչո՞ւ: Ի՞նչ իմանամ: Այնուամենայնիվ, անհարմար եմ զգում Մաքսիմե ասել: Տեսնես ի՞նչ է խելքը փչել այսպիսի կեղծանուն դնել իրեն: Ժպտում է: Հեռուստասերիալն է մտածել տվել: Ո՞ր հեռուստասերիալը: Այ էն, որտեղ գլխավոր հերոսը Նիկիտան է: Հիմա եմ հասկանում՝ բանն ինչ է: Քալբատոնո՛ Մաքսիմե, դուք իրոք նման եք քալբատոնո Նիկիտային: Հա՛, նման է, չէ՞: Հա՛, ինչ-որ բանով: Իսկապես նման է: Վախոյի կասկածելի հայացքը՝ բա որ հանկարծ ինչ-որ մի բա՞ն: Սուրճը քաղցր է: Նարնջի հյութն էլ: Երկուսը միասին կանգ են առել կոկորդիս: Ձեռքերս էլ ասես շիրոտել են: Ինչո՞ւ: Չգիտեմ: Ինչի՞ եմ կպել: Չգիտեմ: Քաղցր է: Քաղցրի մեջ նստած սիգարետի հոտ: Ես ծխող եմ: Չի կարող պատահել, որ սիգարետի հոտն ինձ ջղայնացնի: Սակայն սա ուրիշ հոտ է: Քաղցրի մեջ նստած սիգարետի

հոտ: Ներծծված: Նա էլ է կպած, ասես սոսնձված: Հա՛, սոսնձված: Սոսնձված հոտ: Հնարավո՞ր է, որ հոտը սոսնձված լինի: Երևի հնարավոր է: Որովհետև այս սրճարանում այսպիսի հոտ է: Մաքսիմեի ստեղծագործորեն վզին փաթաթած շարֆը: Մաքսիմեի չարաճճի միտքը և էֆեկտորեն ընտրված գրական կեղծանունը: Երևի ընկերուհիների հետ բամբասելուց է այս գաղափարը ծնվել մեջը: Երևի ոգևորվել է իր հնարանքով ու գտածով: Սրամտությամբ: Հա՛, երևի: Մատների արանքում՝ բարակ սիգարետ: Ցանկություն՝ ստեղծագործության մասին զրուցելու: Այսպիսի անմիջականությամբ: Այսպիսի թեթևությամբ: Այսպես տնավարի: Հիմա ի՞նչ եմ անում: Ոչինչ չեմ անում: Ինչո՞ւ: Որովհետև: Ո՛չ: Այսպես չեն պատասխանում: Կմտածեն՝ անկիրթ եմ: Չգիտեմ՝ ինչու ոչինչ չեմ անում: Այսպես չի կարելի, մի քիչ թեթև է պետք նայել կյանքին: Չպիտի ասեիր այդ բառը: Ամեն ինչ այս բառի մեղքով է: Երևի Մաքսիմեի ճակատին դրված ակնոցն էլ, ստեղծագործորեն վզին փաթաթած վարդագույն շարֆն էլ: Մինչև մեր հանդիպումը

Մաքսիմեն կանգնած էր հայելու մոտ: Է՞ս հագնեմ, թե՞ Էն: Երևի սա ավելի հարմար է: Չէ՛: Էն: Հա՛, Էն: Սրա մեջ ավելի արտահայտիչ եմ երևում: Մաքսիմեի պես արտահայտիչ: «Էֆեկտնի»: Մելոդրամաների հեղինակի, ում բնավ անծանոթ չէ ինքնահեգնանքը: Ընդհակառակը: Գաղտնիքը բացվում է այն ժամանակ, երբ ինքն է հեգնում իր մելոդրամաները: Խելացի է: Հասկացավ, որ այս գործին անհրաժեշտ է թեթևություն: Հա՛: Երևի: Այն կուսակցության ակտիվիստությանն էլ թեթևություն է անհրաժեշտ, որի առաջնորդներն ինձ կրկին վերադարձնում են այնտեղ՝ միասնական, եղբայրական ընտանիք: Սաղավարտավոր զինվորները՝ թևնակների տափակ երեսով անխոցելի վահաններով՝ տղո՛ւ, տղո՛ւ, տղու... Մե՛կ, երկո՛ւ: Մե՛կ, երկո՛ւ: Մարդկանց կիսում են մեջտեղից: Իրարից: Հետո սրած վահաններով հատում են: Հատում են: Հատում են: Արյան հոտ եկավ: Նախասրահում՝ քաղցրի հետ մակարդված արյուն: Գիտե՞ս ինչ լավ մարդիկ են՝ հարցնում է ինձ Մաքսիմեն: Այո, գիտեմ: Գիտե՞ս, որ ժամանակը բուժում է: Հա՛, գիտեմ: Գիտե՞ս, որ նրանք ոչ մի կապ չունեին:

Հա՛, գիտեմ: Գիտե՞ս, որ հիմա գլուխդ թափահարում ես՝ ի նշան համաձայնության: Հա՛, գիտեմ: Գիտե՞ս, որ քաղցր սուրճը դեմ է առել կոկորդիս: Հա՛, գիտեմ: Գիտե՞ս, որ ճակատդ սառը քրտինքով է պատել: Հա՛, գիտեմ: Գիտե՞ս, որ այս կյանքին թեթև պիտի նայես: Հա՛, գիտեմ: Գիտե՞ս, որ Մաքսիմեի ակնոցն ընկել է հատակին: Հա՛, գիտեմ: Գիտե՞ս, որ վարդագույն շարֆի վրա բիծ է թողել բերանիցդ դուրս թռած սուրճի կաթիլը: Հա՛, գիտեմ: Գիտե՞ս, որ շփոթված Մաքսիմեն հա մի գլուխ կրկնում է՝ ոչի՞նչ, ոչի՞նչ: Հա՛, գիտեմ: Գիտե՞ս, որ սրճարանից հեռացրել ես ձմեռվա ցուրտը և օդը բռնել, պոկոտել ես ատամներով: Հա՛, գիտեմ: Գիտե՞ս, որ երեսը շիկնած Վախոն լարում է մեքենան և հարցնում քեզ՝ ի՞նչ պատահեց քեզ, տո՛ մունդռիկ: Ի՞նչ է պատահել ինձ: Ոչինչ էլ չի պատահել: Սուրճը շատ քաղցր էր: Նարնջի հյութն էլ: Սիգարետի ծանր հոտը նստում էր սրճարանի մահուդապատ պատերին: Ինչ-որ կարմրի վրա էլ: Ոսկեգույն, կլորավուն բռնակներին էլ: Բռնակներին չի կարող նստել սիգարետի հոտը: Հա՞՞՞: Հա՛, անհնար է: Այդ դեպքում չգիտեմ՝ ինչ է ինձ

պատահել: Կամ էլ՝ գիտեմ: Սրտխառնոցի իրավունքից օգտվեցի: Ես կշտամբելու կամ պահանջելու իրավունք չունեմ, բայց սրտխառնոցի իրավունք ունեմ: Վախոն լռում է: Ես էլ: Եվ հետո ես ինքս էլ չգիտեմ՝ ինչու եմ հարցնում՝ ակնոցը հո չկոտրվե՞ց: Ակնո՞ց ես փնտրելու: Ոչինչ էլ չեմ փնտրի: Օդի եմ ուզում: Օդի Վախոն էլ է ուզում: Մանրէազերծման համար: Մանրէազերծման նման: Հա՛: Այսպես ենք ուզում: Վախոն մեքենան կանգնեցնում է խանութի մոտ: Վախոն գնում է մեկ շիշ օդի: Պլաստմասե բաժակներ: Հաց ու երշիկ, որը հենց տեղում անմիջապես կտրատել է տալիս վաճառողին: Վախոյի մոտ էլի փող է մնում: Դրա համար էլ երկրորդ շիշ օդին ու մանանեխ է գնում: Վախոն փող չունի: Փող ես էլ չունեմ: Ես ու Վախոն նստում ենք մեքենայի մեջ: Դիդի Դիղոմի գնացող մայրուղու վրա կանգնեցնում ենք մեքենան և բացում օդու շիշը: Մաքսիմեի մեյմուն հե՞րն եմ անիծել՝ ասում է Վախոն: Աչքով է անում ինձ: Պլաստմասե բաժակը խփում իմ պլաստմասե բաժակին ու մի կումով խմում: Ես էլ եմ խմում: Հետո Վախոն ծիծաղում է: Հինգ դոլարանոց պոռնիկներից միշտ

սրտխառնուք եմ զգացել: Ասում է Վախոն: Հա՛, երևի դրա մեղքն էլ է: Չգիտեմ:Երկրորդ բաժակն էլ եմ խմում: Հացի վրա քսած մանանեխն ու երշիկն ենք ներս տալիս: Մանրէազերծումը սկսվեց, որովհետև ինչ-որ բան մաքրվեց: Վախոն էլ առաջվա նման ծիծաղում է: Թեև երրորդ բաժակից հետո կծկվում է և ասում՝ չեմ կարող ներս քաշել, չեմ կարողանում, կրկնում է նորից՝ երևի փախչենք-գնանք այստեղից: Հիմա դեպի ինձ է շրջում դեմքը: Ո՞ւր պիտի փախչենք, Վախո՛ հարցնում եմ ես: Միևնույնն է՝ ասում է Վախոն: Հոլանդիա: Բելգիա: Գերմանիա: Չէ՛: Ես ինձ այս երկրից բացի ոչ մի տեղ չեմ պատկերացնում: Պատասխանում եմ ես: Այստեղ հո լա՞վ ես պատկերացնում քեզ՝ հարցնում է ինձ Վախոն: Հա՛ ասում եմ Վախոյին: Այստեղ գոնե այն եմ զգում, որ մարդ եմ ես: Վախոն զարմացած ինձ է նայում: Երբ մարդու համար երիկամի վաճառքը ավելի հեշտ է դառնում, քան հոգու վաճառքը, սա նշանակում է, որ մարդ ես՝ ասում եմ ես: Վախոն ցուցամատը դնում է քունքին և ասում, որ ես գիժ եմ: Էս կյանքից բան չհասկացա: Քառասունին մոտ մարդ՝ երկրորդ կուրսի

ուսանողի գաղափարներով եմ ապրում: Հետո էլի ծիծաղում է: Մարդը, ծիծաղելով ասում է Վախոն, հենց սրանով էլ տարբերվում է կենդանական աշխարհից: Մարդու կենացը: Բաժակը բաժակիս է խփում: Հետո ակնդետ նայում է ինձ ու հարցնում՝ տեսնես եթե ակտիվիստ Մաքսիմեին գաղափարապես հակադիր մի ուրիշ ակտիվիստի տեսնեմ, նրանի՞ց էլ սիրտս կխառնի: Գաղափար: Գաղափարական: Գաղափարականացած: Ես չգիտեմ՝ ինչի՞ գաղափարակիր եմ կամ արդյոք գաղափարականացվա՞ծ եմ ընդհանրապես: Երևում է՝ գաղափարակիր եմ, այո՛, ե՛մ, բայց ինչ-որ բան ինձ գրգռում է սրտխառնուքի աստիճան: Գուցե ջղերիս մեղքն է: Հա՛: Գուցե ես ջղեր եմ: Եթե այդպես է, իմ ջղերը մի մարդու ջղեր են: Իսկ իմ հիշողությունը մի մարդու հիշողություն է: Ես կամ: Միս-մարմին ու հոգի: Մսին-մարմնին հաճելի չէ պլաստմասե բաժակով բենզինի պես ծանր օղին խմելը, սակայն հաճելի է, երբ օղու հետ միասին սև հացին մանանեխ քսած երշիկ է ներս տալիս: Հոգուն հաճելի է, երբ հարբածի համառությամբ հավատում է, որ ինքը դեռ մարդ է: Գուցե հենց «մարդ»

բառը որոշակի գաղափարախոսություն է: Գուցե մարդ են նպատակն էլ, հետևանքն էլ: Եթե այդպես է, այդ դեպքում սա նրա գաղափարախոսությունն է, ով մարդուն ստեղծել է ու հնարել: Այս դեպքում ես հիշում եմ, որ իսկապես տիեզերքի մի մասնիկ եմ: Իզուր են մտածում, որ գիսավոր աստղերը երկրագնդի վրա չեն ընկնում: Ինչպե՞ս չէ: Հենց մայր հողի վրա էլ ընկնում են: Ինչ-որ կոնկրետ տեղում, որն առաջին հերթին սեփական օջախ են անվանում, ապա և՝ սեփական հայրենիք: Ես այստեղ եմ ընկել: Ես երբեմն հայացքս հառում եմ դեպի հիշողություն, երբ նորապսակ մայրս ու հայրս, կայարանի ռեստորանում նստած, գինի էին խմում: Ծնողներս հաճախ էին գալիս այստեղ, որպեսզի այն զգացողությունն ունենան, թե ինչ-որ տեղ են ճանապարհորդում: Հայրս գինին խմում էր կում-կում՝ ապակյա բարձր, երկար շշից: Մայրս սիրահարված աչքերով նայում էր հորս: Հետո, երբ ինչ-որ գնացք էր շարժվում, ծնողներս նայում էին նրա ետևից: Մարդիկ արդեն տեղավորվում էին իրենց նեղ վագոնախցերում: Մեկը ճամպրուկ էր տեղավորում վերևի թարեքին: Մեկի մոտ էլ

հենց նույն պահին ուտելու ախորժակն էր բացվում, և հանպատրաստից ընթրիքն էր հանում պայուսակից: Մի ուրիշն էլ, պատուհանի մոտ նստած, այնպես զարմացած ու հիացած էր նայում կայարանին, որ կմտածեիր, թե իսկի կայարան էլ չի դեմը ու կյանքում առաջին անգամ է գնացք նստում: Հետո հայրս փակում էր հաշիվը, և ծնողներս, ռեստորանից դուրս գալով, պայմանավորվածության համաձայն, լուռ զբոսնում էին կառամատույցով: Իսկ ես երկնքից հետևում էի նրանց, քանզի գարունով ներծծված օդը և գնացքների սուր հոտն ինձ արդեն զգացնել էր տալիս, որ մոտ է ժամը: Հետո ես տեսա պոչն իրեն քաշած մի ոչ ազնվացեղ շուն, որը մի քիչ ծուռ-ծուռ վազում էր կառամատույցով: Կարծես թե կույր լիներ: Կամ ինչ-որ մեկի կողմից ղեկավարվող: Նա շատ մոտիկից անցավ մորս կողքով: Ինձ նույնիսկ թվաց, թե կպավ մորս ոտքին, և սրանից ինքն էլ վախեցած՝ էլ ավելի սրեց ականջները: Էլ ավելի քաշեց պոչը, քայլերն արագացրեց ու կորավ աչքից: Մայրս վախեցած հպվեց հորս: Հայրս ծիծաղեց: Հետո մայրս էլ ծիծաղեց: Կանգնել ու ծիծաղում էին: Մայրս ձեռքը

դնում էր կրծքին: Հորիցս ավելի շատ էր ծիծաղում: Հետո հայրս ձեռքով արեց, փաթաթվեց մորս, մի քանի քայլ արեցին, նորից պայթեց ծիծաղը, և երբ մի քիչ հանգստացան, զարմանալիորեն միաժամանակ վերև նայեցին: Ես հասկացա, որ եկել է ժամը, և տեղիցս շարժվեցի: Մինչ իմ ծնողներն այսպես միասին կնայեին դեպի երկինք, ես հաճախ էի մտածում, թե ինչպիսին պիտի լինի սլացքը: Մեծ: Որոշակի: Գլխապտույտ առաջացնող: Գլխապտույտ բերող հստակություն, որի մեջ միասին ու պայծառ պտտվեցին աստղերը, ծովերը, սառցալեռները, անտառները, լեռները, գյուղերը, շների վնգստոցը, բվեճի թախծոտ մեղեդին, ծառին կուչուհուպ սկյուռի երկյուղած աչքերը, դաշտերը, քաղաքները, դեպի ինձ ժլատ ոգևորությամբ ձգված ձեռքերը, որոնք փամփուշտի պես ուղեղիս մեջ էին շամփրում տարբեր ցանկություններ: Ես մի կողմ նետեցի բոլոր ցանկությունները, քանզի ես տեսա մորս երջանիկ դեմքը և հորս անխոս աչքերը: Ես գիտեի, որ այնժամ նրանք ինձ պահեցին որպես երազանք, ու դրա համար էլ ես կայացա: Դրա համար էլ ես մարդկային դեմք

առա: Դրա համար էլ վայր ընկա այստեղ: Այս երկիր: Այս քաղաք: Վերայի՛ վրա: Կալանդաձեն փողոց, թիվ քսաներկու տան մեջ: Երկրորդ հարկում կառուցված երկաթե գողտրիկ պատշգամբի վրա կախված բարձրուղեշ չինարին ասես անտեսանելի էր դարձնում տունը, սակայն ես, այնուամենայնիվ, նկատեցի այն: Նկատեցի, որովհետև տերևների վրա էր սփռված լույսի շողը, և այդ լույսը այնպե՛ս տաք էր, այնպիսի՛ խաղաղ ինքնավստահությամբ ինձ սպասող և այնպե՛ս իմը, որ անկարելի էր, որ չնկատեի: Ի՛մ աստղը,–ասաց մայրս: Ես հասկացա, որ նա ամենաառաջինը ճանաչեց ինձ և դրա համար էլ նրան անվանեցի մայրիկ: Հայրս ժպտալով նայում էր ինձ: Մայրս մեկ ինձ էր նայում, մեկ՝ հայացքը հառում հորս: Ոռի համը հանած իմ տղեն,– կատակեց հայրս, հետո նախ մորս համբուրեց, ապա՝ ինձ: Այնժամ ես հասկացա, որ նա իմ հայրն էր ու դրա համար էլ անվանեցի հայրիկ: Ցույց տվե՛ք, ա՛յ մարդ, հլը մի ցույց տվե՛ք,– ասաց պապս: Մայրս ու տատիկս բարուրս քանդեցին: Պապս ոտքերիս արանքը խրեց իր արծվաքիթը և ագահորեն հոտ քաշեց ինձնից:

Այնժամ ես լաց եղա, որովհետև. պապիկիս բեղերը ծակեցին ինձ: Մի մատ երեխա է դեռ՝ ասաց տատիկս: Ես զգացի, որ մայրս ինչ-որ բան էր ուզում ասել, բայց գերադասեց լռել, քանի որ քաշվեց պապիկիցս և միայն հասցրեց ինձ կրծքին սեղմել: Հետո պապս ինձ թողեց: Բարձրացրեց երջանկությունից շողացող դեմքը և երկու անգամ կրկնեց՝ «ապավե՞նս»: Սը՛սս, գա՞նձս, սը՛սս, կյա՞նքս,–ջանում էր ինձ հանգստացնել տատիկս: Ես հասկացա, որ պապիկիս անունը պապիկ էր, իսկ տատիկինս՝ տատիկ, սակայն մեկ է, ձայնս չկտրեցի, քանզի ինչքան ավելի հաճախ էի լսում այս բառերը, ավելի էի համոզվում, որ նրանցն էի ես՝ մի անգամ երկնքից պոկված աստղս, ծնողներիս կողմից միաժամանակ պահած երազանքը, նրանց սիրո պտուղը՝ մորս էության մեջ քնից արթնացած, մորս, հորս, պապիկ-տատիկների, նրանց ծնողների, նրանց ծնողների ծնողների, ավելի անդին, էլի անդին, աշխարհաստեղծման օրից ուղեկցված, նախնյացս բոլորի գլխով անցածների վկան ու մասնակիցը: Նրանց կենաց հաջորդականությունը, նրանց մեղքն ու վարձը, նրանց գլխով

անցած-դարձածներն ու կենաց պատմությունը զարմացնում է ինձ ժամանակ առ ժամանակ, քանզի բացահայտորեն իմ գլխով անցածը և ժամանակավորապես մոռացվածն է հիշեցնում: Նրանց անձայն խոստովանած սրբությունները իմ սրբություններն են, որը գուցե չեմ կրել բավարար արժանապատվությամբ, սակայն, երբ ես չկարողացա կրել, ամոթից կարմրեցի, վառվեցի, իսկ երբ կարգավորեցի ու կրեցի իմ բեռը, է՛լ ավելի ուժեղացա ու մեջքս ուղղեցի: Գաղափարախոսությունը երևի նրանց էլ է անհրաժեշտ, ովքեր վախենում են կորցնել իրենց գենետիկ հիշողությունը: Գաղափարախոսությունը նրանց էլ է անհրաժեշտ, ովքեր վախենում են կորցնել իրենց սրբությունները: Գաղափարախոսությունը կառուցում է համակարգեր: Գաղափարախոսությունը ստեղծում է ռեժիմներ: Գաղափարախոսությունը ծնում է նոր գաղափարախոսություն: Կամ գաղափարախոսությունն ընդհանրապես պայքարում է ընդդեմ այս աշխարհում առկա գաղափարախոսության և հաստատում է, որ մարդը ապագաղափարականացված պիտի լինի: Սա էլ է հո

գաղափարախոսություն: Ոչ պակաս խստորեն պայքարող՝ իր կողմից ընդունված կարծրականոնները պաշտպանելու համար, քան կարող է դա անել ամենագաղափարախոս գաղափարախոսությունը: Ես ծնվեցի ու մեծացա այն ժամանակաշրջանում, երբ փտում-նեխում էր կոմունիստական գաղափարախոսությունը: Հիմա ես նախկիններին հասարակության արժանավոր անդամ եմ և ապրում եմ այն գաղափարախոսության մշուշում, որն աշխարհի մասշտաբով տապալեց կոմունիստական գաղափարախոսությունը: Այնտեղ էլ եմ զգում օտարություն: Այստեղ էլ եմ օտար, քանզի, ինչպես երևում է, իմ գաղափարախոսությունն այնպիսի մարդու գաղափարախոսություն է, ում միայն սերը կարող է թելադրել ուրիշի հետ միաձուլվել: Երկրագնդով մեկ ճանապարհորդելիս, չգիտես ինչու, ես այն տարածքում հայտնվեցի, որտեղ օտար մարդկանց միայն վախն ու ատելությունն են միավորում: Վախն ու ատելությունը քանդուքարափ են անում: Ավերակների մեջ ես մարդկանց եմ տեսնում՝ առանձին-առանձին կանգնած: Նրանց մեջ տեսնում եմ, թե ինչպես

են շահել վախով ու ատելությամբ միավորված-ները, վախից ընչաքաղցները: Հա՛: Շահել են, օգտվել են: Այնտեղից են քաղել, որտեղ չեն ցանել: Իսկ եթե ցանել են, ապա միայն ընչաքաղցություն, չարիք ու ստորություն: Մեկն էլ չի հարցնում է, թե ի՞նչ են ցանել ու ի՞նչ են քաղում, որովհետև իշխանությունն էլ է վախից ու ագահությունից գլուխը կորցրել: Իսկ մի մարդ կանգնել ավերակների մեջ ու հիշում է: Ի՞նչ է հիշում: Հիշում է, որ այն ժամանակ, երբ պետությունը դեռ նոր էր հաստատվում աշխարհի քարտեզին, հույսով լի էր ու հուզախառով, ժամանակ չուներ առաստաղ ամրացնելու կամ նոր տան հիմք գցելու: Հիշում է, որ հետո էլ ժամանակ չունեցավ, քանի որ իրար հաջորդեցին պատերազմն ու պարտությունը: Հա՛, ժամանակ չուներ: Այս բանը մտածելուց անգամ սարսռում էր: Խղճուկ: Արժանապատվությունը ոտնահարված, բռնադատված ոգով: Ոչ էլ հետո ունեցավ ժամանակ, քանի որ աչք ու ձեռքի միջև անգամ կեղծվեցին հարաբերությունները: Հա՛ դե, չուներ ժամանակ, կամ չգիտեր կամ ոչ էլ երբևէ կկարողանար անել այն, ինչն այս ընչաքաղց, չինովնիկացած,

գիշատչորեն առևտրականացած-վաճառականացած կյանքն էր հրամցնում: Հետո գործը հասավ լինել-չլինելու խնդրին, և նա էլ ստիպված եղավ մի բան մտածել: Անցավ իր արժանապատվության վրայով, սակայն, ինչպես երևում է, անհարմար զգաց դրանից և դրա համար էլ ընտրեց ամենացածր, ամենաաննկատ աստիճանն այն համակարգում, որը մի փոքր, բայց, այնուամենայնիվ, մատուցում էր ինչ-որ բան, թող որ վռիկ, թող որ կարտոֆիլ, որն իր կինը կկլպեր, կխաշեր, հետո խյուս կեփեր ու կուտեցներ իրենց որդուն: Թեև այս պատմությունը սրանով չի ավարտվում: Հիմա տղամարդն ինքը կանի իր խոհարարությունը: Խաշած կարտոֆիլի ջուրը չի թողնի, որ կինը թափի: Մի քիչ ձեթ կլցնի այդ խաշած ջրի մեջ: Կանաչի կկտրտի: Արմատներն էլ: Արմատնե՛րն էլ: Համարյա մինչև վերջ: Աղ ու պղպեղ կխառնի: Հետո ինչ-որ կերպ աչքերը կհառի կղզիների նման տեղ-տեղ հավաքված ձեթին, որն իջևանել է խաշած ջրի վրա: Կհասկանա, որ անզոր է եղել ձմեռվա անհաղորդ խլություն-դաժանության դեմ: Մտքերին չի տրվի: Կաշխուժանա: Կնոջը ձայն կտա՝

այ, ինչքան բան է պատրաստվում կարտոֆիլից: Կասի ու կծիծաղի: Կծիծաղի, որ թաքցնի իր անզորությունը պաղ հայելու պես իր վիժակն արտացոլող կնոջից: Ճաշի կնստեն: Սուսուփուս կուտեն: Լուռ: Անձայն: Հայացքներն իրարից փախցրած: Չեմ ուզում՝ կասի տղան և կարտոֆիլի խյուսի ափսեն մի կողմ կդնի: Երեկ էլ սրանից կերավ: Երեկ չէ առաջին օրն էլ: Դրանից առաջ էլ: Հա՛, ու ի՞նչ զարմանալի բան է, որ չուզենա: Մարդը կուչուհուպ է լինում ինչ-որ չարիքի սպասումով: Նա էլ երկար սպասել չի տալիս: Կե՛ր՝ կռվում է կինը տղայի հետ: Կե՛ր, հո գիտես, ուրիշ բան չկա: Ճմլվում է տղամարդու սիրտը: Կնոջ բերանից դուրս թռած խոսքը գնդակի պես է հարվածում նրան: Թույնի պես: Ամենաահավոր թույնի: Հիշում է՝ ժամանակներ առաջ որն էր բերում քարանձավ: Կարոտվում են այն ժամանակները: Անիծում է իր անզորությունը, իր տկարությունը, որովհետև մոռացել է որսորդությունը: Մոռացել է արհեստը: Մոռացել է՝ ինչպես էր փորում, մշակում հողը և նա էլ էր երախտագետ՝ կեր էր տալիս իրեն: Չգիտի: Ոչինչ չգիտի: Գրող է: Այնպիսի արհեստի տեր, որի կարիքը չունի

նախկինների հասարակությունը: Ոչ էլ որևէ մեկին կարող է դատապարտել, հանդիմանել սրա համար, քանզի նախկինների հասարակությունը շատ ռիթմիկ, շատ արագաշարժ, շատ ճարպիկ հասարակություն է: Օրըստօրե ավելի շատ մխրճված իր որոնումների մեջ: Իսկ իր գործն արագ-արագ լինել չի կարող: Իր գործը մի՛տք է պահանջում: Մի՛տք է պետք: Որսորդի համառությամբ սպասում է անհրաժեշտ: Դե՛, դրա համար էլ չեն համապատասխանում իրար ինքն ու նախկինների հասարակությունը: Տարբեր ռիթմերով են առաջ գնում: Կամ ավելի շուտ այն որակով են համընկնում իրար, որն իրեն մատուցում է խաշած կարտոֆիլի՝ կանաչու կտրտած արմատներով լի ջուրը: Այն օրվա իր գոյությունը: Օրեցօր ինչ-որ բանով պահպանվող գոյություն: Օրըստօրե այն միտքը, թե ինչո՞վ պահպանես գոյությունդ, ինչպե՞ս մատուցես մարմնին սնունդ, որ նա վայր չընկնի: Ջհանդամն իր գլուխը: Տղային մատուցի մի բան, որ մեծանա: Իր որդուն: Իր միս ու արյանը: Իր սիրուց պահպանված աստղին, որն իր հայտնվելու ու մանկական առաջին լացի հետ հասկացրեց, ձայն տվեց այն

մարդուն, ով հիմա ինքն է գոյության ծանր բեռի բեռնակիրը: Այս գործառույթը վզից կախվեց՝ իր անցյալի ու ապագայի արանքում: Իր միսն էր ուզում վաճառել, սակայն այնպիսի միջնորդի հանդիպեց, որն ինքն էլ ի՛ր միսն էր վաճառում: Իր սեփական միսը: Միայն թե նա չգիտեր, թե ում պիտի վաճառեր, և ընդհանրապես, ո՞ւմ էր պետք էս անտեր երիկամը: Նա հոգին էլ էր վաճառում, սակայն իր սիրտը խառնեց, վատ զգաց և դրանով էլ երևի փրկվեց: Թեև, այնուամենայնիվ, վաճառել է հոգին: Մանր մաքսանենգ է: Հայրենիքից զոռով գջլած, տոնավաճառ դարձած հողի վրա այնպես է քարշ գալիս, որ կարծես ոչինչ էլ չկա: Վշագործ մեշոկ է տանում իր հետ: Ռուսական արտադրության «տուշոնկանեբով» է այն լցնում: Կամ՝ հնդկացորենով, կամ՝ մակարոնով, շաքարով, վերմիշելով: Մեշոկը գցում է շալակը: Իրեն ուղեկցող տոնավաճառային ռաբիս երգերի հետ: Հաղթական, հուռացած, անտարբեր հայացքների հետ: Անզորության ցավի հետ: Նաև՝ մեջքից լսելի ծիծաղի, որը երևի իր հասցեին էլ չի հնչում: Բայց, մեկ է, վառում է ուսերն ու ծոծրակը: Ոչ էլ շրջվում է:

Հետաքրքիր չէ անըմբռնելին: Առաջ կանցնի: Առաջ կանցնի: Բեռնախցիկը կբացի: Մեշոկից կդատարկի ապրանքը: Բեռնախցիկը փակում է: Ճանապարհին պարապ-սարապ կանգնած բլոկպոստերի մոտ բաժանելու երկուլարիանոցներ է փնտրում գրպանում: Նստում է: Մեքենայի մեջ: Սառում է հայացքը: Գլխի է ընկնում, որ հենց դրա համար էլ կանգնած էր բլրի վրա: Միալար անձրևի տակ, միակ շոգենավին աչքը հառած: Հեռվից էլ գիտակցում էր, թե այդ պահին իր մեջ ինչ էր կատարվում: Մեղսալի: Մեղսալի: Մեղկորեն մեղսալի: Մի անգամ արդեն դարձած ձկների կերակուր: Այնուամենայնիվ, ոտքի կանգնած: Այնուամենայնիվ, վերադարձած: Միևնույն է, ցանկացող, որ մարդ զգա իրեն: Մի մարդ: Մի մարդ: Անապատի տապից խարկված մի հոգնած հոգի: Բուրգերի նման դասավորված գաղափարական համակարգերի միջև թափառող մի հոգնած մարմին: Մի տղամարդ: Մի մարդ, որը ոչ միայն կենսաբանական գոյապահպանության է ձգտում, այլև ստիպում է դեգերել մենակյացին, դեգերել տառապյալին, որպեսզի նա հավատ չկորցնի: Քար չդառնա:

Շարեշար դասավորված համակարգի մի մաս չդառնա: Որպեսզի չհատվի: Չավարտվի: Քարի չփոխակերպվի: Քանզի եղել է, կա ու պիտի փոխանցվի, պիտի շարունակվի: Համաշխարհայնացման ստվերն ամենամեծն է: Այդ ստվերում, մոլեկուլների պես փոքրացած մարդիկ՝ այբուբենակարգված մի ցնցող, կանոնիկ հերթականությամբ: Ստվերը մեծ է: Ստվերը բոլորին կտեղավորի: Ստվերն աճում է: Իսկ նա դեգերում է: Որպես բեզարած հոգի: Որպես բեզարած մարմին: Հոգնած երակներին ուղեկից հոգնած արյամբ: Այնուամենայնիվ, արյան հույսն ունի, թող որ այն հոգնած արյան, որն իր մեջ կրում է գեթ փոքրիկ մի գնդիկ անգամ: Այդ գնդիկը հին-հին իրադարձություններ է հիշում, արկածներ է հիշում, ու քանի որ հիշում է, նաև հավատում է, որ արժե իր դեգերումը, իր փնտրտուքը: Հենց այդ գնդիկն է արյունը վերածում մարդկային արյան: Դրա՛ մեջ է հոգին: Իսկ այնտեղ, ուր հոգի կա, սեր կա նաև: Իսկ հիմա ասես ամեն ոք ու ամեն ինչ պայման են կապել, որ չարացնեն մարդուն ու հոգին հանեն: Մինչդեռ անհոգի մարդն ինքնըստինքյան դատապարտված է

հիշողության կորստի: Հիշողությունը կորցրած մարդն էլ ապագա չունի: Դրա համար էլ նա հաճախ է սևեռվում որդու վրա: Պրպտուն հայացքով փնտրում է այն փոքրիկ գնդիկը, որի հույսին է այսօր մնացել: Իր հոր հայացքն է հիշում: Իր վրա լռելյայն սևեռված: Ինչ-որ բան համառորեն փնտրող իր դեմքին կամ վարմունքին: Կհասկանա, որ իր հայրն էլ յուրովի էր պայքարում ձմռան դեմ: Հո թողե՞լ է նման հայացք: Ու նաև արյանն ուղեկից փոքրիկ գնդիկ: Այն հուշը նաև, որ, պահարանի մեջ փակված, ինչպես էր հոր՝ իր վրայով այնքան մեծ պիջակի թևքերը դնում ուսերին: Հա՛: Թողել է: Բայց բոլորից շատ էլի այն հայացքն է իրեն հիշեցնել տալիս: Ինչ-որ բան փնտրող: Պահակած: Բարության ու հույսի շողով հեռվից լուսավորող: Այն ժամանակ իր հայրն էր ներկայի բեռնակիրը: Այսօր հենց ինքն է: Նստել է հիմա մեքենայի մեջ, մի ձեռքում բռնել է պլաստմասե բաժակը, մյուսում սև հացի ու երշիկի կտորը, նայում է Դիդի Դիղոմիի մայրուղու կենտրոնում աճած եղևնուտին ու մտածում այն մասին, որ գուցե իսկապես աղբակույտի մեջ է իր նման մարդու տեղը: Հա՛: Գուցե: Քանզի

Մաքսիմեի հետ հանդիպումից հետո դատարկվե՛լ է ինքը, այն դատարկ շշի պես, որ ուրախացած բռնել էր իր ձեռքերում երկաթե ոչ մեծ աղբարկղի վրա կոացած սրտաձմլիկորեն ծարպիկ այն պառավ կինը: Երեք թեթրիանոց դատարկ շիշ, որն ունի հինգ հազար դոլար արժողությամբ երիկամ: Չզանգահարեց չոլախ Նանան: Չէ՛,– մերժում է չոլախ Նանան,– ինչո՞ւ պիտի զանգեի, որ... Հրե՛ս, իմ ոտքով եմ եկել: Վերջապես իմ երիկամն ուզո՞ւմ են, թե՞ ոչ, քալբատոնո՛ Նանա: Այ մարդ, դո՞ւ չպիտի ծախեիր իմ երիկամը,– հայտարարում է չոլախ Նանան, կնքված փաստաթղթի պես ցույց տալիս ծոցատետրը և ասում՝ այ, հոգուդ մեռնեմ, հրե՛ս, էս քո հեռախոսը, էս էլ քո հասցեն, քո անուն-ազգանունը, այ, էստեղ էլ գրված՝ ե-րի-կամ: Իսկապես, գուցե դո՞ւ օգնես ինձ վաճառել երիկամս: Չոլախ Նանան այնպիսի անձնավորություն է, որ պարտքի տակ չի մնա: Չէ՛, չէ՞ ժխտողական ասում է Նանան,– էդ դուք պիտի վաճառեք իմ երիկամը, վա՛յ ինձ, գլո՛ւխս չմեռնի,– խեղճանում է չոլախ Նանայի հայացքը,– ես էլ ի՞նչ հույսեր ունեի: Ախր, չգիտեմ որտեղ թաքնվել էս

պարտքատերերիցս: Արի՛, ասում եմ, իմ մեշոկի մեջ պահեմ քեզ: Կարելի՞ է: Ուրախանում է չոլախ Նանան՝ Աստվա՛ծ քեզ օգնական: Հետո հետևում է ինձ և արժանապատիվ կաղությամբ համեցեք լինում մեշոկիս մեջ: Այսպես է: Իմ մեշոկն իր մեջ տեղավորում է ամենքին ու ամեն ինչ: «Տուշոնկաներն» ու հնդկացորենն էլ հո ինքնրստինքյան: Չոլախ Նանային էլ: Կամ գուցե թախիծն էլ, որ այս գոռոզ կնոջն ուղեկցեց փողոցում: Իմ մեշոկում Էնվերն է նաև: «Օհ» բացականչության նման կտրուկ ու ջերմ: Մեկ՝ ուրախ-զվարթ: Մեկ՝ կատակող: Մեկ՝ աշխատող, ու մեկ էլ՝ ռազմիկ: Ցածրահասակ, բայց շատ բեռ բարձող: Բա՛րև, Էնվեր: Օ՛հ, բա՛րև: Էնվեր, ո՞նց ես: Օ՛հ, ոչի՞նչ: Դո՞ւ ես ինձ պատմել դողլապիա Շակոհայի մասին: Չէ՛, ես չեմ ճանաչում նման մարդու: Ես էլ չեմ ճանաչում նման մարդու, Էնվե՛ր: Բայց նրա հռհռոցը լսում եմ: Ծիծաղում հա՛ ծիծաղում է: Ծիծաղում հա՛ ծիծաղում է: Իսկ իմ աչքը պաղում է: Ես հիմա զառանցում եմ, Էնվե՛ր, որովհետև հիշում եմ Մադոննային ու իմ տղայական պատանությունը: Երբեք չի վերադառնա տղայական

պատանությունը, քանզի գնացել է պատանությունը: Ո՛չ: Պատանությունը խելագարվե՛լ է: Բատկայի «պարտյանկաների» հոտը եկավ: Ոսկեատամնավորի լպիրշ ծիծաղը նվաստացնում էր ինձ: Ես ու իմ պատանությունը հորաքրոջս ու իր ամուսնու գերեզմանների նման հեռու-հեռացել ենք իրարից: Հիմա այստեղ ես եմ: Այնտեղ իմ տղայական պատանությունն է: Իսկ մեր արանքում ռուսի բանակն է: Խաղաղապահ բանա՞կ են ասում: Հա՛ դե, ցավում է, Էնվե՛ր, իմ ոտնահարված տղայական պատանությունն է ցավում: Ցավում է: Ցավ: Ցավում է: Ցավ: Ցավն է ցավում, քանզի սուր է այն ու անհույս... դատարկ շիշ հայթայթած պառավ կնոջ վաղվա օրվա պես անհույս: Մաքսիմե՛, տո բո՛զ, ծախվեի պիտի քեզ, հա՞, բայց լավ է, սիրտս խառնեց, և գուցե դա էլ փրկեց ինձ: Թեև դու ի՞նչ անես, երբ այս սրճարան բեզարած մարմի՞նս քարշ տվեց բեզարած հոգուս: Մահուդածածկ պատեր: Դռների ոսկերիզ բռնակներ: Ինչ-որ կարմիր բան էլ՝ նախասարահում: Ամեն ինչ կպչուն էր: Քաղցր ու կպչուն: Ուզում եմ մոռանալ քեզ, սակայն չեմ մոռանում, որովհետև դու էլ

տեղավորվեցիր իմ մեջոկում՝ ոտքդ՝ ոտքիդ, սկսեցիր բարակ սիգարետ խաղացնել մատներիդ արանքում, լա՛վ հարմարվեցիր քո վարդագույն շարֆով և հիմա այնտեղից այնպես ես նայում ինձ, ինչպես մե՛ղքն է ընդհանրապես նայում վախով ղեկավարվող հասարակությանը... Ժպիտո՛վ: Թեթև՛, թեթև՛: Մաքսիմեի պես արտահայտիչ: Քեզ կզուգավորեի, Մաքսիմե, և գիտե՞ս ում հետ: Էն, որ «պեդեռաստկան» թողնում է սեղանի վրա և, այնուամենայնիվ, այնպես է քայլում, որ ասես դարձյալ «պեդեռաստկա» կա ձեռքին: Լավ կհասկանայիք իրար: Մի տեսակ հանդիսավոր կընթանայիք այս աշխարհի չարյաց հետ: Անսիրտ-անհոգի կբամբասեիք: Մերթ ընդ մերթ ծը՛-ծը՛-ծը՛ կանեիք շրթունքներով, ժամանակ առ ժամանակ էլ գլուխներդ կտմբտմբացնեիք: Լավ կմտերմանայիք, քանի որ այն երկվորյակների պես նման եք իրար, որոնցից մեկին ես առաջին անվանեցի, մյուսին էլ՝ երկրորդ: Աղչի՛, Մայա՛: Աղչի՛, Մանանա՛: Դո՞ւք էլ եք էստեղ: Բա՛րև, աղջիկնե՛ր: Դե հիմա ասեք, ո՞ր մեկդ եք առաջինը և ո՞ր մեկդ՝ երկրորդը: Էն ժամանակ ո՞նց ասացի... Բա որ չհիշե՞մ: Թեև

ի՞նչ նշանակություն ունի: Նրանցից հո ավելի լավն եք: Այո՛, իսկապես: Ձեզ ուղղակի այն է դուր գալիս, ինչ մակերևույթին է, և, չնեղանա՛ք, բայց առանց լրիվ հասկանալու եք ձեռք գցում որևէ մի բանի: Էքստրասենսությունն ինչ-որ արտակարգ բա՞ն է նշանակում: Էքստրասենսներ եք դառնում: Ժողովուրդը սկսեց շարժվել դեպի եկեղեցի՞: Հավատացյալներ դարձաք: Ազգային շարժումը վրաննե՞ր բացեց: Այնտեղ պիտի լինեք: Պոռնկությունը բիզնե՞ս կոչվեց: Պոռնիկ դարձաք: Բջջայիններով եք ժամերով շաղակրատում: Ու դեռ մի բան էլ՝ ամենանորառո՛ճ բջջայինն եք ուզում: Ողորմելինե՛ր եք դուք, ողորմելինե՛ր: Գուցեև երջանիկներ, թեև չեմ կարծում, որովհետև ձեր մտքի կիզակետն այնտեղ է, որտեղ ինչ-որ բան առաջինն է ընկնում ձեր աչքով և առաջինը դառնում լսելի ձեր ականջներին: Լսվում բարձրաձայն: Ա՛յ, էսպեսի բաներ, ի՛մ Մայա: Ա՛յ, հենց այսպես, ի՛մ Մանանա: Իսկ թե որի՞դ առաջին անվանեցի և որի՞դ՝ երկրորդ, սա իսկապես ոչ մի նշանակություն չունի՝ անլվայության հոտը, որը նման է կարագի հոտի, մեկիցդ էլ է գալիս, մյուսիցդ էլ: Այդ հոտը

ինձ էլ դիպավ: Հա՛ դե, սա էլ՝ այս հոտն էլ այստեղ, իմ մեշոկի մեջ: Իմ վշագործ մեշոկում: Ահա՛, բարձր ոտքերի վրա կանգնած, կոունկի նման պտտվում է սարկավագը: Այնպիսի զննող հայացքով է նայում ամեն ինչի, ասես ուզում է հարվածել կտուցով: Հետո ասես դժգոհությունից կարմրատակում է ու շարունակում պտտվել եկեղեցով մեկ: Տնտղում է: Դե հիմա այստեղ, ներսում էլ քրքրի՛, այստեղ էլ զննի՛, այստեղ ավելի շատ բան կտեսնես, քան դրսում ես տեսնում: Գնա՛, հա՛, գնա՛, ա՛յ այդպես: Մնա այստեղ՝ վշագործ մեշոկում, իսկ ես հիմա պիտի ճաշեմ: Բա՛րև ձեզ, կարտոֆիլի խաշած ջրի մեջ կտրատած կանաչեղենի արմատնե՛ր, որ այսքան թույլ կանաչով ներկում եք եռացած ջրում «բացվող» օսլան: Ուտելիք լինելուց բացի դուք նաև իմ ափսոսալի մեղկությունն եք ու արժանապատվությունը: Դե՛, լո՛ղ տվեք այսպես, կղզյակների պես տեղ-տեղ առանձնացող ձեթի ու հացի հետ միասին, որոնք պատառիկներով կկտրատեմ, կփափկացնեմ, գդալով կվերցնեմ, կփչեմ, հով կանեմ և օրավուր գոյություն կպահպանեմ: Կպահպանեմ, քանզի միայն մարմին հո չե՞մ,

հո՛գի եմ նաև: Հոգուս մեջ թափանցող սարսուռը հոգուս գոյությունն է ինձ հիշեցնում, և հենց դա էլ պահպանում է ինձ: Սա օգնում է: Այն մեկի հոգին, որը ժամանակ առ ժամանակ այն եկեղեցում է փրկություն փնտրում, որտեղ իր տատի գուրգուրած սրբապատկերի նման պատկեր է սրտով տեսնում: Եկեղեցու առաջ՝ մուրացկաններ: Պահպանե՛ք կուսակցական կարգապահություն և միասին վրա մի՛ տվեք: Վերջիվերջո կուսակցություն ստեղծե՛ք, մուրացկանն ե՛ր: Այս երկիրն աշխարհի քարտեզին հաստատվելու օրվանից ի վեր, կուսակցությունները մուրացկանությունից բացի ոչինչ չեն արել, դուք ումի՞ց եք պակաս, որ... Հեռուստացո՛ւյց, իմ հնամենի՛ հեռուստացույց, դու ի՞նչ անես, որ անսպասելի ինձ համակած ամոթից ինքս էլ գրգռված ծամածռում եմ դեմքս: Ո՛չ: Դու ոչ մի կապ չունես: Դու պարզապես այն ես արտացոլում, ինչ այս աղմկոտ կյանքն է քեզ մատուցում՝ սկանդալ, սկանդալ, սկանդալ: Ինքնագովազդ: Գովազդ: Սկանդալ: Սկանդալ: Սոդոմգոմորացած աչքերի թարթում: Ինքնագովազդ: Գովազդ: Դամտապատապա՛: Դո՛ւմպատապատա: Դումպա՛տապատա: Դո՛ւմպ: Գնա՛ց:

Գորսալիզմ: Ու ի՞նչ փափկասուն: Վա՛յ ինձ: Սոդոմգոմորացած: Գորսալիզմ: Գովազդ: Օտար ռիթմին հարմարեցրած վրացական սկանդալ: Ինքնագովազդ: Քաղաքական թոք-շոու: Ձայնդ ի՞նձ տուր, խնդրո՛ւմ եմ: Դամ-տա-պա-տա: Գովազդ: Էս է ու էս, հեռուստացո՛ւյց իմ, իրոք որ իմ հնամենի, աչքիցս երբեք չկտրվող, իմ ու Քեթինոյի ձմռան իրիկունների համամասնակից, էլեկտրաէներգիայի կլանիչ, «բոյեվիկներով» ու մելոդրամային սերիալներով լեցուն, բայց, այնումենայնիվ՝ նայվող, այնուամենայնիվ՝ աչքից չկտրվող, չգիտեմ էլ՝ ինչու: Դե հիմա, արի՛, համեցի՛ր իմ մեշոկի մեջ ու այնտե՛ղ թարթիր աչքերդ: Թեև ոչ, մի րոպե համբերի՛ր, նախագահի ձեռքը պիտի սեղմեմ: Բա՛րև, բատոնո՛ նախագահ: Էս ի՞նչ էլ փափուկ ձեռք եք ունեցել, բատոնո՛: Այո՛, բատոնո՛, այո՛, աշխարհի նոր վերաբաժանում: Հասկանում ենք: Այո՛: Իսկապես: Հասկանում ենք, որ դուք էլ եք հասկանում: Մի՛ հուզվեք, մենք համառ, ամրապինդ ցեղ ենք, ու կհաղթահարենք: Անկասկած՝ կհաղթահարենք: Այո՛, ինչպես մինչև հիմա դիմացել ենք, այդպես էլ կդիմանանք: Միայն թե, պարո՛ն,

մկան ծերտի գաղջ հոտն է մեզ տանջում: Ծանր հոտ է: Խեղդող: Նվաստացնող: Իսկ ձեզ չի՞ հանում այդ հոտը: Առնետներ: Առնետներ: Գոճիների պես չաղացած: Կառավարական գրասենյակի միջանցքում երկու ոտքերի վրա են քայլում: Խորհրդարանի միջանցքում էլ: Ընդհանրապես, միջանցքներում գնալ-գալ սիրում են: Ինչպես երևում է: Դեմքերն այնպես վարդագույն է, որ իրոք խոճկոր կկարծեք: Երևի խոճկորներ են: Չէ՞: Իշամկներ: Այո՛, իշամկներ: Մկան ծերտի հոտով են մատնում իրենց: Ծանր հոտ է: Խեղդող: Նվաստացնող: Ծանր: Միասին պայքարե՞նք: Այո՛, բատոնո՛, բայց ինչպե՞ս պայքարենք միասին: Համբերությա՞մբ: Բարի՛: Ես ու Քեթինոն առանց այն էլ շատ համբերատար ենք: Լա՛վ մնացեք: Հաջո՛ղ: Ի դեպ, իսկապես փափուկ ձեռք եք ունեցել, բատոնո՛: Հեչ դարդ չանե՛ք, կդիմանանք: Հա՞, Քեթի՛: Քեթինո: Քեթևա՞ն: Հո կդիմանա՞նք: Ինչպես որ մինչև հիմա դիմացել ենք, այդպես էլ էլ սրանից հետո կդիմանանք: Չէ՞: Հիշո՞ւմ ես այն իրիկունը, Քեթի՛: Գուցե չես էլ հիշում, իսկ ես չեմ մոռանում: Մինչև երեխային կքնեցնեիր, ջուր եռացրեցիր:

Եռացրած ջուրը լցրեցիր «գրելկայի» մեջ: Հետո «գրելկան» տարար ու երեխայի անկողինը տաքացրեցիր: Նախ՝ ոտքերի մոտ: Հետո՝ գոտկատեղի: Հետո՝ վերև, ուսերի մոտ: Հետո նորից ոտքերի մոտ տարար: Երեխային պառկեցրեցիր անկողնում: Ճակատը պաչեցիր: Բարի երազներ մաղթեցիր ու խոհանոց մտար: Ես այն ժամանակ հույսով էի լի: Լուռ և հույսով: Քանզի իմ երիկամն ինձ էր պատկանում, իմ ձեռքին էր: Դու ալեհավաքի պես որսացիր ինձնից ճառագայթվող հույսը, ու հայացքդ փափկեց: Այդ գիշեր ես ու դու չծանրացրինք մեր ուղեղը և չարձագանքեցինք մեր մտքում հայտնի մարդկանց ազգանունների մեր խաղին՝ ան-ով սկսվող կամ բան-ով, էն-ով կամ վին-ով: Այդ գիշեր ես ու դու միմյանց վերադարձրեցինք մեր սեփական մարմինների զգացողությունը և գծուծ ձմեռվանից ինչ-որ մի բան գտնե պոկեցինք: Հա՛: Այդպես էր: Հետո նորից ջուր տաքացրեցիր: Կոկա-կոլայի 22ի մեջ լցրեցիր: Շիշը չարչարանքի ձայներ հանեց, մեջքն ասես կոտրվեց: Գլխաշորդ փաթաթեցիր 22ին, լանջիդ դրեցիր ու հետևեցիր ինձ: Քեթի՛, այս ձմեռն, այնուամենայնիվ, մեր

ձմեռն է: Ու քանզի մերն է, պիտի խլենք նրանից մեր ամեն ժամը, ամեն օրը, ամեն րոպեն ու ամեն իրիկունը: Սա դու էլ գիտես, ես էլ, քանի որ մա՛րդ ենք, ու քանի որ մարդ ենք, դարձյալ ձգտում ենք դեպի մարդկային երջանկություն, ինչպես բաղեղը՝ ծառի կատարին: Քեթի՛, գիտե՞ս, մեր սիրո զեղումներում ես միշտ այն լռությունն եմ հիշում, որով դու վարակեցիր ինձ: Ես միշտ հիշում եմ այն անսպասելի օտարումը, անկողնուց միանգամից վեր ցատկելդ և մահճակալի մի անկյունում դառնորեն տխուր միայնությամբ կուչ գալդ: Հետո իմ ոտքի վրա էլ զգացի շշից թափվող ջրի տաքությունը ու ապա՝ թացությունը, ապա և՝ հեռավոր «դվիժոկների» դռդռացող մոտիկությունը, որ հասնում էր մեզ: Իսկ դու նստած էիր մահճակալի անկյունում և ժամանակ առ ժամանակ կրկնում էիր՝ ա՜խ, էս կյանքի... Ա՜խ, էս կյանքի՜... Ես ջանում էի ծիծաղով ցրել այսպես հանկարծ վրա հասած գիշերը, բայց իմ ծիծաղը կեղծ էր, և դա դու անմիջապես զգացիր, դրա համար էլ դարձար ավելի հեռավոր, ավելի օտար ու ավելի անհասանելի: Դրա համար էլ քո ձայնը լսվեց այսպես

մենավոր ու այսպես դառնաղի՝ ա՜խ, էս կյանքին, ա՜խ, էս կյանքին ի՞նչ ասեմ, Քեթի՛... Այս կյանքն էլ, ահա՛, իմ մեշոկում: Իմ վշագործ մեշոկում՝ իմ կյանքը: Իմ վշագործ մեշոկում՝ իմ ցավը: Իմ թախիծն ու տխրությունը: Իմ մեշոկում՝ իմ սրտխառնուքը: Իմ օտարումը: Իմ մեշոկում՝ իմ տղայի շնչակտուր, հատ-հատ արտաբերած բառերը՝ կմեռնե՛մ, ես հիմա կմեռնե՛մ: Իմ մեշոկում՝ ինձ համար անծանոթ մարդկանց դեմքեր, իմ մեշոկում՝ իմ վաճառել չկարողացած երիկամն ու իմ չծախված հոգին: Իմ մեշոկում՝ իմ անզորությունն ու իմ անճարակությունը: Իմ մեշոկում՝ «տուշոնկա»-ներ, հնդկացորեն, բլոկնեբով սիգարետներ, մակարոն ու շաքար: Իմ մեշոկում՝ իմ պարտությունը, ոսկեատամնավորի լպիրշ ծիծաղը, բատկայի «պարտյանկան», ու իմ անզորությունը: Իմ մեշոկում՝ իմ զառանցանքներն ու մի քանի անգամ տեսած տեսիլքը՝ վիթխարի կենդանու կմախքը: Ողնաշարին փոքրիկ ծիտիկ է նստած: Երկարակտուց: Կարմրադոշիկ: Բոլորովին էլ նման չէ լեշակերի: Լեշ ուտում է ահարկու, փայլուն, սև անգղը: Սերմնագռավն էլ ագռավի ցեղից է: Ղա՛-ղա՛ արեց,

նորից ղա՜-ղա՜ արեց, տեղը փոխեց: Թռավ՝ աչքը սերմնագռավին: Լերկ սարերի համայնապատկերը և Մուխաթգվերդիի աղբանոցը: Գարշահոտից տարուբերվող դեգերումներ: Էհե՛յ, ո՛վ աստղեր, գորշ ձմեռվա մառախլապատ օրվա ետևում մնացած իմ քույր-եղբայրներ: Ի՞նչ գործ ունեի ես այստեղ: Ինչո՞ւ եկա: Հա՛: Ստիպեցի: Իսկապես ստիպեցի: Աղբակույտի վրա: Վախո՛, ախպե՛ր: Աղբակույտի վրա: Ե՞րբ ստիպեցի: Մեքենայի մեջ: Հա՛: Մեքենայի մեջ: Մեքենայի մեջ, հարբած-հարբած՝ ստիպեցի: Հետո քունս տարավ: Չգիտեմ՝ քո՞ւն էր, թե՞ տեսիլք: Աչքերս բացեցի: Ի՞նչ գործ ունեինք այստեղ՝ հարցրեցի Վախոյին: Դու չասացի՞ր, տար ինձ աղբակույտի մոտ՝ առանց աչքը կտրելու աղբակույտից պատասխանեց Վախոն: Մի որոշ ժամանակ՝ այսպես: Հետո սկսեց նայել երկու կովերին ու կանգ առավ նրանց կողքին կանգնած սպիտակ մեքենայի մոտ: Ու մի տեսակ դարդոտ ասաց. աղբակույտն էլ իր հանդիսատեսն ունի: Դեմքը շրջեց դեպի ինձ: Կարմրած, հարբած ու հոգնած աչքեր ուներ: Այսպիսի աչքերում արցունքները հեշտ են կուտակվում: Ջրակալեց հայացքը: Ու սկսեց՝

պիտի գնա այստեղից: Հոլանդիա: Կամ Բելգիա: Կամ Գերմանիա: Ջառ ու ջհանդամը: Որտեղ որ կընդունեն, այնտեղ էլ կգնա: Որպես գաղթական կհանձնվի: Կվաճառի բնակարանը, կվաճառի այն հին մեքենան, ամեն ինչ կվաճառի, եթե ընդհանրապես մի բան գտնի ու ռադ կլինի այստեղից: Հոգնել է արդեն: Իր կյանքի տասներկու տարին երկի՞նքն է կուլ տվել, թե՞ հողը, դա էլ չի հասկացել: Դե՛, ուրեմն, կգնա, քանզի այստեղ օտար է ինքը: Հա՛ դե կգնա, որովհետև օդն այլևս չի բավականացնում այս ծանծաղուտում: Անպայման կգնա, քանզի պարտվել է բոլոր պատերազմներում ու ձեռք բերել պարտված մարդու բարդույթ: Կգնա, անպայման կգնա, որովհետև ինքն էլ մարդ է և ուզում է մի անգամ գոնե ապրել իսկական մարդկային կյանքի երջանկությունը: Ինձ էլ նույնն է խորհուրդ տալիս: Թե չէ հո տեսնո՞ւմ ես: Հո չե՞ս կուրացել: Հո պարզ տեսնո՞ւմ եմ էս անտերը: Գուցե իսկապես քոռացե՞լ ես: Հա՞: Քոռացել ե՞ս: Հա՛: Քո՛ռ եմ: Ապուշ եմ: Հիմար եմ: Եվ կամ ի՞նչ եմ ընդհանրապես: Գուցե պատասխանե՞մ: Դրա համար էլ լռել եմ, որովհետև ընդհանրապես ոչ մի բան չեմ

պատկերացնում: Ոչնչություն եմ: Հա՛: Ոչնչություն: Բութ: խելագար: Ե՛ս եմ ամեն ինչում մեղավոր: Հենց ե՛ս: Իմ հիմար պատկերացումներով խղճի ու նամուսի մասին: Իմ քար հայացքով, որը ջանում է հիշել գոյություն չունեցածը: Մինչև այսօր ինձ հանդուրժում էր հանուն մեր ընկերության, բայց հիմա ինքն էլ է գերհոգնել: Չի՛ կարողանում: Մա՛րդ է, դրա համար էլ չի կարող: Աղբանոցը չէ մարդու հասանելիքը: Աղբանոցը մարդու կողմից օգտագործված ապրանքների հասանելիքն է ու բաժինը: Իսկ ինձ, ինչպես երևում է, դուր է գալիս այստեղ լինելը: Հա՛: Երևի դուր է գալիս, որովհետև ահա այսպես կպա մեքենայից՝ այստեղ գալու համար: Կպա, ու բերեց ինձ: Եկանք: Այստեղ ենք: Երևի սա էլ ինչ-որ մի բանի նախանշան է: Երևի այն էլ ասե՞մ, որ Վախոյի տեղն էլ է աղբակույտի վրա: Ընդհանրապես, այս վերջին ժամանակները, ես փոխվել եմ: Այ՛, է՞ն, ախպե՛ր,- ինչպես ասացի, ի՞նչ հեգնանքով դիմեցի Վախոյին: Ինչո՞ւ եմ հայացքս փախցնում: Հանկարծ ոչինչ չխառնեմ: Հո լա՛վ եմ հասկանում, որ ոչինչ չխառնեմ: Հա՛: Սա Վախոն է, իսկ ես ո՞վ եմ ընդհանրապես: Ո՞վ է ինձ

կորցրել: Հիմա՛ր: Անծարա՛կ: Անբա՛ն: Կռվելու գլուխ էլ չունեմ, թե չէ էսքան կշտամբանքի ո՞նց կդիմանայի: Անծարակ եմ՝ դրա համար: Ես Վախոյին ասում եմ, որ նա էլ ինձ նման անծարակ է ու անբան: Վախոյի աչքերն ավելի են պղտորվում: Վարանումով բացում է դուռը: Դուրս է գալիս: Գնում է մեքենայի առջևից: Նորից շրջվում, բացում է դուռն ու ասում, որ դուրս գամ մեքենայից: Գաղջ աղբակույտի նեխած ձեռքն ասես հասավ ինձ, ու քթիս խփեց գարշահոտը: Ես դուրս եմ գալիս մեքենայից ու կանգնում Վախոյին դեմառդեմ: Վախոն բռունցքով խփում է քթիս: Քաոս: Պայթյուն: Իմ աչքին պայթյունը դառնում է քաոս: Հետո սև-սպիտակ ալիքներ: Սև-սպիտակ ալիքներից Վախոն վերադարձավ: Ո՛չ: Միայն Վախոյի դեմքը: Մեքենային եմ հենված: Եթե մեքենան չլիներ, կընկնեի: Ոսկոր: Ցավ: Պնչերիցս շրթունքներիս վրա իջնող թանձր արյունն աղի է: Վախոն ուշադիր ինձ է նայում: Մոտիկից: Իմ դեմքին մոտ և զննական հառած նրա հայացքը, դեմքը: Ո՛չ: Հիմա՝ նպատակամետ: Անպաշտպան: Բաց: Բայց շատ ավելի մոտիկ, որ դիմանա իմ հարվածին:

Ներքևից խփում եմ: Պատճառ կար, ու խփում եմ: Ներքևից՝ ծնոտին: Ոչ այնքան ուժեղ, քանզի քթիցս հորդացող արյունն ու սև-սպիտակ ալիքներն ուժս խլել են: Նախ Վախոյի գլուխը ետ գնաց, հետո էլ մարմինը չկարողացավ պահել ու ընկավ: Զարմացա: Չէի սպասի: Բայց երևում է, Վախոն իսկապես ուժասպառ ու հարբած էր, դրա համար էլ ընկավ: Մոտեցա: Նայեցի: Սառույցից ճաքճքված գետնի վրա էր պառկած, լայն բացել էր աչքերն ու երկնքին էր նայում: Նստեցի կողքին: Հողը երկաթի նման պինդ էր: Քթիցս թափվող արյունն աղբակույտի գաղջ հոտը զգացնել չէր տալիս: Կգնամ, ասաց Վախոն, անպայման կգնամ: Հետո ինձ նայեց՝ ես կգտնեմ իմ փրկությունը, բա դու ի՞նչ պիտի անես, ասաց ու նորից նայեց երկնքին: Ինչ մնացել է՝ հանձնիր, միառժամանակ յոլա կտանի, իսկ ես արդեն պիտի գնամ՝ ասաց քիչ անց: Մի որոշ ժամանակ մնացինք այդպես: Նա՝ պառկած ու հայացքը հառած երկնքին: Ես՝ նրա կողքին, երկաթի պես պինդ գետնին նստած: Այ, սերմնագռավները թռան: Ե՞րբ, ե՞րբ,- ասաց Վախոն: Իսկապես թռան: Կռռացին, անցան:

Իսկ ինձ իմ լռությունը հիշեցրեց, որ ես կարող եմ շարժվել քար անշարժության մեջ: Սա՛ եմ ես: Ու քանի որ սա եմ, ես կարող եմ նույնիսկ առանց տեղիցս շարժվելու ճամփորդել այսպես: Ինչպե՞ս չեմ կարող: Կարող եմ: Մի անգամ չէ, որ այսպես ճանապարհորդել եմ: Հիմա էլ կճանապարհորդեմ ու այն ճամփով կգնամ, որով անցա փողոցով այն վերջին անգամ: Բոլորովին էլ չեմ շարժվի տեղիցս ու այնպես կգնամ: Ե՞րբ եմ վերջին անգամ եղել փողոցում: Մի շաբաթ առա՞ջ: Թե՞ հինգ օր առաջ: Հա՛: Մոտավորապես: Սալահատակին՝ մարդ: Անցա: Հեռացա: Կողքով անցա: Ինչո՞ւ: Մեշոկը պիտի բերեի շուկա: Լեյլան: Մական: Դարեջանը: Առօրյա նույնականություն: Հացի փող: Դրա համար գնացի: Մեշոկս կախեցի ու գնացի: Կամուրջ: Հա՛: Կամրջով գնացի: Գնում եմ կամրջով: Կամրջի տակով Քուռն է հոսում: Քուռը կակաոյի գույն ունի: Պիոներական ճամբար: Ընդհանուր թեյամանից կակաո են լցնում: Կակաո: Կակաո: Թեյամանին տիրություն անող, մազերը նոր կտրած տղան քիթն է վեր տնկում ցուցամատով: Նույն ձեռքի մատնեմատով ու բութ մատով աչքերի ծայրերը վար

քաշում: Փոքրիկ կապիկ: Մակակա: Կարմրահետույք կապիկը պիոներական ճամբարում խեղկատակություն է անում: Տաք, առանց շաքարի կակաո՝ ընդհանուր թեյամանից: Գուցե դրա համար էլ ինձ թվում է, թե Քուռն էլ պիտի տաք լինի: Չէ՛: Սառն է: Հիմա ամեն ինչ սառն է: Սառնությունը սրում է իրականության զգացողությունը: Ցրտի միջով եմ գնում: Ես ու փողոցը փաթաթվում ենք իրար ցրտով: Փողոցն ինձնից է մրսում: Ես փողոցից եմ մրսում: Մի նկարի մեջ ենք: Մի շրջանակի: Ես՝ խիստ դիմագծերով շարժվող: Ընդհանուր շրջանակում: Որտեղ էլ որ տեղափոխվես, սառնության ֆոնը չի խախտվի: Ամպամած երկինք: Ձմեռ: Հալչող ձյունից թաց սալահատակ: Խոնավություն: Ցուրտ: Ցուրտը համատարած իրականությունն է: Ես շարժվում եմ այդ իրականության մեջ: Համատարած իրականությունը փողոցն է: Փողոց: Կամուրջ: Ես: Գետ: Շալակիս՝ մեշոկ: Խոնավության զգացողություն՝ ոտքերիս մեջ: Խոնավությունը՝ ցեխոտ: Մի քիչ որ կանգնեմ, խոնավությունը կներծծվի արյանս մեջ: Նախ՝ որպես խոնավություն: Ապա՝ որպես ցուրտ: Սարսուռ՝ արյանս մեջ: Սկսում եմ

հիվանդանալ: Հիվանդանում եմ: Գրիպ: Հոդերիս մեջ՝ ցավագին տկարություն: Խոնավ երեսսրբիչ: Ապրել չես ուզում: Ջուրն էլ զգացնել տվեց, ավելի սրեց խոնավությունը: Մոտիկ է: Հեռու է գնում: Քուռը հեռվից է գալիս ու հեռու է գնում: Ես էլ իմ ճամփով եմ գնում: Արդեն քանի ժամանակ է այսպես: Մի մեշոկով: Մի ճանապարհով: Մի ցրտի մեջ: Նա գետ է, ես՝ մարդ: Երբ կամուրջն անցնեմ, կմոռանամ: Մոռացությունն էլ իրականություն է: Համատարած իրականության մեջ մոռացություն կա: Անցի՛ր, կմոռանաս: Հետո իրեն կհիշեցնի: Անսպասելի լույս կտա խավարի խորքից: Ջիպ: Մեծ: Պլպլան: Մուգ ապակիներով: Ծանր անվադողերի վրա, որ հանկարծ չշրջվի: Հայացքս հետևում է: Հայացքը հիշեցնում է: Հա՛: Հիշում եմ: Եվ կամ ինչպե՞ս կարող եմ չհիշել: Անպայման պիտի հիշեմ: Որդի լպրծուն փորի նման կաթիլ՝ ականջիս մեջ: Անձրև: Անձրևի մեջ: Սարալանջին: Մենակ: Աչքս հառած միակ շոգենավին: Ջիպը՝ ծանր անվադողերի վրա: Իջավ: Առափնյայի կողմից: Աչքիցս կորավ: Առջևում՝ մեքենայի ճանապարհ: Հայացքս՝ ձախ: Ազատ է: Մի քայլ առաջ: Գնում եմ:

Ճանապարհի կեսին եմ: Հայացքս՝ աջ: Ազատ է: Գնում եմ: Քարշ եմ տալիս մեշոկս: Մի քիչ առաջ ընկած: Մեշոկի բերանը՝ երկու ձեռքով բռնած: Մայթ: Փողոց: Գնում եմ: Հիմա այլ իրականության մեջ եմ: Ուրիշ շրջանակում: Իրականություն է փողոցը: Աջ կողմում՝ տուն: Ձախ կողմում՝ տկլոր ծառեր: Ես: Մեշոկը՝ շալակիս: Խոնավությունը ոտքերիս մեջ եմ զգում: Եթե կանգնեմ, ապա խոնավությունը կներծծվի արյանս մեջ: Նախ՝ որպես խոնավություն: Ապա՝ որպես ցուրտ: Գնում եմ: Տեսնում եմ: Սալահատակին: Մարդ: Կռացած: Դեմքը չի երևում: Մոխրագույն անձրևանոց: Կապերն արձակած բատինկաներ: Կենդանի: Մեռած: Կենդանի: Չգիտեմ: Չեմ կարող կանգ առնել: Խոնավությունը կներծծվի արյանս մեջ: Չեմ կարող կանգ առնել: Լեյլան: Մական: Դարեջանը: Հացի փող: Գնում եմ: Հեռանում եմ: Կենդանի: Մեռած: Չգիտեմ: Գնում եմ: Իր պրոբլեմն է: Գնում եմ: Մեշոկի բերանը երկու ձեռքով բռնած: Հեռանում եմ: Որտեղի՞ց եկավ այս արտահայտությունը: Իր պրոբլեմն է: Ժամանակի բնավորությունը: Բառից զգացվող ժամանակի շունչը: Խոսակցական լեզուն փոխվում է:

Ժամանակը փոխում է լեզուն: Շանս: Շանսեր: Շանսովներ: Շանսայիններ: Իր պրոբլեմն է: Իմ պրոբլեմն է: Ուրիշի պրոբլեմն է: Առաջ ուղիղ ասում էին՝ գնա՛, ախպեր ջա՛ն, ճամփադ անցիր: Վերջին անգամ եմ զգուշացնում, ա՛յ ախպեր: Կիսով չափ դուրս հանած խանչալի նման արխայիկ բառ՝ ախպե՛ր: Չէ՛: Հիմա այդպես չեն դիմում: Այսօր ասում են՝ գիտեք ի՞նչ, դա Ձեր պրոբլեմն է: Սրտով ուզում են քեզ օգնել, սակայն դա հո քո՞ պրոբլեմն է, ինքն ի՞նչ անի: Քաղաքակրթության ցուրտ: Մինչև հիվանդանալը՝ սարսուռ: Իմաստը նույնն է, ձևը՝ տարբեր: Այնուամենայնիվ, այսպես ես ճառում: Այսինքն՝ այսպես ես մտածում. գուցե լեզվի մեջ էլ ես հենարան փնտրում, դրա համար: Երբ բոլորի համար հասկանալի լեզվով ես խոսում, տնավարիության, սրտամոտության զգացողություն ես ունենում: Ամեն ժամանակի՝ իր բառերը: Միլիոնավոր մարդիկ միևնույն արտահայտությամբ վրավրա արտաբերում են միևնույն բառերը: Ես հիշում եմ: Անցա: Հիշում եմ: Կուսակցական պատասխանատվություն: Կուսակցական պատիվ: Հեղափոխության առաջնորդ: Ընկեր:

Կուսակցական ընկեր: Կուսակցական: Կոմկուսակցական: Վերկուսակցական: Ավելի վերև, ավելի: Անցա: Հիշում եմ: Անցա: Քայլերթեր: Շքերթեր: Ձեռքով թափահարումներ՝ տրիբունայի ուղղությամբ: Կարմիր վզկապ: Արձանի պես մեծ, արձանի պես անհողդողդ, սպիտակ գոգնոցով կոմերիտմիության քարտուղարուհին: Ոտքերը չռած: Ես նրա ազդրերի արանքով անցա: Դպրոցի մի աննկատելի անկյունում, աղվամազոտ բեղերով կոմերիտական տղաները թաքուն սիգարետ են ծխում: Ես նրանց աղվամազ բեղերի վրայով փափուկ քայլերով անցա: Անցա: Մարքսիզմի հիմունքներն անցա, որոնք, բանից պարզվում է, ստեղծվել են գերմանական դասական փիլիսոփայության, անգլիական քաղաքատնտեսության և ֆրանսիական ուտոպիական սոցիալիզմի միասնության արդյունքում: Հո անցա՞: Այո՛: Իսկապես: Անցա: Ես անցա այս բառերը: Այս դեմքերը: Գործի մեջ հո տրամադրություն պե՞տք է: Ի՞նչ գործ: Ո՞ր գործի մեջ: Ինչո՞ւ: Բայց անցա: Հա՛: Անցա: Հետո ավելի այս կողմ: Ավելի մոտիկից: Ես անցա «զաստոյը», միջազգային ռադիոալիքների վրա ֆռֆռացող

«պերեստրոյկան», ժողովրդավարական վերափոխումները: Կոոպերատիվն անցա: Հույսից շողացող դեմքեր: Տանկերի դղրդյուն: Սրած բահի երես: Սաղավարտավոր բանակայինների դաժան դեմքեր: Անցա միտինգները: Բարձրաձայն բացականչություններ՝ գաո՛ւ-գաո՛ւ-գաո՛ւ-մարջո՛ւ[3]: Անցա տրանսպարանտներով՝ ցուցարարների միասնականության միջով: Հետո իրար տանել չկարողանալն անցա: Դարձյալ տանկերի դղրդյուն: Ռմբակոծումների դղրդյունն անցա: Փշրված ապակիների միջով: Ինքնահրկիզվող մարդու սրտի միջով անցա: Անցա իմ թշնամու վեր բարձրանալու միջով: Օդանավասանդուղքի մոտ խռնված մարդկանց հրմշտոցը տեսա: Այս պարտությունների հետևանքով աչքերիս մեջ ցավով անցա: Անցա մարդկային կյանքի կողոպուտի ու արժեզրկման միջով: Այս ամենի հետ միասին այն էլ անցա, ինչը մինչև իմ ծնունդն անցյալն է հիշեցնում: Անցա, որովհետև վերապրեցի: Որովհետև աչքովս ընկավ զառիվերից կախված ծառը՝ արմատներից կառչած: Որովհետև ունկերիս մեջ հնչում էր հոգնաբեկ

3 Կեցցե, կեցցե (վրաց., ծ. թ.):

հավքերի վերջին ճախրի ձայնը: Որովհետև քարանձավում էլ էի թաքնվում, և զանգերի ղողանջը հրկիզվող գյուղի ծուխն էր քուլա-քուլա բարձրացնում երկինք: Բայց դարձյալ պայքարում էի: Դրա համար էլ՝ կամ: Չեմ ընդհատել: Գնում եմ: Հիմա արդեն այս ժամանակի միջով եմ գնում: Շանս: Շանսեր: Շանսովներ: Շանսայիններ: Շանսը ձեռքիցդ բաց չթողնես: Կամ՝ սա իմ շանսն է: Կամ՝ սա քո շանսն է: Կամ էլ լրիվ՝ նրա շանսն է: Ու էլի՝ սա իմ պրոբլեմը չէ, որովհետև Ձեր պրոբլեմն է, և շատ եմ խնդրում՝ ինձ այս պրոբլեմից աատե՛ք: Վազն անցեք ինձնից: Հանեք իմ ուսերից մեշոկը: Մեշոկը ծանրացել է: Բայց մեկ է գնում եմ: Ե՛րբ տեսա առաջին անգամ այս մեշոկը: Չեմ հիշում: Տեսա: Աչքերս հառած նայեցի: Օդը ներծծեցի թոքերիս մեջ: Մոտեցա: Ձեռքս առաջ տարա: Վշաթել գործվածքը գրգռեց արյունս: Գրգիռն ուժ տվեց: Միանգամից դրեցի ուսիս: Գնա՛: Գնում եմ: Մեշոկն եմ քարշ տալիս: Շատ է ծանրացել, որովհետև տարիների հետ տարիների բոլոր ժամանակներն էլ անցա: Դհոլի արագ-արագ ռիթմի տակ, ոտնաթաթերի վրա պար եկող գարուններս անցա:

ճամփեզրի ճաշարանի փրչոտ շան պես ալարկոտ, դանդաղաշարժ ամառներս անցա: Հնաբեկ որմնանկարի նման կամաց-կամաց երփներանգվող աշուններս անցա: Ոտնատակերիս մեջ որպես խոնավություն ներս ծողոպրած ձմեռներս անցա: Անցա գարնանամուտները, ամառնամուտներն ու աշնանամուտները, ձմեռնամուտներն անցա: Ժամանակը՝ ժամանակի մեջ: Իրարահաջորդ: Իրար ետևից անցնող: Ի՞նչ ասես: Այնտեղ էլ էի մեշոկ քարշ տալիս: Անսովոր սպասք՝ մեղք ու վարձք: Մեղք-վարձք: Ամեն ինչ տեղավորվում է: Անցի՛ր: Վարձքը մոտ է՝ թե՛թև անցի՛ր: Չկա վարձք, կորե՞լ է այն, ընկածված ու ծանր անցի՛ր: Ու գնում եմ: Մեշոկն եմ քարշ տալիս: Ծանրությունից մի քիչ առաջ ընկած: Մեշոկի պարանոցը երկու ձեռքով բռնած: Տևական պարտությունից հոգնած մարդ: Չորացած ցախի մի շյուղից փշրված հույսեր: Մեծ խարույկը վառված է: Մեծ խարույկ: Փոքրիկ շյուղից: Խոհանոցի լուռ-ջերմ ընդդիմությունից մինչև փողոց: Համահունչ՝ սրտիս ռիթմին: Սկսվեց: Դրան՝ վերջ: Նորը սկսվեց: Ռիթմը արագացավ: Սկսվեց: Ազատության ապրում: Մոտ է:

Շատ մոտ: Հենց ձեռքդ մեկնես: Դիդգորիի պատերազմն անցած հասարակ զինվորի խիզախություն՝ ճանապարհը փակենք ու մտքով իսկ չանցկացնենք մեջքով կանգնել թշնամուն: Դա էլ հո ի՞մն է: Հո հիշո՞ւմ եմ: Հա՛, հիշում եմ: Եղել եմ այնտեղ, ո՞նց չեմ հիշի: Վաղնջական ուրարտական ժամանակների Հարի հարալոյի նման: Հարի հարալո՛: Հարլալալո՛: Հարի հարալո՛: Հարլալալո՛: Երակներիս մեջ: Հին գինու նման: Հին կարասից: Հին գինու նման: Սուր: Լեզու դաղող: Կոկորդ ջերմացնող: Երակների միջով դժվար սահող երգի նման: Հարի հարալո՛: Հարլալալո՛: Հարի հարալո՛: Հարլալալո՛: Աստծու ողորմածություն: Փա՛ռք Աստծուն: Աստծու ողորմություն: Փա՛ռք Աստծուն: Կա: Կամ: Չկարողացան բնաջնջել: Այնուամենայնիվ՝ կամ: Արևից՝ աչքերս կկոցած: Լուսնին խոնարհվող: Աստղալի երկինքը՝ երկու ձեռքով կրծքիս սեղմած: Արևը մայրն է իմ, լուսինը՝ հայրս, այս փոքրիկ-փոքրիկ աստղերը քույր-եղբայրներն են իմ: Շումերական եզ հեծած՝ կոլխական վարազի ժանիքը՝ որպես թալիսման: Կովկաս: Այս լեռան կատարին ոտքդ դրած:Այս լեռան կատարին ոտք դրած

քո թշնամուն ես տեսնում: Տեսնում ես: Ոչ մի լեռ չի ծածկի իմ ախոյանին: Միևնույն է՝ կփնտրեմ, կգտնեմ, միևնույն է՝ կսպանեմ, որպեսզի ազատագրվեմ: Մարդկայնությունը՝ որպես բարձրագույն գաղափար: Եթե տղամարդ ես, եթե կնկա լաչակ չես կապել գլխիդ, ոխերիմիդ արյունը պիտի առնես: Մինչև արյունը չառնես, չես ազատագրվի: Չես կարող: Չես ազատագրվի, ուստի և անձնական ազատության համար մշտապես պիտի կռվի մեջ լինես: Հատուցում: Արյան հատուցում: Դու էլ, նա էլ՝ քո ախոյանը: Այս տրամադրվածությամբ, այս գաղափարով ապրող: Օտարի աչքը սա գիտի: Օտարի աչքը լավ է տեսնում ձեր թուլությունը: Ուստի և օգտվում է նույնիսկ: Հիմար կլիներ, եթե չօգտվեր: Հա՛ դե, օգտվում է, որովհետև վախենում է ձեր մի բռունցք դառնալուց: Մի բռունցք դառնալուց: Մի սրտի տրոփյուն դառնալուց: Մի շանթահարումով՝ ընդդեմ իր խարդախության: Ով հարձակվում է, նա խարդախ է: Եվ հարձակման մեղքից ավելի չարացած, քան կա իրականում: Սիրտդ խառնում է նրա նենգ աչքերից: Հոգիդ բռնադատված է: Սպասում: Սպասում: «Մեր գլուխը

մեզ պիտի պատկանի»[4]: Այդ օրն էլ մոտեցավ: Հարձակվողի թուլությունը զգացիր: Հիմա տեսնենք, թե ո՞վ՝ ո՞ւմ: Հիմա տեսնենք, թե ո՞վ՝ ո՞ւմ: Խոհանոցի լուռ ընդդիմությունից՝ փողոց: Դու: Նա: Նորից: Որքան ջրամբար ավերվեց: Տրանսֆարանտներ: Մեգաֆոններ: Գաո՛ւ: Գաո՛ւ: Գաումարջո՛ս: Ցուցարարների մեջ՝ ծանոթ դեմքեր: Նա էլ, ինչպես դու, նստած էր խոհանոցում: Հիմա փողոցում է: Այն աղջիկն էլ: Համալսարանից ես հիշում: Կարծեմ սիրում էիր: Չէ՞: Դուր էր գալիս: Ժպտում է քեզ: Ձեռքով ես անում: Գաո՛ւ: Գաո՛ւ: Գաումարջո՛ս: Ինչ-որ տեղից ծնված կուսակցություններ: Մի օրում ստեղծված: Մայրի՛կ, մայրիկ՛, ինչ լավ տղա է, չէ՞, ի՞նչ պայծառ հոգի ունի, չէ՞: Այդ պայծառ հոգով տղային խորհրդային անվտանգությունն է աշխատեցրել ու ձեռքը խոսափող դրել: Սակայն հիմա այդ մասին ոչ ոք չի մտածում, որովհետև ազատությունն հենց այստեղ է, միայն թե ձե՛ռքդ պիտի առաջ պարզես: Այդ տղան հենց ազատության մասին է խոսում: Վերևից ներքև՝ անհամար

4 Ի. Ճավճավաձեի հայտնի արտահայտությունն է (ծնթ. թրգմ.):

դեմքերին ուղղված: Անհամար կողմերին: Միասնական գաու-ին: Գաո՛ւ: Գաո՛ւ: Գաումարջո՛ս: Տնային տնտեսուհի: Բերանի մոտ պահած ձեռքերով: Ջրակալած աչքերով՝ մամա՛, մամա՛, ինչ լավ տղա է, չէ՞, ի՞նչ պայծառ հոգի ունի, չէ՞: Դե թող հիմա ճամփա տան էդ ճիվաղները: Իսկ այն տղան խռպոտ խոսափողից գոռում է: Անհամար դեմքերին: Անհամար ուսերին: Միասնական գաու-ին: Գաո՛ւ: Գաո՛ւ: Գաումարջո՛ս: Նրանց ու սրանց: Դպրոցականները՝ ուսուցիչների հետ միասին: Գործարանի բանվորները՝ տնօրենի գլխավորությամբ: Շրջաններից ոտքով եկածներ: Ինչո՞ւ ոտքով: Այսպես ավելի շուտ կհասնենք համընդհանուր մաքրության: Ինքնակեղեքիչ էքստազ՝ ոտքո՛վ, մինչև Քութաիսի ոտքո՛վ կգնամ: Քութաիսի չէ: Թբիլիսիի կենտրոն: Ռուսթավելի: Տրանսպարանտներ: Ժողովուրդ: Հոսք: Ցերոզով հիվանդացած անորոշ ազգությունների վրացիներ: Տեատր: Տեատր: Վրացիները սիրում են թատրոն: Թատրոն: Ձեռքին՝ «սետկա»: «Սետկայի» մեջ՝ մի շիշ օղի: Մի շիշ էլ՝ գարեջուր: Կարծեմ նաև՝ երշիկ: Գնաց տան ուղղությամբ: Վրացիները սիրում են, սիրում են

թատրոն: Գուրիական գյուղ: Երկհարկանի տան բակում հանգուցյալի դագաղ: Դագաղում՝ մեռած տղամարդ: Դեմքին՝ թութունագույնից կապույտի խփող մահվան դրոշմ: Դագաղի մոտ՝ հեծկլտալուց հոգնած նրա՝ արդեն այրին: Ժողովուրդ: Բակում՝ լռություն: Այրին չի կարողանում լաց լինել: Ա՛յ տղա, հանկարծ առանց խոսքի չթաղե՛ք: Շարժվող շշուկ՝ քար լռության մեջ: Գյուղի դպրոցի տնօրենը: Բարձրահասակ: Զորուկ: Մի քիչ գուրիական հնչերանգով խոսող: Նա է հիմնական խոսքն ասելու: Բարձրանում է սանդուղքին: Նկատելի հուզվում է: Այսօր մենք հրաժեշտ ենք տալիս մեր սիրելի... Այս բակը վերջին հրաժեշտ է տալիս մեր սիրելի... Փղձկում է: Խոսքը չի շարունակում: Էմոցիա: Էմոցիա: Նրա խոսքում էմոցիա չկա: Բառերը ծամծմում է: Հաճախ կրկնում է նույն բառերը՝ հիմա մենք վերջին հրաժեշտն ենք տալիս մեր սիրելի... Մենք երբեք չենք մոռանա մեր սիրելի... Ծառերին՝ դեղին, հասած կարալյոկներ: Դարպասի մոտ՝ հեծանիվ: Սևազգեստ կանայք: Տղամարդկանց մեծ մասի գլխներին ափսեների պես տափակ գլխարկներ, և նոսր, շեղ կտրած բեղեր:

Հետո, երբ դպրոցի տնօրենը վերջապես ամեն ինչ լրիվ իրար խառնեց, միանգամից ու կտրուկ ավարտեց իր ծեծված խոսքը և իջավ սանդուղքից, հայտնվեց այն կինը: Առանձնապես ոչ մի արտասովոր բան: Գեղջկուհի: Տան ու դրսի սև շոր: Աշխատանքից մաշված, ճաքճքված ձեռքեր: Նրա ամենամեծ զարդը երևի ծղոտի գլխարկն է, որով երբեմն գնում է թեյ հավաքելու: Արևահար դեմքն ավելի է ընդգծում նրա դեռևս թարմ, պայծառ աչքերը: Ահա գլխահակ մոտենում է դագաղին: Նա հանգուցյալի մտերիմ ազգականը չէ, սակայն քանի որ դպրոցի տնօրենի խոսքում էմոցիա չկար, նա շարժվեց դեպի դագաղը, թեև լացի համար նրան ոչ ոք էլ չէր հրավիրել դագաղի մոտ: Ու սկսեց: Նախ ցածրաձայն՝ ախպերը՛ս, ախպերը՛ս, ախպերը՛ս: Ոչ ոք չզարմացավ: Ոչ ոք դեմ չգնաց: Ընդհակառակը՝ դուրները եկավ, ու միանգամից լռեցին, որովհետև բոլորն էլ այս ցածր ձայնի մեջ էներգիա զգացին: Զգացին այն, ինչի պակասն իրավունք չէր տալիս հուղարկավորել հանգուցյալին: Դե՛, կինն էլ հենց օգտվեց նրանց խրախուսանքից: Ու ցուցադրեց իրեն: Շողշողուն աչքերի մեջ՝

հարազատի սիրտ: Ապա մոտեցավ հանգուցյալին ու ձայնը բարձրացրեց՝ ախպե՛ր, ախպե՛ր, ախպեր ջա՛ն: Աչքերում՝ ոչ մի կաթիլ արցունք: Ոչ էլ՝ ձայնի մեջ: Հույզն է ավելի շատ: Շոգ-կրակ, որը գնալով ավելի է տժժացնում: Սեփական ցավը բացահայտելու քողարկված ճիգ ու ջանք: Սեփական զգացմունքները ժողովրդի առաջ ցուցադրելու ցանկություն: Հոգին մերկացնելու մարմաջից ծնված էքստազ: Էմոցիաների ժողովածուն՝ դեպի դագաղում հանգչող հանգուցյալը: Նպատակամղված: Այն, որ մահը մերն է, մենք՝ մահինը: Այն, որ վերջերս ամուսինն իրեն սիլլեց՝ դա՛ս էր տալիս: Այն, որ նախանցյալ տարի կորցրեց հարազատ մորը: Այն, որ մետաքսի շերամի վաճառքից իր հալալ քրտինքով հավաքած փողերը քսան տարեկան իր անպիտան տղան Բաթումիում բոզերի վրա ծախսեց: Ճանաչում էր հանգուցյալին: Ո՞նց չէր ճանաչում: Այս փոքրիկ գյուղում ինչպե՞ս կարող են իրար չճանաչել: Դե՛, ուրեմն նրա փոքրությունն էլ է հիշում: Բայց այսօր ահա դագաղում է: Մեռած է: Վա՛խ, վա՛խ, անցած-գնացած-թռա՛ծ տարիներ: Վա՛յ մեռնողին: Վա՛յ մահին, որ մի օր

անպայման պիտի գա: Վա՛յ, ախպեր ջա՛ն, ախպեր ջա՛ն, ախպեր ջա՛ն: Ու անընդհատ այսպես՝ ախպեր ջա՛ն: Միշտ այսպես՝ ախպեր ջա՛ն: Էս մի փոքր գյուղում հենց քե՛զ էր ընտրելու էդ մահը, ախպե՛րս: Քե՛զ էր հենց հնձելու, ախպե՛՛՛ր: Բայց ախր ինչո՞ւ հենց քեզ, ախպե՛ր... ախպե՛ր... ախպերը՛ս... Ու քանի գնաց, տաքացավ, ոգևորվեց, աչքերը բներից դուրս եկան... Խելագարի աչքեր դարձան... Մարդիկ էլ... Լավ ականջ դրեցին... Ոչ մի զարմանք: Ամենևին: Շարունակում են լսել: Ինքը մենակ ու էսքան ժողովուրդ: Բոլոր դարդերը կարող է լալ: Չի հանգստանում... Անհագուրդ է այս պահին իր ցավի քաղցրությունը...Մեկ էլ ե՞րբ կլինի էսպիսի բան՝ էսքան ժողովրդի առաջ ու էսքան բարձր ձայնով: Բոլորին լսելի: Այսքան ակնդի՞ր: Այսքան ունկնդի՞ր: Հայ-հա՛յ օրգազմին նախորդող հուզական էքստազի Նման: Այդպիսի տրամադրվածությամբ: Հիմա ինքը մահվան կինն է: Հանգուցյալի քար դեմքի մեջ ինքն իր անխիղճանաստված մարդուն է տեսնում: Նրա հետ գործ ունի: Էն ոչուփուչ այլանդակի հետ: Մարդ չի, չէ՛՛՛: Եվ քանի որ ինքը նրա միակ կինը չէ, այլ

անհամար կանանցից ընդամենը մեկը, այս օրը համարում է հենց ի՛ր օրն էլ: Ու ի տես բոլորի մերկանում է: Իմ սպիտակ մաշկը՝ արևի պես տա՛ք, տա՛ք: Իմ ցավը, ինչպես ծովի աղը բաց վերքի վրա: Իմ արցունքը՝ ինչպես ցող խամրող աչքերիս... Իմ շորը, որը ծածկում է իմ սպիտակ մաշկը, իմ անլուսին գիերվա պես սև՛, սև: Իմ ձայնը՝ սրտակեղեք: Սրտակեղե՛ք: Սրտակեղե՛ք: Բա չե՞ս լսում... Ինչո՞ւ չես լսում, խլացե՞լ ես, տո՛ խուլ, տո՛ անաստվա՛ծ, տո՛ անիրավ: Ոչ էիր ծնվել էսքան լավը դո՛ւ՛՛՛՛՛... Վա՛խ, ախպե՛ր, ախպե՛ր, ախ-պե՛ր... Ախ-պե՛ր: Այսպես էր ահա ողբում նրա տատը: Այսպես էր ողբում այդ տատի տատը: Դրանից առաջ էլ, էլ ավելի առաջ էլ, նախատատերն էին այսպես ողբում ու պտտվում հանգուցյալի շուրջ... Ծառին, քարին, լուսնին խնդրում ոգեկոչել հանգուցյալներին: Աստիճանաբար ուժգնացող ձայնով: Աստիճանաբար անշարժացող-քարացող հայացքներով: Փրփրած բերաններով: Գետնաքարշ: Հիմա ինքն իսկապես տեսնում, լսում է նրանց: Ինքն էլ է ուզում նույնն անել, բայց չեն թողնում: Հանգուցյալի այրու լացից ավելի շատ լացի իրավունք ոչ

ոք չունի: Այս կնոջ ողբը լցրեց դպրոցի տնօրենի անսիրտ, անզգացմունք խոսքի դատարկությունը: Հիմա արդեն համարձակ, ազատ կթաղեն: Էմոցիոնալ ներգործություն: Էմոցիոնալ ներգործություն: Այլ կերպ լինել չէր էլ կարող: Որովհետև այստեղ արևն էլ այսպես ներգործուն, կիզիչ է լինում: Որովհետև այստեղ ցրտերն էլ ներգործուն են՝ մինչև ոսկորները մտնող: Այս բնության զավակն այսպես պիտի վարվի: Բնությունն անսխալական է: Այստեղի բնությունն ինքն արդեն շատ ավելի, չափազանց շատ էմոցիա է պահանջում: Չափազանց խաղ: Չափազանց խարդախություն: Չափազանց: Չափազանց սեր: Չափազանց ատելություն: Հպարտություն: Ջոհաբերություն: Թեկուզև վախկոտություն: Թեկուզև քաջություն: Թեկուզև ապաշխարանք: Թեկուզև պատվախնդրություն, հարգանք: Թեկուզև: Թեկուզև: Թեկուզև: Թատրոնն էլ ոչ այլ ինչ է, եթե ոչ հենց սա: Թեկուզև: Վրացիները թատրոն սիրում են: Թատրոն լավ են հասկանում: Լավ գիտեն: Գիտեն՝ խորհրդավոր դարձած ինստիտուտներում: Գեղեցիկ կահավորված, գողտրիկ սենյակներում: Մի բաժակ թեյի հետ:

Մի գավաթ սուրճի հետ: Ամեն ինչ՝ տեղը տեղին: Սակայն այն, ինչ այստեղ գիտեն, այնտե՞ղ էլ գիտեն: Այնտե՞ղ էլ՝ խորհրդավոր դարձած ինստիտուտներում: Գեղեցիկ կահավորված, գողտրիկ սենյակներում: Մի բաժակ թեյի հետ: Մի գավաթ սրճի հետ: Այնտեղ էլ՝ տեղը տեղի՞ն գիտեն: Ո՞վ, ո՞ւմ: Ո՞րը որին: Ըմբշամարտի ժամանակ ի՞նչ է պետք ու... Ոտքի տակ գցել, քացի տալ է պետք: Տա՛-բա՛-բա՛: Տրա՛մ-տա՛-բա՛-բա՛: Բա՛-բա՛: Երկու աշխարհ՝ մի մոլորակում: Դու՝ արանքում: Երկինքը: Պորտը: Չոխատաուրիում է կտրվել աշխարհի պորտը: Հասկանում ես, չէ՞, ինչ եմ ասում: Հա՛, եղել է նման բան: Հենց Չոխատաուրիում: Հենց աշխարհի պորտը: Հա՛ դե, քացի է պետք տալ: Պետք է: Պետք է: Ոտքի տակ գցելով՝ բռա՛խ: Բա-բա՛խ: Ջու-պա-ո՛ւ: Ջուպ-ջուպ-ատ՛ւ: Բայց միևնույն է՝ պայքարում է: Միևնույն է՝ չկարողացան գետնել: Սող է տալիս: Դիմադրում է: Ուռած թշերին՝ դառնության կարմիր: Հասած լիմոնի պես դեղին մազերը ավելի դեղին՝ դառնության կարմրի մեջ: Ուհո՛ւ: Ուհո՛ւ: Ուհո՛ւ: Ու տրորվեց ըմբշամարտի գորգը: Սահեց: Սահեց: Ուհո՛ւ: Ուհո՛ւ: Ուհո՛ւ: Շատ բան կորցրեց, թե՞ գիջեց:

Կովկասը հո կորցնում ու կորցնում է: Այնտեղ էլ՝ Միջին Ասիան: Նավթը: Գազը: Բամբակը: Ազդեցություն: Ճնշում: Ու սահե՛ց գորգը, սորա՛ց: Բեմականացված պատերազմներ: Խորհրդավոր դարձած ինստիտուտներում: Գեղեցիկ կահավորված, գողտրիկ սենյակներում: Մի բաժակ թեյի հետ: Մի գավաթ սուրճի հետ: Ու հիմա ո՞նց ես ուզում, պո՞չ էլ չխաղացնի: Գլուխը կտրած աքլորն էլ է որոշ ժամանակ թպրտում: Արյուն: Արնաներկ բակ: Արնափետուր կացին: Նրա հայտարարությունները՝ արյնահեղության հետ կապված: Սրա հակադարձ հայտարարությունները ևս՝ արյունահեղության հետ կապված: Արյունը՝ քոնը: Արյունն արյուն է պահանջում: Կովկաս: Նախ՝ Բալկանները: Ապա և Կովկասը: Մինչև Բալկաններ, Քուվեյթ և ապա միայն՝ Կովկաս: Մինչև Քուվեյթը՝ Մերձբալթիկա, և հետո՝ Կովկաս: Մինչև Մերձբալթիկա՝ Արևելյան Եվրոպա և հետո՝ Կովկաս: Առևտուր: Մեծ տերության առաջնորդը հանդիպում է մյուս մեծ տերության առաջնորդին: Ժպիտ՝ հեռուստաէկրանի առաջ: Ո՞ւմ ժպիտն է ավելի գրավիչ: Սպասի՛ր: Հիմա ծիտը կթռնի: Ըհը՛, թռա՛վ: Հիմա՝ գործ: Կովկասի

հարցը ժամանակավորապես թողնենք մի կողմ: Թողնենք: Հա՛: Թողնենք: Ձեռքը՝ ձեռքին: Սարը՝ սարին: Պաչ-պառշտի: Ցրվեցին: Չոր շյուղ: Մի ճկկոցով՝ փշրված հույս: Մեծ խարույկը վառված է: Մեծ համբույր՝ մի պստիկ, չոր շյուղից: Խարույկ: Արյուն: Պատերազմ: Կուզես և բեմականացված անվանիր, բայց պատերազմը պատերազմ է: Գլխակապով զինվոր: Ռեմբո է: Իր խելքով: Ուսին՝ ավտոմատ: Գլխին՝ գլխակապ: Մի վրացին հաղթում է տասը հակառակորդի: Գիորգի Սաակաձեն Ակակի Խորավայի կատարմամբ: Թուրն առավ ձեռքը: Հինգ-վեց ծիծաղելի թաթար: Թրի մի հարվածով: Այս հավատով մեծացած: Ամերիկյան «բոյեվիկներից»՝ խելքը կորցրած: Խաղում է: Ռեմբոն է: Առաջին անգամ տեսաերիզով տեսավ այս ֆիլմը: Տեսաերիզն էլ առաջին անգամ այն ժամանակ տեսավ: Ծղնեթում: Ընկերոջ ամառանոցում: Ա՜ռ, ի՞նչ ղայիմ տիպ է: Հըլը մի նայի՛ր, տո՛, տե՛ս, հիմա ինչ կանի: Ա՜ռ... ես քո՛ւ... Որպես Ռեմբո՝ բեմականացված պատերազմ գնացած: Հետո, մոտավորապես երկու ամսում, պարսկական գորգեր գնող ֆիրմայի և չարտերային չվերթով

Դուբայ մեկնել ցանկացողների համար գովազդային հայտարարությունների արանքում որպես պատերազմում զոհված հիշատակվող: Ուրիշների հետ նա էլ: Ձե, ձե, իա, ձե, շվիլի, շվիլի, ձե, ուրի, իա, անի, ձե, շվիլի: 20 տարեկա՞ն տղա: Քսանմեկի մեջ: Կյանքը խաղ էր կարծում: Չէր պատկերացնում, որ իրեն գնդակ կկպչեր: Այսպես էլ է լինում. մինչև այնտեղ գնալդ մտածում ես, իսկ երբ արդեն տեղ ես հասնում, չես պատկերացնում, որ քեզ էլ կարող է գնդակ կպչել: Գետ: Աջ ու ահյակ՝ խրամատներ: Մարտիկների մոտ: Ծուո՜՛ւ... Ձայնը լսվեց: Կտրվեց: Ծուո՛ւ... Նորից եկավ ձայնը: Կորավ: Մարտիկները զվարճանում են: Ծիծաղում եմ: Հիմա նրանց հանգստյան ժամերն են: Ծիծաղում եմ: Ծո՛ւռ: Ծվվաց: Կորավ: Ժամանակ առ ժամանակ լսվում է: Գնդակը ծվվում է, այն էլ ասես նրա համար, որ իմ այստեղ լինելն արդարացնի: Գիր: Գրող: Գրողը պիտի գրի: Այն մի ծվվոցով սպանի: Ահա՛, գրեցի: Սպանեցին, քանզի ամենասարսափելին հենց այդ մի ծուո՛ւ-ն է: Նշանառու կրակված այն մի գնդակը: Եվ ահա սպանեցին: Քսան տարեկանին: Քսանմեկի մեջ: Սրանով էլ

չբավարարվեցին: Պարսկական գորգեր գնող ֆիրմայի գովազդային և չարտերային չվերթով Դուբայ մեկնել ցանկացողների գովազդային հայտարարությունների արանքում տեղավորեցին: Մյուսների հետ միասին նրան էլ: Կյանքի արժեզրկում: Սահմռկեցուցիչ է: Անպատկառ անտարբերությամբ: Սառնասրտորեն ձեռքերը լվացած: Իշխանությունների զարմանքը՝ ինչո՞ւ ենք այսպես տարանջատված: Միանա՛նք: Միավորվե՛նք: Հեռուստատեսության առաջին ալիք: Կառավարական ալիք: Հաղորդավարուհին՝ խիստ լացակումած ձայնով՝ ձե, ձե, իա, ձե, շվիլի, շվիլի, ձե, ուրի, իա, անի, ձե, շվիլի: Եվ հետո՝ չարտերային չվերթով Դուբայ մեկնողներին... Ովքեր ցանկանում են մեկնել... Արի՛ գնանք, ա՛յ տղա, գնանք՝ նավթավառներ բերենք: Էժան նավթավառներ են, ա՛յ տղա: Գնանք: Ասում են՝ օգուտը մեկին մեկ է... Հը՞, տո՛ մունդռիկ: Չես գալի՞ս: Տո՛, ոտքերիս, թե չես գալիս: Գալիս ե՞ս: Դե՛, գնացինք: Աբա՛: Դուբա՛յ: Դուբայ: Դուբայ: Տա ռա՛ ռա՛ ռի՛ ռա, ռի ռի ռի ռա՝ Դուբայի ձերմակին, Դուբայի հրաշքին, ով քեզ սիրեց, նրա հոգուն էլ՝ տա ռա՛ ռա՛: Հայրենիքը մարդու

համար ինչ-որ շատ մտերիմ բան է նշանակում: Ասես անձամբ ես ճանաչում: Յուրային է: Միշտ քո սրտի մեջ է: Միշտ կարող ես ինչ-որ տեղ հանդիպել նրան: Մետրոյում: Ավտոբուսում: Փողոցում: Ռեստորանում: Եթե այսօր էլ չհանդիպես, փույթ չէ, քանզի գիտես, որ վաղը, մեկ է, պիտի հանդիպի քեզ: Խորհրդավոր դարձած ինստիտուտներում, գեղեցիկ կահավորված, գողտրիկ սենյակներում, մի բաժակ թեյի հետ, մի գավաթ սուրճի հետ: Կանխամտածված խարդավանք: Այս զգացողությունը պիտի օտարացնի քեզ: Կրկին՝ վրացու ձեռքով: Այլ կերպ չի լինի: Քաղաքացիական պատերազմ: Թբիլիսիի պատերազմ: Ինչպես կուզես անվանիր, բայց ծուղակ է: Դու կրակել ես յուրայինիդ վրա: Եթե անգամ չես կրակել, ինչ-որ մեկին հո զորակցե՞լ ես: Նշանակում է՝ կրակել ես: Հետևե՞լ ես, թե ոնց է գնդակը սուրում: Հետևել ես, ուրեմն վարձդ էլ կորել է: Ուրեմն արդեն դու ես մեղավոր ամեն ինչում: Մեղքը շատ թե քիչ բոլորի վրա է ընկնում: Մեղքին մեղք է հետևում: Մեղքը մեղքով է սպանում սովը: Մեղքը լցվում է լուսնի նման: Լիալուսինը՝ ճակատը գնդակահար, մեռած

գիշերվա մեջ: Այս ու այնտեղ՝ ձյուն: Հեռու-հեռավո՛ր, անդադա՛ր, անլռելի՛ ռռնոց ու վայո՛ւն... Ուո՛ւ՛՛ւ... Քրքջացող պառավի բաց բերանի նման՝ գիշերը լուսացրած քաղաքն է վայում: Ուո՛՛ւու... Միայնության անկատար վարձքն է: Ո՛ւո՛ւ ո՛ւ... Չարագուշակ նախազգացման անխոս հայա՛ցքն է: Ուո՛ւ՛ուո՛ւ՛... Լքված բարիկադներից տարածվող համաձարակի շո՛ւնչն է: Ո՛ւո՛ւ՛... Այս որբացած սարե՛րն են, որբացած դաշտե՛րը, որբացած ծովա՛փը, որբացած քաղաքներն ու գյուղե՛րը, ուր ճակատը գնդակահար լուսի՛նն է հառնում գիշերվա՝ մեջ մեռած: Ո՛ւո՛ւ՛... Իմ տղայի սո՛վն է վայում, իմ մեղկությո՛ւնն է, իմ այս նվաստացո՛ւմն է, իմ շվար ու մոլոր վիճա՛կն է, բյուր կասկածներով լի օտարացո՛ւմս է միլիոնուկեսանոց քաղաքից, մարդկանց ներամփոփվածությո՛ւնն է ու միմյանցից հեռացո՛ւմը, ձեռքիս քսված եղբորս՝ արյո՛ւնն է՝ մերձավորի՛ս, միս ու արյա՛նս, հարազատի՛ս, իմ արժանապատվությո՛ւնն է ու հպարտությո՛ւնը, որոնց կորցրի իմ անզորությունից ու հիմարությունից: Լքեցի՛: Լքեցի՛: Սալահատակին անօգնական ընկած մա՛րդ լքեցի: Վախո՛, դու էիր այդ

մարդը, եղբա՛յրս: Հա՛, դու կլինեիր: Բատինկաներն եմ հիշում: Ճիշտ այն բատինկաներն էին, որ կապիչներով հանգուցեցիր ու պատից կախեցիր: Հա՛, դրանք էին: Ես հիմա համոզված եմ, որ դո՛ւ էիր սալահատակին: Գիտեմ, որ դու Հոլանդիայում, Գերմանիայում կամ Բելգիայում դիմացող մարդ չէիր, չէիր կարող լինել: Այստեղ ընկար, չէ՞, եղբայրս: Հա՛, ընկար: Իսկ ես... Ապուշ կտրած անցա: Քո կողքից: Ինչո՞ւ այդպես անցա: Կողքանց: Պա՛րկ էի տանում շուկա: Ոտքերս խոնավությամբ էին լեցուն: Անցա քո կողքից: Հետո շուռ եկա: Բայց դու այնտեղ չէիր: Այնտեղ Քրիստոս Աստվածն էր, Վախո՛: Նա, ում հիշում եմ տատիս գուրգուրած սրբապատկերից: Ահա այդպիսի դեմքով տղամարդ էր նստած սալահատակին ու նայում էր ջրափոսին: Տխուր, Վախո՛, տխուր էր նստած: Զգացի, չգիտես ինչու զգացի, որ նրա սրտի թաղանթը բարակ է: Տխուր: Տխուր: Փոսին էր հայացքը հառած: Իսկ դու, Վախո՛, դու ո՞ւր չքվեցիր, ինչպե՞ս անհետացար այդպես հանկարծակի: Դո՞ւ էլ ե՞ս իմ մեջոկում: Գուցե: Ո՛վ իմանա: Ծանրացել է շատ: Ծանր քարի պես տեղավորվել շալակիս և իր

մկանուտ բռունցքով ամբողջ ուժով սեղմում է ծոծրակս: Հա՛, ծանր է, բայց հիմա իմ վրա մի թեթևություն էլ եկավ, եղբա՛յրս: Երբ ես շատ հոգնելուց գրեթե շնչահե՛ղձ եմ լինում, թաքուն մտնում եմ տղայիս սենյակ: Մորս՝ աղերի կուտակումից կոկված ձեռքերով կարած ականջաբարձն եմ մոտեցնում քթիս, հոտոտում եմ, հոտը ներս քաշում, ու շունչս տեղն է գալիս, շնչառությունս՝ բացվում: Հետո պառկում եմ: Ականջաբարձը դնում եմ գլխի տակ: Մի ձեռքս ականջաբարձի տակով եմ անցկացնում, մյուսը՝ վերևից: Այտիս էլ եմ քսում, որ իմ տղային զգամ: Ու թվում է, թե սենյակում տարածվում է մորս արդուկած խոնավ սպիտակեղենի փափկանուշ բուրմունքը: Մինչև քնելս մի անգամ էլ կշնչեմ տղայիս գլուխը դրած ականջաբարձը, հեռուհեռավոր հիշողությունը կբացի շուրթերս, իսկ հետո չգիտեմ, հետո ոչինչ չգիտեմ, հետո տեսնենք, եղբա՛յրս:

օտար ◆◆◆ գիր

Իրակլի Սամսոնաձե
(1961)

Արդի վրաց գրականության երևելի դեմքերից է՝ արձակագիր, դրամատուրգ. Ծնվել է 1961 թվականին. 1983-ին ավարտել է Թբիլիսիի պետական համալսարանի ժուռնալիստիկայի ֆակուլտետը: Առաջին պիեսը տպագրվել է 1985-ին «Խելով-նեբա» (Արվեստ) ամսագրում: 1992-1996թթ. եղել է «Դրամա-տուրգիա» ալմանախի գլխավոր խմբագրի տեղակալը, իսկ 1996-1998թթ.՝ նույն ալմանախի գլխավոր խմբագիրը:
Նրա շուրջ 15 պիեսները բեմադրվել են Վրաստանի տարբեր թատրոններում. Իրակլի Սամսոնաձեն գրական ու թատերական բազմաթիվ մրցանակների դափնեկիր է, այդ թվում՝ Պետական, «Սաբա», «Կվալի»... Վերջինը նրան շնորհվել է 2002 թվականին «Ականջաբարձ» վեպի համար:

9 789939 516646